

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԻՐԱԲՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 40094/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2 հոկտեմբերի, 2012 թվական

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է

02/01/2013

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44–րդ հոդվածի 2–րդ կետով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*
Egbert Myjer,
Corneliu Bîrsan,
Alvina Gyulumyan,
Ján Šikuta,
Luis López Guerra,
Kristina Pardalos, *դատավորներ,*
և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի սեպտեմբերի 11-ին դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2005 թվականի մայիսի 11-ին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի քաղաքացի պրն. Գրիշա Վիրաբյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 40094/05 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին Լոնդոնում գործող Մարդու իրավունքների քրդական ծրագրի (KHRP) փաստաբաններ պրն. Մ.Մյուլլերը, պրն. Թ. Օթթին, պրն. Ք. Յիլդիզը, Երևանում գործող փաստաբան պրն. Տ. Տեր–Եսայանը, և գործող փաստաբան պրն. Ա Ղազարյանը: ՀՀ Կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդում էր, մասնավորապես, որ նա ոստիկանությունում անազատության մեջ գտնվելու ընթացքում խոշտանգումների է ենթարկվել, և խոշտանգումների վերաբերյալ իր պնդումների առնչությամբ որևէ արդյունավետ հետաքննություն չի իրականացվել, որ իր դեմ հարուցված քրեական վարույթի կարճման հիմքերով խախտվել է անմեղության կանխավարկածը և որ իր նկատմամբ վատ վերաբերմունքի պատճառը իր քաղաքական հայացքներն են եղել:

4. 2008 թվականի սեպտեմբերի 10–ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Որոշվեց նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի, 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

Ի. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1958 թվականին և ապրում է Հայաստանի Արարատի մարզի Շահումյան գյուղում:

Ա. Գործի նախապատմությունը

6. Դիմումատուն տվյալ ժամանակահատվածում Հայաստանում հիմնական ընդդիմադիր կուսակցություններից մեկի՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցության (ՀԺԿ) անդամ էր:

7. 2003 թվականի փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Դիմումատուն ընտրություններում հիմնական ընդդիմադիր թեկնածուի՝ ՀԺԿ ներկայացնող թեկնածուի վստահված անձ էր: Ընտրություններից հետո, որոնցում հաղթել էր գործող Նախագահը, ընտրությունները դիտարկող միջազգային դիտորդական առաքելությունը եզրակացրեց, որ ընտրությունների ամբողջական գործընթացը չի համապատասխանել միջազգային չափանիշներին: Արդյունքում, կազմակերպվեցին զանգվածային բողոքի ակցիաներ: ՀԺԿ թեկնածուն ընտրությունների արդյունքները բողոքարկեց Սահմանադրական դատարանում, որը 2003 թվականի ապրիլի 16–ին առաջարկեց, որ Հայաստանում մեկ տարվա ընթացքում անցկացվի վերընտրված Նախագահի վստահության հանրաքվե:

8. Երբ 2004 թվականի ապրիլ ամսին լրացավ մեկ տարվա վերջնաժամկետը, վերընտրված Նախագահի օրինականությունը վիճարկելու համար ընդդիմությունը քարոզարշավ ծավալեց և սկսեց երկրի ողջ տարածքով հանրահավաքներ անցկացնել իր պահանջները ներկայացնելու համար: 2004 թվականի մարտ և ապրիլ ամիսներին բազմաթիվ հանրահավաքներ անցկացվեցին, որոնց փաստորեն մասնակցում էր դիմումատուն: Նա պնդում էր, որ իշխանությունները պատասխան գործողություններ էին ձեռնարկել ընդդիմության համակիրների, այդ թվում՝ իր նկատմամբ կիրառվող ձերբակալությունների և ահաբեկումների միջոցով: Ըստ նրա, այդ ժամանակահատվածում իրեն ոստիկանական բաժանմունք տանելու մտադրությամբ ոստիկաններն ամեն օր այցելում էին Շահումյան գյուղում գտնվող իր տուն, որտեղ բնակվում էր իր մայրը: Նա ստիպված էր տնից հեռու մնալ և թաքնվել Երևանում:

9. Ընդդիմադիր կուսակցությունների կողմից 2004 թվականի ապրիլի 12–ին հանրահավաք կազմակերպվեց Երևանի Ազատության հրապարակում, որից հետո երթ կազմակերպվեց դեպի նախագահական նստավայր: Հանրահավաքին մասնակցում էր մոտ 10,000–ից մինչև 15,000 մարդ, այդ թվում և դիմումատուն: Արդյունքում, ոստիկանությունը 2004 թվականի ապրիլի 13–ին մոտավորապես գիշերվա ժամը 2–ին, վերջապես կարողացավ ցրել ամբոխը:

Բ. Դիմումատուի ձերբակալությունը և նրա նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքը

1. 2004 թվականի ապրիլի 23–ին դիմումատուի ձերբակալության փաստական հանգամանքները

10. Ըստ ոստիկանության նյութերի, 2004 թվականի ապրիլի 23–ին ժամը 5:05–ին Արտաշատի ոստիկանության բաժնում անանուն հեռախոսազանգ է ստացվում, որով պնդվում է, որ 2004 թվականի ապրիլի 12–ի հանրահավաքին մասնակցելու ժամանակ դիմումատուն հրազեն է ունեցել, որը դեռ նրա մոտ է: Երկու ոստիկաններին՝ Ռ. Ս.–ին և Ա.Ս.–ին կարգադրվեց դիմումատուին բերել ոստիկանության բաժին:

11. Դիմումատուին Արտաշատի ոստիկանության բաժին բերման ենթարկելու արձանագրության համաձայն, դիմումատուին տարել են այնտեղ 2004 թվականի ապրիլի 23–ին ժամը 17:40–ին՝ հրազեն կրելու և ոստիկաններին ուղղված հայհոյանքներ ասելու և նրանց օրինական հրահանգներին չենթարկվելու կասկածանքով: Նշվել է, որ դիմումատուն հրաժարվել է ստորագրել արձանագրությունը:

12. Ժամը 17:50–ին դիմումատուն ենթարկվել է խուզարկության ձերբակալությունն իրականացնող ոստիկան Ռ.Ս.–ի և մեկ այլ ոստիկան՝ Ա.Մ.–ի կողմից, երկու վկաների ներկայությամբ, ինչի ժամանակ գտնվել էն բջջային հեռախոս և կրակայրիչ: Դիմումատուի խուզարկության արձանագրությամբ նույնպես նշվում է, որ դիմումատուն հրաժարվել է ստորագրել այն:

13. Ձերբակալություն իրականացնող ոստիկաններ Ռ.Ս.–ն և Ա.Ս.–ն երկուսն էլ ոստիկանապետին զեկուցել են, որ դիմումատուն իրենց հայհոյանքներ է ուղղել ձերբակալության ժամանակ: Մասնավորապես, դիմումատուն ասել է. «Դե զզվեցրի՛ք: Ի՞նչ եք ուզում ինձանից: Ինչու՞ եք եկել այստեղ: Դուք ո՞վ եք, որ ինձ տանեք ոստիկանություն:» Նրանք այնուհետև զեկուցել են, որ նա աղմուկ է բարձրացրել և չի ենթարկվել նրանց օրինական հրահանգներին, սակայն նրանք ինչ–որ կերպ կարողացել են նրան նստեցնել ոստիկանական մեքենա: Ոստիկանական բաժանմունք գնալու ճանապարհին նա շարունակել է հայհոյանքներ օգտագործել, ասելով՝ որ նրանց բոլորին աշխատանքից հեռացնել կտա և բոլորին պատասխանատվության կենթարկի դրա համար:

14. Դիմումատուի պնդմամբ դեպքերի այս տարբերակն է իրականում եղել. նա պնդում է, որ ոստիկաններ Ռ.Ս.–ն և Ա.Ս.–ն իրեն կանգնեցրել են իր տան մոտ ժամը 14:00–ի և 15:00–ի միջակայքում: Նրանք խնդրել են հետևել իրենց դեպի ոստիկանության բաժին, բացատրելով, որ ոստիկանապետը ցանկանում է խոսել իր հետ: Նա համաձայնել է և նստել է ոստիկանական մեքենան առանց ոչնչ դիմադրության: Ոստիկանությունում նրան տարել են մեկ այլ ոստիկանի՝ Հ.Մ.–ի սենյակ, որը նրան հարցեր է տվել ցույցերին իր մասնակցության և ընդդիմության ակտիվիստ Գ.Ա.–ի վերաբերյալ, որը ձերբակալվել էր մի քանի օր առաջ: Դրանից հետո նրան տարել են ոստիկանապետի տեղակալ Գ.–ի սենյակ, որն ասել է, որ ինքը հայհոյանքներ է ասել, և կարգադրել է, որ վարչական գործ կազմվի: Այնուհետև նրան տարել են մեկ այլ աշխատասենյակ, որտեղ ոստիկան Ա.Մ.–ն սկսել է կազմել վարչական գործը: Նա երբեք խուզարկության չի ենթարկվել:

15. Ոստիկան Ա.Մ.-ի կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի մեջ նշվել է, որ դիմումատուն չի ենթարկվել ոստիկանների օրինական հրահանգներին և հայհոյանքներ ուղղել նրանց, ինչը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն, համարվում է իրավախախտում: Նա այնուհետև արձանագրություն է կազմել բացատրություն վերցնելու վերաբերյալ, որտեղ նշվում է, որ դիմումատուն հրաժարվել է ցուցմունք տալ: Երկու արձանագրություններում էլ նշված է, որ դիմումատուն հրաժարվել է ստորագրել դրանք:

16. Դիմումատուն պնդում է, որ ոստիկան Ա.Մ.-ն վարչական գործի նյութերը պատրաստելուց հետո ասել է, որ այդ նյութերը ներկայացվելու են դատարան և լավ կլինի, որ ինչ-որ մեկը միջամտի, հակառակ դեպքում դիմումատուին սպառնում է 15 օրվա կալանք: Այնուհետև նրանք երկուսով կարճ խոսակցություն են ունեցել, որի ընթացքում դիմումատուն, ի թիվս այլոց, ասել է, որ իրեն ցույցերում իր ունեցած մասնակցության համար բերման են ենթարկել ոստիկանություն, և որ նման ձերբակալություններն իրականացվում են Հայաստանի Նախագահի կարգադրությամբ: Այնուհետև ոստիկան Ա.Մ.-ն դուրս է եկել աշխատասենյակից:

17. Դիմումատուն այնուհետև պնդում է, որ ոստիկան Ա.Մ.—ի՝ աշխատասենյակից դուրս գալուց հետո մի քանի րոպե անց ներս է մտել ոստիկան Հ.Մ.-ն և սկսել հայհոյել նրան: Այնուհետև ոստիկան Հ.Մ.-ն մոտեցել է նրան և հարվածել իր կրծքավանդակի ձախ մասին ու խփել դեմքին: Դիմումատուն խլել է բջջային հեռախոսի լիցքավորման սարքը, որը եղել է գրասեղանի վրա, և հարվածել է ոստիկան Հ.Մ.-ին: Կռվի ձայները լսելով, երեք ուրիշ ոստիկաններ մտել են աշխատասենյակ և նրան տարել մեկ այլ սենյակ: Մոտ տասը րոպե անց ոստիկան Հ.Մ.-ն և մեկ այլ ոստիկան՝ Ա.Ա.-ն, մտել են այդ սենյակ և սկսել դաժանորեն ծեծի ենթարկել նրան: Երբ նրանք դուրս են եկել սենյակից, ներս է մտել մեկ ուրիշ ոստիկան՝ Ա.Կ.-ն, և սկսել մետաղյա իրով խփել նրան ամորձիների շրջանում: Հետո նրան ձեռնաշղթաներ են հագցրել, և ոստիկան Ա.Կ.-ն շարունակել է հարվածել և խփել նրան գոտկատեղից ներքև, ինչից հետո նա գիտակցությունը կորցրել է:

18. Պարզվում է, որ ինչ-որ պահի շտապ օգնություն է կանչվել Արտաշատի հիվանդանոցից՝ դիմումատուի հարբածության վիճակի ստուգման համար: Ըստ բժշկական զննության արձանագրության, դիմումատուն բժշկական զննության է ենթարկվել շտապօգնության բժիշկ Ա.Գ.-ի կողմից ժամը 19:00-ին, և ստուգման արդյունքները ցույց են տվել, որ եղել են հարբածության նշաններ: Դիմումատուն պնդում է, որ իրականում իր հարբածությունը ստուգելու համար շտապօգնության բժշկին կանչել են ժամը 15:00-ին (տե՛ս նաև ներքոնշյալ § 66): Ոստիկան Ա.Հ.-ն, որն օգնում էր զննության ժամանակ, չորս անգամ հարվածել է իր դեմքին և մեկ անգամ էլ գոտկատեղից ներքև:

19. Չպարզված ժամին ձերբակալությունն իրականացնող ոստիկան Ռ.Ս.-ն ոստիկանապետին է զեկուցել հետևյալը.

> «Վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը պատրաստելու ժամանակ, կապված [դիմումատուի] հետ, որը ոստիկանության բաժին էր բերվել 2004 թվականի ապրիլի 23-ին ժամը 17:05-ին անանուն քաղաքացուց ստացված տեղեկությունների հիման վրա, [դիումատուն] շատ ցինիկ, անվայել և ինքնավստահ վարք է դրսևորել, հայհոյական խոսքեր է ասել ոստիկաններին և

հրաժարվել է ստորագրել պատրաստված փաստաթղթերը: Իսկ երբ [դիմումատուն] պարզել է, որ իր վերաբերյալ պատրաստված նյութերը ներկայացվելու են դատարանի քննությանը, նա գրասեղանի վրայից վերցրել է բջջային հեռախոսի լիցքավորման սարքը և դրանով հարվածել քրեական հետախուզության բաժանմունքի պետի [Հ.Մ.] դեմքին, հայհոյել է նրան և ասել, որ այդ նա է «իր գլխին սարքել, ինչից հետո [դիմումատուն] փորձել է նրան երկրորդ անգամ խփել սեղանի վրա եղած հեռախոսով, սակայն դա կանխվեց իմ և [ոստիկաններ Ա.Ա.–ի և Ա.Մ.–ի] կողմից»:

20. Պարզվում է, որ ոստիկան Ա.Ա.–ն նույնպես նման զեկուցագիր է ներկայացրել: Այնուհետև պարզվում է, որ ոստիկան Հ.Մ.–ն տեղափոխվել է հիվանդանոց:

21. Չպաչզված ժամին Արարատի մարզի դատախազությունից քննիչ Մ.–ն որոշել է հարուցել թիվ 27203404 քրեական վարույթը Քրեական օրենսգրքի 316–րդ հոդվածի 1–ին կետի այն հիմքով, որ դիմումատուն ուժ է գործադրել իշխանության ներկայացուցչի նկատմամբ՝ ոստիկան Հ.Մ.–ին հարվածելով և դրանով կյանքի համար ոչ վտանգավոր վնաս պատճառելով առողջությանը: Այս որոշումը կայացվել է Արտաշատի ոստիկանանության բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա՝ պարունակելով դեպքերի միևնույն շարադրանքը, որը պարունակվել է ոստիականության վերը նշված զեկույցներում:

22. Այնուհետև քննիչ Մ.–ն ցուցմունքներ է վերցրել ոստիկանության աշխատակից Ա.Մ.–ից և ձերբակալությունն իրականացնող ոստիկաններ Ռ.Ս.–ից և Ա.Ս.–ից:

23. Ոստիկանության աշխատակից Ա.Մ.–ն նշել է, որ երբ դիմումատուն հրաժարվել է ցուցմունք տալ իր վարչական գործի առնչությամբ, աշխատասենյակում իրենից բացի ներկա են եղել ոստիկանության ևս երեք աշխատակիցներ, մասնավորապես՝ Ռ.Ս.–ն, Ա.Ա.–ն և Հ.Մ–ն: Տեսնելով, որ դիմումատուն հրաժարվում է ցուցմունք տալ, ոստիկան Հ.Մ.–ն նրան ասել է, որ ստիպված կլինեն նրան տանել դատարան: Դա լսելով, դիմումատուն բացականչել է. «Այդ դու՛ ես սարքել ամեն ինչ», գրասեղանի վրայից վերցրել է բջջային հեռախոսի լիցքավորման սարքը և հարվածել ոոստիկանության աշխատակից Հ.Մ.–ի դեմքին: Դրանից անմիջապես հետո դիմումատուն վերցրել է դեպի գրասեղանի վրա դրված հեռախոսը, սակայն ոստիկանության աշխատակից Ա.Ա.–ն կարողացել է նրանից խլել հեռախոսը: Այնուհետև դիմումատուն շարժվել է ոստիկանության աշխաատակից Հ.Մ.–ի ուղղությամբ, նրանք կառչել են միմյանցից և իրար քաշքշելու ժամանակ ընկել գրասեղանի կողքին դրված աթոռին, որը ջարդուփշուր է եղել: Դիմումատուն պառկել էր հատակին, իսկ ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն պառկել էր նրա վրա: Ա.Մ.–ն՝ ոստիկանության աշխատակիցներ Ա.Ա.–ի և Ռ.Ս–ի հետ միասին, անմիջապես բարձրացրել են նրանց: Այնուհետև դիմումատուին տարել են մեկ այլ աշխատասենյակ, իսկ ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին՝ տարել հիվանդանոց: Քննիչի հարցին ի պատասխան ոստիկանության աշխատակից Ա.Մ.–ն նշել է, որ ոստիկանության աշխատակիցնրը շատ քաղաքավարի և կոռեկտ են եղել դիմումատուի նկատմամբ: Նա տեղյակ չի եղել դիմումատուի քաղաքական պատկանելությունից և միակ բանը, որ նրանից իմացել է՝ այն է, որ նա ՀԺԿ–ի թեկնածուի ընկերն է եղել: Ի պատասխան քննիչի երկրորդ հարցին, ոստիկանության աշխատակից Ա.Մ.–ն նշել է, որ ոստիկանության աշխատակիցներից ոչ մեկը չի հարվածել կամ ծեծել դիմումատուին ոստիկանության բաժնում դեպքից առաջ կամ հետո:

24. Ձերբակալությունն իրականացնող ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն նույն տիպի ցուցմունք է ներկայացրել: Ի պատասխաան քննիչի հարցին այն մասին, թե

արդյոք ոստիկանության աշխատակիցները հարվածել կամ ծեծել են դիմումատուին ոստիկանության բաժնում կամ մինչև նրան այնտեղ տանելը, ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն նշել է, որ ոստիկանության աշխատակիցներից ոչ մեկը չի հարվածել կամ ծեծել դիմումատուին: Ընդհակառակը, հաշվի առնելով նրա պահվածքը և հայտարարությունները իշխանությունը փոխելու վերբերյալ, ոստիկանության աշխատակիցները շատ զգույշ և կոռեկտ են եղել նրա նկատմամբ, որպեսզի խուսափեն ցանկացած անցանկալի խոսակցություններից: Ի պատասխան քննիչի երկրորդ հարցին, ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն նշել է, որ ինքը տեղեկացված չի եղել դիմումատուի քաղաքական պատկանելության վերաբերյալ և միակ բանը, որ նրանից իմացել է՝ այն է, որ նա ՀԺԿ–ի թեկնածուի ընկերն է եղել:

25. Ձերբկալությունն իրականացնող ոստիկանության աշխատակից Ա.Ս.–ն նշել է, ի թիվս այլոց, որ նա դեպքի ժամանակ ներկա չի եղել: Նա այնուհետև նշել է, որ դիմումատուին ոստիկանության բաժին բերելու պատճառը նա պարզել է միայն նրան այնտեղ բերելուց հետո: Քննիչի կողմից հարցեր չեն տրվել:

26. Քննիչ Մ.–ն իրականացրել է դեպքի վայրի զննություն և կազմել համապատասխան արձանագրություն, որը պարունակում է կոտրված աթոռի լուսանկարները:

27. Ժամը 21:45–ին քննիչ Մ.–ն կազմել է դիմումատուի ձերբակալության արձանագրությունը, որի մեջ նշվում է, որ դիմումատուն այդ ժամին ձերբակալվել է Արտաշատի ոստիկանության բաժնում ժամը 18:30–ին ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ի նկատմամբ կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կասկածանքով:

28. Ժամը 22:00–ին քննիչ Մ.–ն հարցաքննել է դիմումատուին որպես կասկածյալ: Ըստ կասկածյալի հարցաքննության արձանագրության, դիմումատուն նշել է, որ նա ի վիճակի չէ վկայություն տալ այդ պահին և ցուցմունքներ կտա հաջորդ առավոտյան: Արձանագրությունից պարզ է դառնում, որ դիմումատուի՝ պետության կողմից նշանակված փաստաբանը ներկա է եղել այս հարցաքննության ժամանակ:

29. Ըստ ոստիկանության մեկ այլ աշխատակցի՝ Օ.Բ.–ի կազմած արձանագրության, չհստակեցված ժամին դիմումատուն վատ է զգացել և խնդրել, որ բժիշկ կանչեն: Կանչվել էր շտապ բուժօգնություն: Շտապօգնության բժիշկ Ա.Գ.–ն՝ լսելով դիմումատուի գանգատները, խորհուրդ է տվել հետազոտություն անցակցնել ստացիոնար պայմաններում, քանի որ նրա գանգատների հետ կապված հետազոտությունը կարող էր իրականացվել միայն հատուկ սարքավորումներով: Պարզվում է, որ այցը տեղի է ունեցել ժամը 23:20: Այնուհետև պարզվում է, որ դիմումատուն տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց ոստիկանության մի քանի աշխատակիցների կողմից, սակայն նրան թույլ չեն տվել մնալ, չնայած բժշկի խորհուրդներին: Այդ գիշերը դիմումատուն անցկացրել է ոստիկանության բաժնի խցում:

2. Դիմումատուի տեղափոխումը հիվանդանոց և նրա վիրահատությունը 2004 թվականի ապրիլի 24–ին

30. 2004 թվականի ապրիլի 24–ին ժամը 11:20–ին դիմումատուն ոստիկանության բաժնից տարվել է Արտաշատի հիվանդանոց, որտեղ նա ենթարկվել է բժշկական հետազոտության և տարվել վիրաբուժական բաժանմունք:

31. Ըստ 2004 թվականի ապրիլի 24–ին վիրաբույժի կողմից տրված տեղեկանքի համաձայն, դիմումատուն բերվել է վիրաբուժական բաժանմունք հետևյալ նախնական ախտորոշմամբ. «Ամորձապարկի հետտրավմատիկ հեմատոմա, ձախ ամորձիի հեմատոցելե, պատռվածք»: Դիմումատուի ամորձապարկը վիրահատվել է: պարզվել է, որ ձախ ամորձին պատռված է և ջարդված՝ հյուսվածքի քայքայմամբ և մեծ քանակով արյան կուտակմամբ (մոտ 400 մգ): Դիմումատուի ձախ ամորձին հեռացվել է: Վիրահատությունից հետո խորհուրդ է տրվել ստացիոնար բուժում: Տեղեկանքում այնուհետև նշված է, որ հետվիրահատական բուժման ընթացքում դիմումատուն ի վիճակի չի եղել ցուցմունք տալ կամ պատասխանել հարցերի:

32. Պարզվում է, որ նույն ամսաթվին հիվանդանոցում անցկացվել է դիմումատուի կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն:

33. Այդ օրն ավելի ուշ քննիչ Մ.–ն որոշել է կալանքից ազատ արձակել դիմումատուին: Քննիչի որոշման մեջ նկարագրվեն են դեպքի հանգամանքներն այնպես, ինչպես ներկայացված են ոստիականության վերը նշված նյութերում, և ավելացվել է, որ «[դիմումատուն] նույնպես վնասվածք է ստացել դեպքի ժամանակ» և տեղափոխվել հիվանդանոց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուին անհրաժեշտ էր ստացիոնար բուժում, անհրաժեշտություն չկար նրան պահել կալանքի տակ:

34. Քննիչ Մ.–ն նաև կարգադրել է, որ թե՛ դիմումատուն, և թե՛ ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն ենթարկվեն դատաբժշկական փորձաքննության: Այդ որոշման մեջ նաև նշվում էր, ի թիվս այլոց, որ հետաքննությամբ պարզվել է, որ դիմումատուն՝ որին տարել են ոստիկանության բաժին հրազեն կրելու կասկածանքով, վնասվածքներ է պատճառել ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին՝ նրան բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածելու միջոցով: Դեպքի հետևանքով դիմումատուն նույնպես վնասվածքներ է ստացել: Դիմումատուի վնասվածքների առնչությամբ փորձագետից հայցվել են հետևյալ հարցերի պատասխանները.

> «– Ի՞նչ կարգի մարմնական վնասվածքներ կան [դիմումատուի] մարմնի վրա[: Մ]անրամասն ներկայացրեք դրանց բնույթը, տեղը, պատճառման եղանակը, վաղեմությունը և ծանրության աստիճանը:
>
> – [Դիմումատուի] ամորձիի վնասվածքը պատճառվել է հարվածի՞, թե՞ հիվանդության հետևանքով:
>
> – Եթե [դիմումատուի] ամորձիի վնասվածքը պատճառվել է հարվածի հետևանքով, ապա այն պատճառվել է մե՞կ, թե՞ մի քանի հարվածների հետևանքով:

35. Նույն ամսաթվին քննիչը ցուցմունք է վերցրել ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ից: Նա փաստել է, որ անանուն հեռախոսազանգից հետո, ոստիկանության պետի տեղակալ Գ.–ն ոստիկանության աշխատակիցներ Ռ.Ս.–ին և Ա.Ս.–ին անմիջապես կանչել է իր աշխատասենյակ, տեղեկացրել նրանց ստացված տեղեկության մասին և կարգադրել դիմումատուին անմիջապես բերել ոստիկանության բաժին: Մոտ 30 րոպե

անց նրանք վերադարձել են դիմումատուի հետ միասին: Ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն զեկուցել է, որ գյուղում և ոստիկանության բաժին գալու ճանապարհին դիմումատուն հայհոյախառն խոսքեր է ասել, սպառնացել և վիրավորական արտահայտություններ ուղղել ոստիկանությանը: Ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն այնուհետև խոսել է դիմումատուի հետ և խնդրել կամավոր կեպով հանձնել իր հրազենը: Դիմումատուն ժխտել է, որ երևէ հրազեն է ունեցել և ասել, որ մասնակցել է և շարունակելու է մասնակցել ցույցերին: Նա այնուհետև շարունակել է օգտագործել հայհոյախառն խոսքեր, ասելով՝ որ ոստիկանների՝ ոստիկանությունում աշխատելու օրերը հաշված են և որ շուտով իշխանությունը փոխվելու է: Ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն շարունակել է նկարագրել իր և ոստիկանության այլ աշխատակիցների կողմից դիմումատուի նկատմամբ ՔԴՕ–ի 182–րդ հոդվածի հիմքով վարչական վարույթը նախապատրաստելու ընթացքը և այն, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը, ներկայացնելով դեպքերի այնպիսի շարադրանք, որը նման է ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացվածին (տե՛ս վերոնշյալ §§ 23 և 24): Քննիչի կողմից հարցեր չեն տրվել:

3. Վատ վերաբերմունքի մասին առաջին ենթադրությունները և այլ իրադարձությունները

36. 2004 թվականի ապրիլի 24–ին դիմումատուն հիվանդանոցում հարցաքննվել է որպես կասկածյալ քննիչ Մ.–ի կողմից և տվել հետևյալ ցուցմունքը.

«...Ես ՀԺԿ կուսակցության անդամ եմ և վեջրես մասնակցել եմ այդ կուսակցության կողմից կազմակերպված ցույցերին: 2004 թվականի ապրիլի 23–ին մոտավորապես ժամը 16:00–ին ես գալիս էի տուն իմ մորաքրոջ տանից, երբ նկատեցի, որ մեր տան մոտ ավտոմեքենա է կայանված: Ավտոմեքենան շարժվեց, և մեր ճանապարհները հատվեցին իմ տանից ոչ շատ հեռու: Ես տեսա մեր [տեղի ոստիկան Ռ.Ս.–ին] մեր շրջանային քննիչներից մեկի հետ, որին ես չէի ճանաչում: Նրանք կանգնեցին և սկսեցին խոսել ինձ հետ: [Ռ.Ս.–ն] ասաց, որ եկել են իմ հետևից և որ պետը (նկատի ունենալով ոստիկանության պետին) ցանկանում է խոսել ինձ հետ: Ես պատասխանեցի, որ եթե գամ ոստիկանության բաժին նրանք ինձ կպահեն «գիշերը» հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանից առաջ նույն բանը տեղի էր ունեցել իմ ընկերների հետ: [Ռ.Ս.–ն] խոստացավ ինձ, որ նման բան չի լինի և ես համաձայնեցի գնալ նրանց հետ: Մենք միասին գնացինք ոստիկանության բաժին: Ես և [Ռ.Ս.–ն] բարձրացանք երկրորդ հարկ: Նրա աշխատասենյակի մոտ մի պահ սպասելուց հետո նա ինձ տարավ քրեական հետախուզության բաժանմունքի պետի [Հ.Մ.–ի] մոտ: Այնտեղ [Հ.Մ.–ն] սկսեց խոսել և ասաց. «Գրիշա, էս ի՞նչ ցույցեր ես անում, իշխանություն ես փոխում: Դու վտանգում ես երկրի կայունությունը» ու էլի նման բաներ[: Ն]ա նաև ասաց, որ ես մարդկանց եմ տարել ցույցերի, և ավելացրեց, որ ինձ հետ տարել եմ, օրինակ՝ [Գ.Ա.–ին]: Ես հարցրեցի, թե արդյոք [Գ.Ա.–ն] կարող է գալ և ապացուցել, որ ես նրան տարել եմ ցույցերի, և ավելացրի, որ նա իր խելքն ունի որոշելու համար՝ թե ինչ անի: [Հ.Մ.–ն] դուրս եկավ սենյակից ինձ ասելով, որ շուտով կգա: Քիչ անց ինձ հրավիրեցին ոստիկանության պետի տեղակալի [Գ.–ի] աշխատասենյակ: Երբ ես ներս մտա [Գ.–ի] աշխատասենյակ, նա ինձ հարցրեց, թե ինչու էի բարձր խոսում միջանցքում և ինչու էի ցույց կազմակերպել [ոստիկանության բաժնի] շենքում: Ես պատասխանեցի, որ ես միջանցքում չեմ եղել և ոչ մի ցույց էլ չեմ կազմակերպել: [Գ.–ն] ասաց, որ ես հայհոյախառն խոսքեր եմ ասում իրեն այդ ժամանակ և կարգադրեց, որ վարույթ պատրաստվի՝ իմ կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով: Ես և [Ռ.Ս.–ն] վերադարձանք նրա աշխատասենյակ, որտեղ նա [ոստիկանության մեկ այլ աշխատակից Ա.Մ.–ի] ներկայությամբ ասաց, որ նա իմ դեմ նյութեր չի պատրաստի և դուրս եկավ սենյակից: Քիչ անց [Ա.Մ.–ին] կանչեցին[: Ն]ա գնաց, այնուհետև վերադարձավ և սկսեց ինչ–որ փաստաթղթեր պատրաստել: Նա հարցրեց իմ անձնական տվյալները, սակայն ես հրաժարվեցի որևէ բան ասել և միայն ասացի, որ բարձրագույն կրթություն ունեմ: Քիչ անց եկավ [Հ.Մ.–ն]: [Ա.Մ.–ն] ասաց նրան, որ ես հրաժարվել եմ որևէ տեղեկություն հաղորդել իմ մասին: Նա [Ա.Մ.–ին] կարգադրեց գնալ և բերել թիվ 1 ձևը: [Ա.Մ.–ն] դուրս եկավ և վերադարձավ մի թուղթ

ձեռքին, որի վրա ես կարողացա տեսնել իմ նկարը: [Ա.Մ.–ն] որոշ փաստաթղթեր լրացրեց և խնդրեց ինձ ստորագրել դրանք[: Ե]ս պատասխանեցի, որ ոչ մի փաստաթուղթ չեմ ստորագրի: Այդ պահին մի աղջիկ եկավ [Ա.Մ.–ի աշխատասենյակ]: Նա աղջկան ասաց, որ դատական փաստաթուղթ տպի: [Ա.Մ.–ն]՝ թերևս ավարտելով փաստաթղթերը լրացնելը, պատրաստվում էր գնալ, հավանաբար դատական փաստաթուղթը վերցնելու համար: Ես հասկացա այդ ժամանակ, որ ինձ տանելու են դատարան, և դատարանը որոշելու է, որ ինձ «գիշերը» պահեն: Բացի դրանից, [Ա.Մ.–ն] նաև ասաց, որ պատրաստվում են ինձ դատարան տանել և դուրս եկավ աշխատասենյակից: Այդ պահին աշխատասենյակ մտավ [Հ.Մ.–ն]: Ես նստած էի գրասեղանի դիմաց: Ներս մտնելով աշխատասենյակ՝ նա անմիջապես սկսեց հայհոյել ինձ, ասելով՝ որ դա իրենց երկիրն է և կարող են անել ինչ որ ցանկանան, և այն ամենն, ինչ մենք փորձում ենք անել՝ նկատի ունենալով իշխանափոխությունը, զուր է: Ես պատասխանեցի. «Դուք արեք այն, ինչ մտածում եք՝ որ ճիշտ է, իսկ մենք կանենք այն՝ ինչ մենք ենք մտածում, որ ճիշտ է»[: Ա]յդ պահին [Հ.Մ.–ն] հարվածեց ինձ: Հարվածն ընկավ իմ կրծքավանդակի ձախ մասին: Նա հարվածում էր ինձ իր կոշիկի սուր քթամասով: Ես սուր ցավ զգացի իմ կողոսկրերի մասում: Նա միանգամից երկու անգամ խփեց դեմքիս ձախ բռունցքով: Այդ պահին ես համբերությունս կորցրի և ինքնապաշտպանության համար գրասեղանի վրայից վերցրի բջջային հեռախոսի լիցքավորման սարքը և դրանով խփեցի նրան: Լարը մնաց իմ ձեռքում, իսկ լիսքավորիչը պոկվեց և հարվածեց [Հ.Մ.–ի] դեմքին: Ես տեսա, որ նա բռնեց աչքը և բղավեց: Այդ պահին [Ա.Մ.–ն] մտավ աշխատասենյակ, և՝ տեսնելով քաոսային իրավիճակը, ինձ տարավ մոտակա աշխատասենյակը: [Հ.Մ.–ն և ոստիկանության մեկ այլ աշխատակից Ա.Ա.–ն] իմ հետևից եկան այնտեղ և սկսեցին ծեծել ինձ: Ես ընկա, բայց նրանք շարունակում էին ծեծել ինձ: Նրանք ոտքերով և ձեռքերով հարվածում էին ինձ: Հետո ոստիկանության այլ աշխատակիցներ եկան և դուրս տարան [Հ.Մ.–ին և Ա.Ա.–ին]: Ուզում եմ նշել, որ հենց սկզբում նրանք երկուսն էլ [Հ.Մ.–ն և Ա.Ա.–ն] խփել են իմ ամորձիներին: [Հ.Մ.–ին և Ա.Ա.–ին] դուրս տանելուց հետո որոշ ժամանակ անց աշխատասենյակ մտավ [ոստիկանության մեկ այլ աշխատակից Ա.Կ.–ն] [(ես նրա անունը և պաշտոնն իմացել էի այլ ոստիկաններից դեպքից հետո)] և սկսեց հայհոյել ինձ, փորձելով ստորացնել ինձ, երկու անգամ թքեց ինձ վրա և խփեց իմ ամորձիներին[: Հետո] նա մի քանի անգամ ոտքով հարվածեց իմ ոտքերին և դուրս եկավ: Դուրս գալուց առաջ նա նորից խփեց իմ ամորձիներին իր բանալիներով: Աշխատասենյակում ինձ ծեծի ենթարկելու առաջ [Ա.Կ.–ն] բոլորին կարգադրեց դուրս գալ, ասելով՝ որ հարցերս լուծելու է: Նրա դուրս գալուց հետո [Ա.Ա.–ն] ներս մտավ աշխատասենյակ և սկսեց ծեծել ինձ՝ պահանջելով ուղիղ կանգնել: Նա խփում էր ու ասում՝ «Դե խփի՛ր: Բա հիմա ինչու՞ չես խփում:» Որոշ ժամանակ անց շտապօգնության բժիշկը եկավ, ստուգելու համար թե արդյոք ես հարբած եմ: Ես նրան ասացի, որ հարբած չեմ: Նրանք կապվեցին ճանապարհային ոստիկանության պետի հետ և «սրվակ» խնդրեցին: [Ոստիկանության մեկ այլ աշխատակից Ա.Հ.–ն] բերես սրվակը: Բժիշկը կոտրեց սրվակի ծայրը և ես փչեցի դրա մեջ: Այդ ժամանակ ես նորից կրկնում էի, որ հարբած չեմ: [Ա.Հ.–ն] հարվածեց ճակատիս: Նա երկու անգամ հարվածեց ճակատիս: Թվում էր, կարծես նա դիտավորյալ ցույց էր տալիս, թե պաշտպանում է համազգեստի պատիվը: Ես շատ ահավոր վիճակում էի[: Ես] խնդրեցի [մեկ այլ ոստիկան Մ.Բ.–ին], և նա ինձ մի քիչ ջուր տվեց, հետո լցրեց գլխիս, մեջքիս և դեմքիս, որ գիտակցությունս վերականգնեմ: [Ոստիկանության մեկ այլ աշխատակից Ռ.Հ.–ն] նույնպես օգնեց ինձ, նա հանեց իմ ձեռնաշղթաները, գիտակցելով՝ որ ես շատ վատ վիճակում էի...»:

37. 2004 թվականի ապրիլի 26–ին քննիչ Մ.–ն, ուսումնասիրել է ոստիկանության գրանցամատյանը, որտեղ թիվ 153 գրառման տակ նշված է եղել, որ 2004 թվականի ապրիլի 23–ին ժամը 17:05–ին ստացվել է անանուն հեռախոսազանգ, որի ժամանակ ներկայացվել է այն պնդումը, որ 2004 թվականի ապրիլի 12–ի ցույցին դիմումատուն մասնակցել է հրազենով և այն դեռ նրա մոտ է:

38. 2004 թվականի ապրիլի 27–ին դիմումատուն որպես կասկածյալ նորից հարցաքննվել է հիվանդանոցում քննիչ Մ.–ի կողմից: Նրան հարցեր են տրվել այն մասին, թե նախքան այդ դեպքը ինչ խոսակցություն է տեղի ունեցել ոստիկանությունում իր հրազեն ունենալու վերաբերյալ: Դիմումատուն պատասխանել է, որ ոստիկաններից ոչ մեկը իրեն հարց չի տվել հրազենի վերաբերյալ: Միակ բանը, որ իրեն հարցրել են, եղել է այն, թե ինչու է նա գնացել ցույցերի և այլոց էլ տարել իր հետ: Նման հարցեր տրվել են

ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ի կողմից: Ավելին, երբ ոստիկանության աշխատակից Ա.Կ.–ն իրեն ծեծի էր ենթարկում, նա հարցնում էր, թե ընդդիմության առաջնորդներից ով է խրախուսում նրա գործունեությունը: Դիմումատուն նաև ավելացրել է, որ ոստիկանության աշխատակից Ա.Կ.–ն կարգադրել է, որ իրեն ձեռնաշղթաներ հագցնեն՝ ձեռքերը մեջքի հետևում, ինչից հետո սկսել է ծեծել նրան այդ վիճակում:

39. Քննիչ Մ.–ն ցուցմունք է վերցրել նաև ոստիկանության աշխատակից Ա.Ա.–ից, որը կրկնել է 2004 թվականի ապրիլի 23–ի իր զեկուցագրում բերված փաստարկները (տե՛ս վերոնշյալ § 20): Քննիչի կողմից հարցեր չեն տրվել:

40. Նույն ամսաթվին Հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի (ՀԴԲԳԳԿ) Արարատի մարզային ստորաբաժանումից փորձագետ Գ.–ն ստացել է քննիչի՝ 2004 թվականի ապրիլի 24–ի որոշումը, որով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն (տե՛ս § 34):

41. Նույն ամսաթվին Արարատի մարզային դատարանը որոշում է կայացրել բավարարել քննիչ Մ.–ի դիմումը՝ դիմումատուի տանը խուզարկություն անցկացնելու վերաբերյալ, գտնելով՝ որ բավարար հիմքեր կան կասկածելու, որ հրազենները կարող են թաքցված լինել այնտեղ:

42. 2004 թվականի ապրիլի 28–ին քննիչ Մ.–ն որոշել է վերցնել 2004 թվականի ապրիլի 24–ին հիվանդանոցում անցկացված՝ դիմումատուի կրծքավանդակի ռենտգեն հետազոտության արդյունքները (տե՛ս վերոնշյալ § 32):

43. 2004 թվականի ապրիլի 29–ին դիմումատուի տունը խուզարկության է ենթարկվել և որևէ հրազեն չի հայտնաբերվել:

44. Նույն ամսաթվին քննիչ Մ.–ն որպես վկա հարցաքննել է ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին: Քննիչը ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին խնդրել է մեկնաբանություն տալ դիմումատուի այն պնդումների վերաբերյալ, որ Հ.Մ.–ն առաջինն է հարձակվել նրա վրա, և որ նրա նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել Հ.Մ.–ի և ոստիկանության աշխատակից Ա.Ա.–ի կողմից դեպքից հետո, ինչին Հ.Մ.–ն պատասխանել է, որ դիմումատուն ստում է, և ժխտել է նրա նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու փաստը, կրկնելով իր ավելի վաղ ներկայացրած փաստարկները (տե՛ս վերոնշյալ § 35): Քննիչն այնուհետև ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին խնդրել է մեկնաբանություն տալ դիմումատուի այն պնդումների վերաբերյալ, որ ոստիկանության աշխատակիցները որևէ հարց չեն տվել հրազենի մասին, ինչին Հ.Մ.–ն պատասխանել է, որ դիմումատուն ոստիկանություն է տարվել այն տեղեկության հիման վրա, որ հրազեն է կրել և նրա հետ զրույցը վերաբերել է այդ հարցին: Դիմումատուն, սակայն, անընդհատ փոխել է զրույցի թեման և խոսել ցույցերից, իշխանափոխությունից, ոստիկանության աշխատակիցների՝ ծառայության մեջ գտնվելու «հաշված օրերից» և նրանց պատժից:

45. 2004 թվականի ապրիլի 30–ին դիմումատուն գանգատ է ուղարկել Վարչապետին, օրինակներն ուղարկելով՝ Գլխավոր դատախազին և ոստիկանության հանրապետական ու մարզային պետերին, բողոքելով, որ 2004 թվականի ապրիլի 23–ին մոտավորապես ժամը 14:00–ին նրան խաբեությամբ տարել են Արտաշատի ոստիկանության բաժին,

որտեղ նրան ծեծի և խոշտանգումների են ենթարկել ցույցերին մասնակցելու համար: Նա խնդրել էր, որ հանցանք գործած անձինք պատժի ենթարկվեն, նշել էր նրանց անունները, որոնց թվում էին Հ.Մ.–ն, Ա.Հ.–ն, Ա.Կ.–ն և Ա.Ա.–ն, և մանրամասների համար մեջբերել էր 2004 թվականի ապրիլի 25–ի իր ցուցմունքը (տե՛ս վերոնշյալ § 36):

46. Նույն ամսաթվին Հայաստանի՝ Մարդու իրավունքների պաշտպանը, որն այցելել էր դիմումատուին հիվանդանոցում և հետևում էր նրա գործին, նամակ է ուղարկում Գլխավոր դատախազություն և Ոստիկանության պետին, նրանց տեղեկացնելով հետևյալը.

> «Մենք իրականացրել ենք մարդու իրավունքների հնարավոր խախտումների ուսումնասիրություն՝ կապված դեպքի հետ, որը տեղի է ունեցել [դիմումատուի] հետ Արտաշատի ոսիկանության բաժնում [2004 թվականի ապրիլի 23–ին]:
>
> Մեր կողմից ստացված փաստերը հիմքեր են տալիս հաստատելու, որ ոստիկանության բաժնում [դիմումատուի] նկատմամբ կատարվել են գործողություններ, որոնք որակվում են որպես «դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք»:
>
> Հենց այն փաստը, որ [դիմումատուն] ոստիկանության քաղաքային բաժին է տարվել առողջ վիճակում և այնուհետև տեղափոխվել հիվանդանոց՝ որտեղ նրան վիրահատել են ստացած վնասվածքների պատճառով, խոսում է այն մասին, որ նա արժանացել է նման վերաբերմունքի, անկախ իր ինքնությունից և դրանից առաջ կատարծ գործողություններից:
>
> Մենք անհանգստացած ենք այն փաստով, որ մինչ այժ, ՀՀ ոստիկանությունը չի ներկայացրել իր զեկույցն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել:
>
> Մարզային դատախազության և մարզային և քաղաքային ոստիկանության [ներկայացուցիչների] հետ մեր ունեցած խոսակցությունների ընթացքում կարծիքներ են հնչել, որոնցից կարելի է եզրակացնել, որ որևէ պատշաճ գնահատական չի տրվելու դիմումատուին առանց հիմքի ոստիկանության բաժին բերելու, նրան ձերբակալելու համար բավարար հիմքերի բացակայության և հենց կոնկրետ [նրա] նկատմամբ քրեական վարույթի հարուցման վերաբերյալ:
>
> Սա հատկապես անհանգաստնող է այն առումով, որ այն կարող է հանգեցնել միակողմանի, ոչ անկողմնակալ քննության ...»

47. Նույն ամսաթվին քննիչ Մ.–ն ցուցմունք է վերցրել ոստիկանության աշխատակից Ա.Կ.–ից, որը փաստել է, որ դեպքից հետո մտել որ այն աշխատասենյակը, որտեղ գտնվում էր դիմումատուն, և բոլորին խնդրել դուրս գալ, որպեսզի մեկուսի խոսի նրա հետ և պարզի ամբողջ ճշմարտությունը: Նա այնուհետև զրույց է ունեցել դիմումատուի հետ, որը զղջացել էր կատարվածի համար: Քննիչն Ա.Կ.–ին խնդրել էր մեկնաբանություն տալ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների վերաբերյալ, ինչին ի պատասխան Ա.Կ.–ն հերքել էր դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու փաստը: Քննիչն այնուհետև Ա.Կ.–ն խնդրել է նշել, թե որ աշխատասենյակն է մտել դիմումատուի հետ զրուցելու համար և ուրիշ էլ ով է եղել այդ աշխատասենյակում, ինչին Ա.Կ.–ն պատասխանել է, որ նա նոր է ոստիկանության բաժնում և չի կարող վստահաբար նշել այդ աշխատասենյակը կամ ոստիկանության մյուս աշխատակիցների ինքնությունը, որոնք եղել են այդտեղ:

Գ. Դիմումատուի դեմ քրեական վարույթը

48. 2004 թվականի մայիսի 3–ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ 316–րդ հոդվածի 3–րդ մասով (տե՛ս ներքոնշյալ § 121)՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու մեջ:

Որոշման մեջ նշված էր, որ դիմումատուն բերվել է ոստիկանության բաժին՝ անօրինական կերպով հրազեն ունենալու կասկածով: Մոտավորապես ժամը 18:30–ին ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ի սենյակում, ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ից տեղեկանալով, որ իր դեմ պետք է վարչական վարույթ բերվի, դիմումատուն սեղանի վրայից վերցրել էր բջջային հեռախոսի լիցքավորման սարքը և դիտավորությամբ դրանով հարվածել ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ի աջ աչքին:

49. Նույն ամսաթվին դիմումատուն դուրս էր գրվել հիվանդանոցից: Նրա անձնական բժշկական քարտում պարունակվում էին նրա ախտորոշման և բուժման մասին նույն տեղեկությունները, որ ներկայացված էին վիրաբույժի կողմից 2004 թվականի ապրիլի 24–ին տրված տեղեկանքում (տե՛ս վերոնշյալ § 31):

50. Նույն ամսաթվին քննիչ Մ.–ն ցուցմունք է վերցրել ոստիկանության աշխատակից Ա.Հ.–ից, որը նույնպես հերքել է, որ դիմումատուի նկատմամբ ցուցաբերել է վատ վերաբերմունք: Ոստիկանության երկու այլ աշխատակիցներ Ռ.Հ.–ն և Մ.Բ.–ն նույնպես հարցաքննվել են որպես վկաներ: Երկուսն էլ հերքեցին, որ օգնել են դիմումատին, այսինքն՝ հանել են նրա ձեռնաշղթաները և նրան ջուր տվել: Ոստիկանության աշխատակից Ռ.Հ.–ն այնուհետև՝ ի պատասխան քննիչի հարցին, նշել է, որ դիմումատուն իրեն երբեք ոչ մի բողոք չի ներկայացրել իր առողջության հետ կապած:

51. 2004 թվականի մայիսի 4–ին քննիչ Մ.–ն հարցաքննել է դիմումատուին ևս մեկ անգամ, որը հաստատել է նախկինում ներկայացրած իր պնդումները:

52. 2004 թվականի մայիսի 5–ին փորձագետ Գ.–ն դիմումատուի դատաբժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա կազմել է իր զեկույցը: Զեկույցում հենց սկզբից նշվում էր, որ փորձաքննությունը սկսվել է 2004 թվականի ապրիլի 27–ին և ավարտվել 2004 թվականի մայիսի 5–ին: Դրանում այնուհետև, «Գործի փաստական հանգամանքները» գլուխում, մանրամասն վերաշարադրված էր դեպքի պաշտոնական շարադրումը, այն է՝ որ դիմումատուն վիրավորել էր ոստիկանության աշխատակցին և նույնպես վնասվածքներ ստացել դեպքի ժամանակ, և վերջում ավելացված էր, որ՝ ըստ դիմումատուի, նրա նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել: Զեկույցն ավարտվում էր փորձագիտական հետևյալ եզրակացությամբ.

> «[Դիմումատուի] անձնական զննության արդյունքները. [Հիվանդը] պառկած է մեջքի վրա կիսաակտիվ վիճակում ... Աջ սրունքի երրորդ հատվածի վերին մասի արտաքին մակերեսի վրա առկա է 2.5 սանտիմետր չափով և անկանոն ձև ունեցող դեղնականաչավուն կապտուկ: Մարմնի այլ մասերի վրա մարմնական ուրիշ վնասվածքների երևացող հետքեր չէն հայտնաբերվել: 2004 թվականի մայիսի 5–ին [ես ստացա 2004 թվականի ապրիլի 30–ին արված ռենտգեն հետազոտության վերաբերյալ խորհրդատվությունը ՀԴԲԳԳԿ–ի ճառագայթային մասնագետի կողմից, որի համաձայն] «[Դիմումատուի] կրծքավանդակի ձախ մասի ռենտգեն հետազոտության նկարում ոսկրային փոփոխություններ չեն հայտնաբերվել...»
>
> Եզրակացություն. [Դիմումատուի] մարմնական վնասվածքները, այն է՝ «Ամորձապարկի հետտրավմատիկ հեմատոման, ձախ մասի հեմատոցելեն, ձախ ամորձիի պատռվածքը և աջ սրունքի կապտուկը, պատճառվել է բութ և կոպիտ առարկաներով, [և] չի կարող բացառվել, [որ դրանք պատճառվել են] վերը նշված ժամանակ և ձևով: Ձախ ամորձիի վնասվածքն ունի տրավմատիկ բնույթ և կարող է պատճառված լինել ցանկացած տեսակի հարվածով: Մարմնական վնասվածքի ծանրության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է փորձաքննության նպատակով հիվանդին բերել դատաբժշկական փորձաքննության բաժին դեպքից հետո քսանմեկերորդ օրը:»

53. 2004 թվականի մայիսի 6–ին դիմումատուն բողոքել է Գլխավոր դատախազին, որ իր դեմ քրեական վարույթը հիմնավորված չէ: Նա փաստել է, որ մարզային դատախազությունից քննիչ Մ.–ն, իր ծառայողական պարտականությունների բերումով, կապված է եղել ոստիկանության մարզային բաժնի ոստիկանության աշխատակիցների հետ, և՝ հետևաբար, անկողմնակալ չի եղել: Նա դիմել է, որ քննիչ Մ.–ն հեռացվի գործի քննությունից, որ գործը տեղափոխվի Գլխավոր դատախազություն և որ քրեական վարույթ հարուցվի նրան խոշտանգումների ենթարկելու փաստի առնչությամբ:

54. 2004 թվականի մայիսի 10–ին Գլխավոր դատախազի տեղակալը որոշել է մերժել դիմումատուի դիմումը՝ համարելով այն չհիմնավորված:

55. 2004 թվականի մայիսի 18–ի նամակով դիմումատուն Գլխավոր դատախազությունից տեղեկացվել է, որ նրա դիմումը մերժվել է Գլխավոր դատախազի, սակայն նպատակահարմարության նկատառումներով, Գլխավոր դատախազի հրահանգով, քրեական գործը հետագա քննության համար ուղարկվել է Երևանի դատախազություն:

56. 2004 թվականի մայիսի 18–ին փորձագետ Գ.–ն լրացումներ է կատարել իր սկզբնական փորձագիտական եզրակացության մեջ՝ ներառելով վնասվածքների ծանրության գնահատումը: Եզրակացության մեջ այժմ նշվում է հետևյալը.

> «Եզրակացություն. [Դիմումատուի] մարմնական վնասվածքները, այն է՝ «Ամորձապարկի հետտրավմատիկ հեմատոման, ձախ մասի հեմատոցելեն, ձախ ամորձիի պատռվածքը և աջ սրունքի կապտուկը, պատճառվել է բութ և կոպիտ առարկաներով, [և] չի կարող բացառվել, [որ դրանք պատճառվել են] վերը նշված ժամանակ և ձևով. [վնասվածքներով] առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս՝ առողջության տևական վատթարացմամբ, հաշվի առնլով, որ վնասվածքի անմիջական հետևանքները պահպանվել են ավելի քան քսանմեկ օր:»

57. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն դիմել է Գլխավոր դատախազություն պահանջելով որոշում կայացնել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական գործ հարուցելու իր պահանջի վերաբերյալ:

58. 2004 թվականի մայիսի 21–ին դիմումատուի քրեական գործը փոխանցվել է Երևան քաղաքի դատախազություն, որը հանձնարարվել է Երևանի դատախազության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության քքնիչ Տ.–ին:

59. 2004 թվականի մայիսի 24–ին քննիչ Տ.–ն հարցաքննել է դիմումատուի մորը, որը նշել է, որ դիմումատուն երբեք հրազեն չի ունեցել: Նա այնուհետև նշել է, որ ոստիկանության աշխատակիցները առաջ էլ էին բազմաթիվ առիթներով այցելել իրենց տուն, հարցեր տվել դիմումատուի մասին և ասել, որ փնտրում են նրան, քանի որ նա մասնակցել է ցույցերին:

60. 2004 թվականի մայիսի 25–ին քննիչ Տ.–ն հարցաքննել է դիմումատուի ընկերոջը՝ Գ.Ա.–ին, որին նա ենթադրաբար հրավիրել է իր, որ իր հետ գնա ցույցերի: Գ.Ա.–ն նշել է, որ նա տեղյակ է եղել այն մասին, որ դիմումատուն դաժան ծեծի է ենթարկվել ոստիկանության բաժնում և ավելացրել, էր դա կապված է եղել նրա՝ ցույցերին մասնակցության հետ: Նա հաստատել է նաև, որ երբեք դիմումատուին հրազենով չի տեսել:

61. 2004 թվականի հունիսի 2–ին դիմումատուն դիմում է ներկայացրել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազին՝ պնդելով, որ ոստիկանության բաժնում նա խոշտանգումների է ենթարկվել և նրա նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել ոստիկանության աշխատակիցների կողմից, որոնց անունները նա նշել է 2004 թվականի ապրիլի 25–ի իր ցուցմունքում, ինչի արդյունքում նա կրել է ծանր մարմնական վնասվածքներ: Այնուամենայնիվ, մեղադրանքներ ներկացվել են միայն նրա դեմ, և որևէ գնահատական չի տրվել ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված քրեական արարքների և այն փաստի առնչությամբ, որ նա գործել է հարկադրված ինքնապաշտպանության նկատառումներով: Ավելին, նա տարվել է ոստիկանության բաժին առանց որևէ հիմքերի և նրա ձերբակալության իրական պատճառը Հայաստանում տեղի ունեցող քաղաքական հետապնդումներն էին: Դիմումատուն պահանջել է, հղում անելով՝ ի թիվս այլոց, Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 180–րդ, 181–րդ և 182–րդ հոդվածներին (տե՛ս ներքոնշյալ §§ 108-110), որ քննություն անցակացվի որ քրեական վարույթ հարցուցվի Արտաշատի ոստիկանության բաժնի ոստիկանների դեմ և որ քննության ժամանակ կասեցվեն նրանց ծառայողական լիազորությունները:

62. 2004 թվականի հունիսի 7–ին՝ ի պատասխան այս դիմումի, քննիչ Տ.–ն որոշում է կայացրել մերժել դիմումատուի ներկայացրած միջորդությունը: Որոշման մեջ հենց սկզբից նշվում է, որ դիմումատուի դեմ քրեական վարույթ է հարուցվել նրա կողմից ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին վնասվածքներ պատճառելու հիմքով, և դիմումատուն նույնպես վնասվածքներ է ստացել դեպքի ժամանակ: Որոշման մեջ շարունակվում է նշվել, որ.

> «Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քննությունն իրականացվել է օբյեկտիվորեն և որ հետաքննության ընթացքում իրականացվել են հետաքննության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնց ընթացքում որևէ փաստեր չեն պարզվել այն մասին, որոնցով պարզ կդառնար, որ Արտաատի ոստիկանության բաժնում ոստիկանության աշխատակիները վերազանցել են իրեց լիազորությունները[: Ու]ստի [նոր] քրեական վարույթ հարուցելու և քրեական հետապնդում իրականցնելու որևէ անհրաժեշտություն չկար:»

63. 2004 թվականի հունիսի 11–ին անցկացվել է առերեսում դիմումատուի և ձերբակալությունն իրականացնող ոստիկաններից մեկի՝ Ա.Ս–ի միջև: Դիմումատուն փաստել է, որ իրեն ժամը 15:00–ին մոտեցել են ոստիկանության աշխատակիցներ Ռ.Ս.–ն և Ա.Ս.–ն իր ձերբակալության ամսաթվին, և ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն նրան հրավիրել է ոստիկանության բաժին պետի հետ ցույցների հետ կապված զրույցելու նպատակով: Ոստիկանության աշխատակից Ա.Ս.–ն հաստատել է այս ցուցմունքը: Նա նաև ընդունել է, որ տեղյակ չի եղել այն մասին, որ դիմումատուն ոստիկանության բաժին է բերվում անօրինականորեն հրազեն կրելու կասկածանքով և այս մասին տեղեկացել է միայն ոստիկանության բաժին գալուց հետո:

64. 2004 թվականի հունիսի 14–ին անցկացվել է առերեսում դիմումատուի և ձերբակալությունն իրականացնող ոստիկաններից մեկի՝ Ռ.Ս.–ի միջև: Վերջինս փաստել է, ի թիվս այլոց, որ ոստիկանության բաժնի պետի տեղակալ Գ.–ն կարգադրել է իրենց դիմումատուին բերել ոստիկանության բաժին զրուցելու համար: Այս կարգադրությունը եղել է բանավոր, և դիմումատուին ձերբակալելու որևէ գրավոր որոշում չի եղել:

65. 2004 թվականի հունիսի 16–ին դիմումատուն Արտաշատի հիվանդանոցից խնդրել է, որ իրեն տեղեկություններ տրամադրվեն 2004 թվականի ապրիլի 23-24–ի դեպքերի վերաբերյալ:

66. Երկու նամակով 2004 թվականի հունիսի 22–ին Արտաշատի հիվանդանոցի տնօրենը դիմումատուին տեղեկացրել է հետևյալը.

> «...[Ա]պրիլի 23–ին և 24–ին Արտաատի շտապօգնության կայանում Արտաշատի ոստիկանության բաժնից [ստացվել է] շտապօգնության երեք կանչ՝ կապված ոստիկանության բաժնում պահվող [դիմումատուի] հետ:
>
> Առաջին կանչ. ... 2004 թվականի ապրիլի 23–ին ժամը 15:05–ին. կանչի նպատակը եղել է հարբածության վիճակը ստուգելու անհրաժեշտությունը:
>
> - հերթապահ բժիշկ՝ [Ա.Գ.]
>
> Երկրորդ կանչ. ... 2004 թվականի ապրիլի 24–ին, ժամը 23:20–ին. հերթապահ բժիշկ՝ [Ա.Գ.]: Ախտորոշում. փափուկ հյուսվածքների կապտուկներ կրծքավանդակի փախ մասում, կոտրված կողոսկրեր (?) և ամորձիների տեղային փակ վնասվածք:
>
> Անալգին, դիմեդրոլի և դիկլոֆենակ տեսակի դեղամիջոցների նշանակում:
>
> Երրորդ կանչ. ... 2004 թվականի ապրիլի 24–ին ժամը 23:20–ին [դիմումատուն] բերվել է ընդունարան՝ վիրաբույժի հետ խորհրդատվության համար. հերթապահ բժիշկ՝ [Վ.Հ.], ախտորոշում՝ կողոսկրերի և ամորձիների տեղային փակ վնասվածք:
>
> [Դիմումատուն] տեղափոխվել է վիրաբուժական բաժանմունք:»
>
> «...[Դիմումատուն] ... 2004 թվականի ապրիլի 24–ին, ժամը 16:40–ին ընդունվել է «Արտաշատի հիվանդանոց» ՓԲԸ–ի վիրաբուժական բաժանմունք հիվանդանոցի .... ընդունարանի ուղեգրմամբ ... հետևյալ ախտորոշմամբ. հետտրավմատիկ հեմատոմա, ձախ մասի հեմատոցելե և ձախ ամորձիի պատռվածք:
>
> Ըստ բժշկական քարտում պարունակվող նկարագրության, վերը նշված ախտորոշումը եղել է տրավմայի հետևանք ...»

67. 2004 թվականի հունիսի 22–ին 2անցկացվել է առերեսում դիմումատուի և ոստիկանության աշխատակիցներից մեկի՝ Ա.Մ.–ի միջև: Երկուսն էլ ներկայացրել են դեպքերի իրենց տարբերակը: Նման առերեսումներ անցակացվել են դիմումատուի և ոստիկանության աշխատակիցներ Ա.Ա–ի, Հ.Մ.–ի. Ա.Հ.–ի. Ա.Կ.–ի և ոստիկանության բաժնի պետի տեղակալ Գ.–ի միջև 2004 թվականի հուլիսի 7–ին, 8–ին և 27–ին ու 2004 թվականի օգոստոսի 5–ին համապատասխանաբար: Ոստիկանության բոլոր աշխատակիցները հերքել են նրա նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու փաստը: Ոստիկանության աշխատակից Ա.Ա.–ն առերեսման ժամանակ ընդունել է, որ ոստիկանության այն աշխատակիցներից մեկն է եղել, ով շտապօգնության երկրորդ կանչից հետո դիմումատուին ուղեկցել է հիվանդանոց, որտեղ հետազոտվել են նրա կողոսկրերը: Ա.Ա.–ն նշել է, որ բժիշկները որևէ վտանգավոր բան չեն հայտնաբերել, և դիմումատուն հետ է տարվել ոստիկանութան բաժին: Նա այնուհետև ընդունել է, որ նա ներկա է եղել դիմումատուի կողոսկրերի հետազոտության ժամանակ, սակայն ոչ ամորձիների հետազոտության ժամանակ:

68. Նույն ամսաթվին դիմումատուին ներկայացվել է 2004 թվականի մայիսի 5–ի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և 2004 թվականի ապրիլի 18–ի դրա լրացումը (տե՛ս վերոնշյալ §§ 52 և 56):

69. 2004 թվականի հունիսի 28–ին դիմումատուն միջնորդագիր է ներկայացրել պնդելով, որ փորձագետի ներկայացրած եզրակացություններն օբյեկտիվ չեն եղել, քանի որ իր կրած վնասվածքները եղել են ծանր և հասցվել են դիտավորությամբ, և հանգեցրել են կենսականորեն կարևոր օրգանի ֆունկցիայի կորստի: Դիմումատուն պահանջել է, որ նշանակվի դատաբժշկական նոր փորձաքննություն:

70. 2004 թվականի հուլիսի 6–ին դիմումատուն քննիչի՝ 2004 թվականի հունիսի 7–ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Նա ևս մեկ անգամ նշել է հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց անունները և բողոքել, որ հետաքննությունն անկողմնակալ չի եղել և դրանով նպատակ է հետապնդվել խեղաթյուրել դեպքի փաստական հանգամանքները, որպեսզի քողարկվեն տվյալ ոստիկանների կողմից գործած արարքները: Նա պատճառաբանել է, որ բավարար հիմքեր եղել են ՔԴՕ–ի 175–րդ, 176–րդ և 180–րդ հոդվածներով քրեական վարույթ հարուցելու համար (տե՛ս ներքոնշյալ §§ 105, 106 և 108), մի բան՝ որ հետաքննության մարմինը չի արել:

71. Նույն ամսաթվին քննիչ Տ.–ն հարցաքննել է բժիշկներ Ա.Գ.–ին և Վ.Հ.–ին: Բժիշկ Ա.Գ.–ն նշել է, որ նա երկու անգամ այցելել է դիմումատուն Արտաշատի ոստիկանության բաժնում 2004 թվականի ապրիլի 23–ին: Առաջին կանչի նպատակը եղել է հարբածության վիճակի ստուգումը: Երբ նա այցելել է նրան ոստիկանության բաժնում երկրորդ կանչից հետո՝ մի քանի ժամ անց, դիմումատուն գունատ է եղել, սառը քրտինքով պատված և սուր ցավեր է ունեցել: Զննությունից հետո կապտուկ է հայտնաբերվել դիմումատուի կրծքավանդակի ներքևի ձախ մասում: Նա նաև գանգատվել է ամորձիների շրջանում սուր ցավերից: Տրամադրվել է առաջին բուժօգնություն, ինչից հետո դիմումատուն տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց, քանի որ առկա է եղել նրա կրծքավանդակի և կողոսկրերի ռենտգեն հետազոտություն անցկացնելու և վիրաբույժի հետ խորհրդակցելու խիստ անհրաժեշտություն: Սկզբնապես ախտորոշվել է կողոսկրի կոտրվածք և ամորձիի վնասվածք: Նա տեղյակ չի եղել այդ վնասվածքների պատճառների, հիվանդանոցում տրված ախտորոշման կամ այն փաստի վերաբերյալ, թե որքան ժամանակ է դիմումատուն մնացել այնտեղ: Բժիշկ Վ.Հ.–ն նշել է, որ Արտաշատի ոստիկանության բաժնում դիմումատուի զննությունից հետո, որտեղ նա և բուժույրն այցելել էին 2004 թվականի ապրիլի 24–ին ստացված կանչով մոտավորապես ժամը 11:00–ին, պարզվել է, որ նա ունեցել է կողոսկրերի և ամորձիների փակ վնասվածքներ: Մարմնի այլ մասերում վնասվածքներ չեն հայտնաբերվել: Դիմումատուն այնուհետև տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ կատարվել է վիրահատություն: Բժիշկ Վ.Հ.–ն ավելացրել է, որ այդ վնասվածքները, հատկապես ամորձիների շրջանում ստացած վնասվածքները, կրող են պատճառված լինել ուժեղ կամ թույլ հարվածից կամ որևէ առարկային խփելու հետևանքով: Նա տեղյակ չի եղել այդ վնաստավծների պատճառների մասին:

72. 2004 թվականի հուլիսի 7–ին քննիչ Տ.–ն որոշեց նշանակել դիմումատուի դատաբժշկական նոր փորձաքննություն այն հիմքով, որ փորձագետի 2004 թվականի մայիսի 5–ի զեկույցի և 2004 թվականի մայիսի 18–ին դրա լրացման ճշգրտությունը դրված էր կասկածի տակ՝ հիմնվելով մասնավորապես այն փաստի վրա, որ փորձագետի եզրակացությունները վիճարկվել էին դիմումատուի կողմից (տե՛ս վերոնշյալ § 69): Նոր փորձաքննությունը պետք է անցկացվեր ՀԴԲԳԳԿ Երևանի ստորաբաժանման

փորձագետների կողմից, ում խնդրել էին պատասխանել հետևյալ հարցերին. 1) ինչ վնասվածքներ են առկա դիմումատուի մարմնի վրա, այդ թվում՝ նշել դրանց տեղը, բնույթը, պատճառման եղանակը, ծանրության աստիճանը և վաղեմությունը, և 2) արդյոք փորձագետ Գ.–ն ճիշտ էր որոշել դիմումատուի վնասվածքների ծանրության աստիճանը:

73. 2004 թվականի հուլիսի 8–ին քննիչ Տ.–ն որոշեց վերցնել դիմումատուի բժշկական քարտը Արտաշատի հիվանդանոցից:

74. 2004 թվականի հուլիսի 22–ին Քրեական և զինվորական գործերով վերքննիչ դատարանը որոշեց դիմումատուի 2004 թվականի հուլիսի 6–ի բողոքը (տե՛ս վերոնշյալ § 70) թողնել առանց քննության այն հիմքով, որ քննիչի 2004 թվականի հունիսի 7–ի որոշումը կայացվել էր քրեական հետաքննության ընթացքում և ընթացակարգային որոշում էր, որն՝ ըստ համապատասխան քրեական ընթացակարգային կանոնների, չէր ենթարկվում դատական վերահսկողության և չէր կարող վիճարկվել դատարաններում:

75. Նույն ամսաթվին փորձագետները ստացան քննիչի 2004 թվականի հուլիսի 7–ի որոշումը, որով նշանակվում էր դատաբժշկական նոր փորձաքննություն (տե՛ս վերոնշյալ § 72):

76. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22–ի որոշման դեմ բողոք ներկայացրեց իրավական նորմի հետ կապված խնդրի առնչությամբ: Նա փաստարկ է ներկայացրել այն մասին, որ վերաքննիչ դատարանը պարտավոր էր ՔԴՕ–ի 278–րդ հոդվածի համաձայն (տե՛ս ներքոնշյալ § 113) քննել քննիչի որոշման օրինականությանը վերաբերող բողոքը:

77. 2004 թվականի հուլիսի 28–ին կազմվել է դատաբժշկական փորձագետի նոր զեկույցը, որի եզրակացությունը գրեթե նույնն էր, ինչ որ նախորդ փորձագետի զեկույցի եզրակացությունը (տե՛ս վերոնշյալ §§ 52 և 56): Զեկույցում նշվում էր նաև, որ դիմումատուի վնասվածքների ծանրության աստիճանի մասին եզրակացությունը ճիշտ է տրվել:

78. 2004 թվականի օգոստոսի 10–ին դիմումատուի և ոստիկանության աշխատակիցներ Ռ.Հ.–ի ու Մ.Բ.–ի միջև անցկացվել է երկու առերեսում: Երկուսն էլ հերքել են, որ օգնել են դիմումատին, այսինքն՝ հանել են նրա ձեռնաշղթաները կամ ջուր տվել նրան:

79. 2004 թվականի օգոստոսի 13–ին քննիչ Տ.–ն որոշեց որպես տուժող ճանաչել ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին: Ոստիկանության աշխատակիցը հարցաքննվել է, որի ընթացքում նա հաստատել է իր նախկին պնդումները:

80. 2004 թվականի օգոստոսի 17–ին դիմումատուի դեմ մեղադրանքը փոփվել է՝ լրացվելով դիմումատուի հարբածության մասին փաստով: Դիմումատուն կրկին հարցաքննվել է և հայտարարել իր անմեղության մասին: Նա ևս մեկ անգամ փաստել է, որ նրան բերել են ոստիկանության բաժին ցույցերին մասնակցելու պատճառով և դաժան ծեծի ենթարկել:

81. Նույն օրը քննիչը որոշել է ավարտել հետաքննությունը, քանի որ մեղադրական եզրակացությունը պատրաստելու համար ձեռք էին բերվել բավարար ապացույցներ:

Դ. Դիմումատուի նկատմամբ քրեական վարույթի կարճումը

82. 2004 թվականի օգոստոսի 30-ին Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազը դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու որոշում է կայացրել՝ հղում կատարելով ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 2–րդ կետի 2–րդ ենթակետին կետին (տե՛ս ներքոնշյալ § 117): Սույն որոշման մեջ նախևառաջ ամփոփվել է հետաքննող մարմնի կողմից կազմված դեպքերի շարադրանքը, որի համաձայն դիմումատուն բերման էր ենթարկվել ոստիկանության բաժին՝ ցույցերի ժամանակ հրազեն կրելու կասկածանքով: Ոստիկանության բաժանմունք բերման ենթարկվելու ընթացքում և տեղ հասնելով՝ դիմումատուն օգտագործել է վիրավորական արտահայտություններ, վիրավորել ոստիկանության աշխատակիցներին և չի ենթարկվել նրանց օրինական հրահանգներին: Պարզելով, որ իր պահվածքի վերաբերյալ կազմված վարչական գործը ներկայացվելու է դատարան, դիմումատուն բջջային հեռախոսի լիցքավորիչով հարվածել է ոստիկանության աշխատակից Հ.Մ.-ի աջ աչքին՝ դիտավորյալ պատճառելով միջին ծանրության վնասվածքներ: Այնուհետև, դիմումատուն սեղանից վերցրել է հեռախոսը և փորձել դրանով հարվածել Հ. Մ.-ին, բայց կանխվել է Ա.Ա.-ի կողմից, ինչից հետո դիմումատուն հարձակվել է Հ.Մ.-ի վրա, և վերջինս ինքնապաշտպանության նպատակով հարվածել է դիմումատուի ամորձիներին, կառչել նրանից, ու նրանք միասին ընկել են աթոռի վրա, իսկ հետո՝ հատակին: Որոշման համաձայն եզրակացվել է, որ.

> «Միջադեպի արդյունքում՝ [դիմումատուի] ամորձին վնասվել է ու հեռացվել վիրահատության միջոցով, [այդպիսով]՝ միջին ծանրության վնաս հասցվել է նաև նրա առողջությանը:
>
> Քանի որ [Հ.Մ.-ն] գործել է անհրաժեշտ ինքնապաշտպանության սահմաններում, ապա նրա դեմ քրեական վարույթ չի հարուցվել, մինչդեռ [դիմումատուին] մեղադրանք է առաջադրվել [ՔՕ-ի] 316-րդ հոդվածի 3-րդ կետով:
>
> Հաշվի առնելով այն փաստը, որ հանցանքի կատարման պահին [դիմումատուն] ևս կրել է իր առողջության համար միջին ծանրության վնաս՝ մասնավորապես՝ նրա ամորձին վնասվել է, ենթարկվել վիրահատության և հեռացվել, ինչն անդառնալի է, և ըստ էության՝ զրկանքներ կրելով՝ նա փոխհատուցել է իր մեղքը և այդպիսի հանգամանքներում նպատակահարմար չէ նրա դեմ իրականացնել քրեական հետապնդում, ես որոշել եմ...դադարեցնել հետապնդումը [դիմումատուի] նկատմամբ...»

83. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն բողոքարկել է այս որոշումը վերադաս դատախազին:

84. 2004 թվականի սեպտեմբերի 24-ին վճռաբեկ դատարանը որոշել է մերժել դիմումատուի բողոքը՝ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22-ի (տե՛ս վերևում նշված § 74) որոշման դեմ իրավունքի նորմերի կապակցությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

> «Գործի նյութերից պարզ է դառնում, որ [դիմումատուն] միջնորդություն է ներկայացրել՝ ոստիկանության Արտաշատի բաժնի աշխատակիցների դեմ քրեական վարույթ հարուցելու պահանջով 2004 թվականի հունիսի 2-ին, այսինքն այն ժամանակ, երբ [քրեական գործն] արդեն հարուցվել էր 2004 թվականի ապրիլի 23-ին տեղի ունեցած դեպքի հիման վրա, և այդ գործի հետաքննությունն արդեն ընթացքում էր: Ավելին, թե՛ [դիմումատուի] կողմից [ոստիկանության աշխատակից Հ.Մ.-ին] հասցված մարմնական վնասվածքի և թե՛ վերջինիս կողմից [դիմումատուին] հասցված մարմնական վնասվածքի փաստը կազմել է այդ հետաքննության առարկան: Այդ հանգամանքներում առանձին քրեական գործ հարուցելու անհրաժեշտություն չի եղել՝ հաշվի առնելով

[դիմումատուին] հասցված մարմնական վնասվածքը, քանի որ [նրա] կողմից բարձրացված հարցերն արդեն քրեական գործով հետաքննության առարկա են եղել:

Քրեական գործի արդյունքների հիման վրա՝ 2004 թվականի օգոստոսի 30-ին Երևանի քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազը [դիմումատուի] նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու որոշում է կայացրել:

Այսպիսի հանգամանքներում ելնելով այն բանից, որ [դիմումատուի] կողմից բարձրացված հարցերն արդեն եղել են իրավասու մարմինների կողմից քննության առարկա, և այդ առնչությամբ կայացվել է վերջնական որոշում, միևնույն հարցի առնչությամբ քրեական նոր գործ հարուցելու պահանջն անհամատեղելի է [ՔԴՕ-ի] 27-րդ հոդվածի պահանջների հետ»:

85. 2004 թվականի սեպտեմբերի 24-ի նամակով դիմումատուն տեղեկացվել է Գլխավոր դատախազությունից, որ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հիմնավորված է եղել, և այն բեկանելու հիմքեր չեն եղել:

86. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ այդ որոշումը բեկանելու խնդրանքով: Նա բողոքարկել է քրեական վարույթը կարճելու հիմքերը՝ բերելով մանրամասն փաստարկներ այն մասին, որ հետաքննությունը շատ պատճառներով ընթացել է բացթողումներով, այդ թվում՝ իր անօրինական ձերբակալության փաստի անտեսումը, ինչը կապված է եղել ցույցերին և քաղաքական գործունեությանն իր մասնակցության հետ, և ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ վատ վերաբերմունքը, որը ոստիկանության աշխատակից Հ.Մ.-ի կողմից կեղծ ձևով ներկայացվել է որպես ինքնապաշտպանություն: Ոստիկանության աշխատակիցներ Ա.Ա.-ի, Ռ.Ս.-ի, Հ.Մ.-ի և Ա.Կ.-ի տված ցուցմունքները եղել են կեղծ և առանց ապացուցողական ուժի, քանի որ այս մարդիկ են եղել նրա դաժան ծեծի հանցանքն իրականացրած անձինք: Ավելին, ոստիկանության Արտաշատի բաժնի աշխատակիցները նրա նկատմամբ քրեական հետապնդում են սկսել դեռևս 2004 թվականի մարտ ամսից, և 2004 թվականի ապրիլի 23-ի անանուն հեռախոսազանգը պարզապես հորինվածք էր: Դանդաղ և կողմնակալ կերպով ընթացող հետաքննության պատճառով վերոհիշյալ անձանց հաջողվել է խուսափել քրեական պատասխանատվությունից: Մասնավորապես, հետաքննության մարմինն անմիջապես չի իրականացրել առերեսումներ և դա արել է միայն 2004 թվականի հուլիս ամսին՝ դրանով հնարավորություն տալով ոստիկանության աշխատակիցներին համաձայնեցնելու իրենց ցուցմունքները, մինչդեռ դատաբժշկական փորձագետի եզրակացությունները անկողմնակալ չեն եղել: Քրեական վարույթ չի հարուցվել, և հանցանքը կատարած անձինք հարցաքննվել են միջադեպից միայն երկու ամիս անց, ինչից ենթադրվում է, որ գործը քաղաքական բնույթ է կրում և գտնվում է բարձրաստիճան հովանավորության տակ: 2004 թվականի ապրիլի 23-ի գիշերը նրա նկատմամբ կանոնավոր կերպով վատ վերաբերմունք ցուցաբերելու փաստը հաստատվել է հիվանդանոցից տրամադրված համապատասխան փաստաթղթերով, և եղել են ոստիկանության աշխատակիցների դեմ քրեական վարույթ հարուցելու համար բավարար հիմքեր, ինչպես պահանջվում է ՔԴՕ-ի 175-րդ և 176-րդ հոդվածներով (տե՛ս ներքոնշյալ §§ 105 և 106): Դիմումատուն պնդել է, որ այդ վարույթը հարուցվի, քանի որ իր դեմ կատարված հանցանքը բացարձակապես չի հետաքննվել: Վերջում, նա պահանջել է կարճել իր դեմ հարուցված քրեական վարույթը՝ պատասխանատվությունից

ազատող հիմքերով, այլապես գործի քննության համար նա կդիմի դատարան, որտեղ կարող է ապացուցել իր անմեղությունը:

87. 2004 թվականի նոյեմբերի 12-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննել է դիմումատուի բողոքը: Թե՛ դիմումատուն և թե՛ հետաքննության մարմնի ներկայացուցիչը ներկա են եղել դատական այդ նիստին և երկուսն էլ ներկայացրել են իրենց փաստարկները: Ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ դիմումատուի բողոքը հիմնավորված չէ, և որոշել է մերժել այն:

88. 2004 թվականի նոյեմբերի 22-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ: Իր բողոքի մեջ նա, մասնավորապես, բերել է փաստարկներ, որ ընդհանուր իրավասության դատարանն անտեսել է դատախազի որոշման դեմ իր բողոքի մեջ ներառված բազմաթիվ հանգամանքները՝ հիմնավորելով հետաքննության՝ միակողմանի և բացթողումներով անցկացումը: Դիմումատուն վերաքննիչ դատարան է դիմել պահանջելով անցկացնել օբյեկտիվ քննություն, բեկանել ընդհանուր իրավասության դատարանի որոշումը և կարգադրել դատախազին՝ պատասխանատվությունից ազատող հիմքով կարճել գործը կամ գործը ներկայացնել դատարան՝ ըստ էության քննելու համար: Այս բողոքին կից ներկայացվել էր նաև դիմումատուի՝ ընդհանուր իրավասության դատարան ներկայացրած բողոքի պատճենը (տե՛ս վերոնշյալ § 86):

89. 2004 թվականի դեկտեմբերի 24-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը գտել է, որ հետաքննությունն անց է կացվել քրեադատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան, և դիմումատուի ընթացակարգային և նյութական իրավունքները չեն խախտվել: Այն նաև գտել է, որ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազը կայացրել է իրավաչափ և հիմնավորված որոշում՝ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածին համապատասխան (տե՛ս ներքոնշյալ § 117), և ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան:

90. 2004 թվականի դեկտեմբերի 28-ին դիմումատուն ներկայացրել է բողոք՝ իրավունքի նորմերի կապակցությամբ: Իր բողոքի մեջ նա, մասնավորապես, բերել է փաստարկներ, որ ցածր ատյանի դատարաններն անտեսել են այն փաստը, որ հետաքննության մարմինը խախտել է ՔԴՕ-ի 17-րդ հոդվածի պահանջները (տե՛ս ներքոնշյալ § 102), և իրականացնելով միակողմանի հետաքննություն՝ նրան մեղավոր է ճանաչել՝ ՔՕ-ի 316-րդ հոդվածի 3-րդ կետով (տե՛ս ներքոնշյալ § 121): Դատարաններն անտեսել են հետաքննության կողմնակալ իրականացումը, գործի մեջ կեղծ փաստաթղթերի գոյությունը և այն փաստը, որ ամբողջ հետաքննությունը կառուցվել է ոստիկանության աշխատակիցների կողմից նրա անօրինական ձերբակալության հետ կապված դեպքերի հիման վրա: Դիմումատուն ևս մեկ անգամ բերել է փաստարկներ, որ ոչ թե ոստիկանության աշխատակիցը, այլ ինքն է գործել անհրաժեշտ ինքնապաշտպանության նպատակով, և պահանջել է, որ գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից՝ դռնբաց նիստով, և իրեն թույլ տրվի ապացուցել իր անմեղությունը: Վերջում նա դիմել է, որ 2004 թվականի օգոստոսի 30-ի դատախազի որոշումը և վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվեն:

91. 2005 թվականի փետրվարի 4-ին վճռաբեկ դատարանը քննել է դիմումատուի բողոքը և գտել, որ.

«[Դիմումատուն], հիմնվելով [ընդհանուր իրավասության դատարանի] առջև բարձրացված փաստարկների վրա, [վերաքննիչ դատարանին ներկայացված] իր բողոքի մեջ բերել է փաստարկներ, որ հետաքննությունը եղել է բացթողումներով և միակողմանի, ինքը մեղադրվել է անարդարացի կերպով, իր դեմ մեղադրանքները հանվել են... պատասխանատվությունից չազատող հիմքերով, իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերած և վնասվածք հասցրած ոստիկանության աշխատակիցները չեն ենթարկվել քրեական պատասխանատվության, հետաքննության ընթացքում տեղի են ունեցել կեղծումներ, ոստիկանության աշխատակիցները տվել են կեղծ ցուցմունքներ, կազմվել են ոչ ճշգրիտ դատաբժշկական եզրակացություններ և այլն:

Իր բողոքի մեջ նա նաև նշել է, որ դատարանների կողմից կայացված որոշումները եղել են չպատճառաբանված, և իր կողմից բարձրացված հարցերին տրվել են չպատճառաբանված պատասխաններ...

Այսպիսով, [դիմումատուն] [ընդհանուր իրավասության դատարանին և վերաքննիչ դատարանին] ներկայացված իր բողոքներում բարձրացրել է նաև հարցեր, որոնք ներառվել են [իր] բողոքի մեջ՝ իրավունքի նորմերի կապակցությամբ»:

92. Վճռաբեկ դատարանը շարունակել է՝ եզրակացնելով, որ ցածր ատյանների դատարանները, անտեսելով ՔԴՕ-ի 17-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները (տե՛ս ներքոնշյալ § 102), որոնց համաձայն քրեական վարույթի ընթացքում օրինականության խախտումների մասին վկայող բողոքները պետք է համապարփակ ձևով քննվեն գործին առնչվող մարմնի կողմից, հաշվի չի առել դիմումատուի կողմից բարձրացված փաստարկները և կայացրել է չպատճառաբանված որոշումներ: Այդ հիմքով՝ նա որոշել է բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

93. 2005 թվականի մարտի 3-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը նորից քննել է դիմումատուի դիմումը և այն մերժելու որոշում կայացրել: Կայացնելով այդ որոշումը՝ վերաքննիչ դատարանը նշել է.

«[Դիմումատուն] խնդրել է, որ գործն ուղարկվի լրացուցիչ հետաքննության, այն ակնկալիքով, որ այնուհետև դա կներկայացվի դատարան՝ բերելով փաստարկներ, որ հետաքննության մարմինը կատարել է քրեական դատավարության կանոնների բազմաթիվ խախտումներ, հետաքննչական մի շարք գործողություններ կեղծվել են, և ավելին, նա գործել է անհրաժեշտ ինքնապաշտպանության նպատակով:

վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ փաստարկներն անհիմն են, քանի որ չկա ապացույց, որ հետաքննչական գործողությունները կեղծվել են: [Դիմումատուի]՝ օրենքով նախատեսված և երաշխավորված իրավունքները պահպանվել են գործի հետաքննության ընթացքում. դա արտացոլվել է կազմված համապատասխան գրառումներում, այդ թվում՝ իրավաբանների ներկայությամբ: Այն փաստը, որ [դիմումատուն] հրաժարվել է հետաքննչական գործողությունների մասին գրառումները ստորագրելուց, չի նշանակում, որ այդ գրառումներն անօրինական են:

[Դիմումատուի] փաստարկներն այն մասին, որ նրան ոստիկանության բաժին են տարել 2004 թվականի ապրիլի 23-ին՝ մոտավորապես ժամը 15:00-ին և 17:00-ին, չեն հիմնավորվում գործի նյութերով, և այս փաստը ոչ մի առնչություն չունի նրա՝ մեղավոր կամ անմեղ լինելու հետ:

[Դիմումատուն] խոստովանել է, որ ինքը հեռախոսի միջոցով մարմնական վնասվածքներ է հասցրել ոստիկանության աշխատակից [Հ.Մ.-ին]՝ ինքնապաշտպանության նպատակով:

Այս փաստը հերքվել է գործում եղած ապացույցով, այդ պատճառով վարույթը չի կարճվել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի կողմից պատասխանատվությունից ազատող հիմքերով:

Քրեական հետապնդման մարմինը ձեռնարկել է օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումները՝ գործի համապարփակ, ամբողջական և օբյեկտիվ քննություն անց կացնելու, ինչպես նաև՝ թե՛ մեղադրական և թե՛ անմեղությունը հաստատող հանգամանքները հստակեցնելու նպատակով:

[Դիմումատուի] հայտարարությունները՝ իր անմեղության և պնդվող խախտումների մասին, մանրամասն կերպով քննվել են վարույթի ընթացքում՝ ներառյալ վերաքննիչ դատարանի վարույթը:

Արդյունքում՝ երաշխավորվել է [դիմումատուի]՝ արդարացի դատական նիստի համար իրավունքը, այդ թվում՝ այն վկաների հետ առերեսման իրավունքը, ովքեր ցուցմունքներ են տվել նրա դեմ, և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքներ»:

94. 2005 թվականի մարտի 11-ին դիմումատուն ներկայացրել է բողոք՝ իրավունքի նորմերի կապակցությամբ: Իր բողոքի մեջ նա, մասնավորապես, բերել է փաստարկներ, որ վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցի պատշաճ գնահատում՝ գործի մեջ: Նա անտեսել է այն փաստը, որ մեղադրանքը հիմնված է եղել կեղծված ապացույցների վրա, և չքննելով ընթացակարգային խախտումների վերաբերյալ նրա պնդումները, ինչպես պահանջվում է ՔԴՕ-ի 17-րդ հոդվածի 4-րդ կետով (տե՛ս ներքոնշյալ § 102)՝ համաձայնվել է իր դեմ ներկայացված մեղադրանքի ձևակերպման հետ, համաձայն որի նա դիմադրել է ոստիկանության աշխատակիցներին և չի ենթարկվել նրանց օրինական հրահանգներին: Դիմումատուն այնուհետև նշել է, որ վերաքննիչ դատարանը, հիմնվելով բացառապես ոստիկանության աշխատակիցների կեղծ զեկույցների վրա, օրինական է համարել անանուն հեռախոսազանգի վրա հիմնված նրա ձերբակալությունը և ապօրինաբար ձերբակալված անձի դեմ վարչական գործ սկսելու նախաձեռնությունը: Դիմումատուն նաև բերել է փաստարկներ, որ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, և պահանջել է, որ իր դեմ ներկայացված մեղադրանքը քննվի դռնբաց դատական նիստում, հաշվի առնելով այն, որ քրեական վարույթը կարճվել է պատասխանատվությունից չազատող հիմքերով և որ իր դեմ ներկայացված մեղադրանքը համարվել է ապացուցված: Նա խնդրել է, որ դատախազի որոշումն ու ցածր ատյանների որոշումները բեկանվեն:

95. 2005 թվականի մայիսի 13-ին վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը: Մերժելով բողոքը՝ վճռաբեկ դատարանը նշել է.

«[Դիմումատուի] բողոքի մեջ ներկայացված փաստարկները՝ քրեական հետապնդման մարմնի կողմից կատարված խախտումների վերաբերյալ, քննվել են վերաքննիչ դատարանի կողմից: Դատարանն իրավամբ նշել է, որ ոչ մի ապացույց ձեռք չի բերվել՝ ենթադրելու համար, որ հետաքննչական գործողությունները կեղծվել են կամ հորինվել և որ [դիմումատուն] նախնական հետաքննության ընթացքում օգտվել է [ՔԴՕ-ով] երաշխավորված իրավունքներից:

[Դիմումատուի] այն փաստարկը, որ ինքը հարվածել է [Հ.Մ.-ին]՝ գործելով ինքնապաշպանության նպատակով, հերքվել է հետաքննության ընթացքում հավաքված ապացույցներով:

Ինչ վերաբերում է նրա այն փաստարկին, որ դատախազն անհիմն կերպով դադարեցրել է իր նկատմամբ քրեական հետապնդումն իր համաձայնության բացակայությամբ, [պետք է նշել, որ ՔԴՕ-ով] չի պահանջվում անձի համաձայնությունը՝ [ՔԴՕ-ի] 37-րդ հոդվածի 2–րդ կետի 2–րդ ենթակետով նախատեսված հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում:

[Դիմումատուն] օգտվել է Հայաստանի Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքների շարքում դատական պաշտպանության իրավունքից՝ դատարաններում վիճարկելով հետաքննության մարմնի որոշումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը

կարճելու նպատակով՝ [ՔԴՕ-ի] 263-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգի համաձայն:

Վերաքննիչ դատարանը, [դիմումատուի] դիմումի հիման վրա իրականացնելով մինչդատական վարույթների դատական հսկողություն, իրավամբ նշել է, որ դատախազի 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը եղել է օրինական և հիմնավորված, և այն [դիմումատուին] չի գտել մեղավոր՝ հանցանքը կատարելու համար, ինչպես նշված է բողոքի մեջ:

Պալատը գտնում է, որ բողոքի հիմքի շրջանակներում, վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, և այն չեղյալ համարելու հիմքեր չկան, հետևաբար՝ բողոքը պետք է մերժվի»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (մինչև 2005 թվականին ներդրված փոփոխությունները)

96. 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ քաղաքացիներն օգտվում են բոլոր իրավունքներից և ազատություններից և կրում Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները՝ անկախ իրենց ազգային ծագումից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ վիճակից:

97. 19-րդ հոդվածով նախատեսվում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման, դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

98. 41-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով և վերջնական դատավճռով:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրքը (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)՝ գործի քննության ժամանակ ուժի մեջ եղած

1. Ձերբակալումը

99. Համաձայն 128-րդ հոդվածի՝ ձերբակալումն անձին արգելանքի վերցնելը և արգելանքի տակ կարճաժամկետ պահելն է:

100. Համաձայն 129-րդ և 130-րդ հոդվածների՝ անձին կարելի է ձերբակալել. 1) հանցանք կատարելու մեջ անմիջապես ծագած կասկածանքի հիման վրա կամ 2) քրեական հետապնդման մարմնի կողմից կայացրած որոշման հիման վրա: Երկու դեպքերում էլ ձերբակալումը չպետք է գերազանցի անձին արգելանքի վերցնելու պահից 72 ժամը:

2. Վատ վերաբերմունք և հետաքննություն

101. Համաձայն 11-րդ հոդվածի 7–րդ կետի՝ քրեական վարույթի ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և վարույթին մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության,

սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

102. Համաձայն 17-րդ հոդվածի 4–րդ կետի՝ քրեական վարույթի ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի գործով զբաղվող մարմինը:

103. Համաձայն 27-րդ հոդվածի, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական վարույթ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործությունը և հանցագործություն կատարած անձանց բացահայտելու համար:

104. Համաձայն 41-րդ հոդվածի 2–րդ կետի 4–րդ ենթակետի՝ դատարանը լիազորված է սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

105. 175-րդ հոդվածով քրեական վարույթ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

106. Համաձայն 176-րդ հոդվածի՝ քրեական վարույթ հարուցելու հիմքերը ներառում են, ի թիվս այլոց, հանցագործությունների մասին անձանց հաղորդումները և հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

107. Համաձայն 177-րդ հոդվածի՝ հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր: Քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը մտցվում է համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ:

108. Համաձայն 180-րդ հոդվածի՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ վարույթ հարուցելու հիմքերի օրինականությունը և բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ կամ այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն և նշանակվել փորձաքննություն:

109. Համաձայն 181-րդ հոդվածի՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) քրեական վարույթ հարուցելու մասին. 2) քրեական վարույթ հարուցելը մերժելու մասին. 3) հաղորդումը դրանով զբաղվելու իրավասություն ունեցող մարմնին հանձնելու մասին:

110. Համաձայն 182-րդ հոդվածի՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական վարույթ հարուցելու մասին:

111. Համաձայն 184-րդ հոդվածի 1–ին կետի՝ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է երրորդ անձի կողմից՝ առանց մեղադրյալի մասնակցության:

112. Համաձայն 185-րդ հոդվածի 1–ին, 2–րդ, 3–րդ և 5–րդ կետերի՝ քրեական վարույթ հարուցելու օրինական հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած անձին: Այս որոշումը որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Որոշումը վերացվելու դեպքում, դատախազը պարտավոր է հարուցել քրեական վարույթ:

113. «Դատական վերահսկողության ոլորտը» վերնագրով 278-րդ հոդվածով սահմանվում է, դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

114. Համաձայն 290-րդ հոդվածի՝ կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն բողոքներ ներկայացնել դատարան՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ, ինչպես նաև հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց կամ քրեական վարույթ հարուցելուց այդ մարմինների հրաժարման դեմ և քրեական վարույթը կասեցնելու կամ կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ: Եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, դատավորը որոշում է կայացնում, որով վարույթն իրականացնող մարմնին կաչգադրվում է վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը:

3. Քրեական վարույթի դադարեցումը և անմեղության կանխավարկածը

115. Համաձայն 6-րդ հոդվածի՝ որում թվարկվում են ՔԴՕ-ում տեղ գտած հասկացությունները, «վերջնական որոշում» նշանակում է գործով զբաղվող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության:

116. 18-րդ հոդվածով նախատեսվում է, որ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով, դատարանի վերջնական դատավճռով:

117. Համաձայն 37-րդ հոդվածի 2–րդ կետի 2–րդ ենթակետի՝ դատախազը կարող է որոշում կայացնել քրեական հետապնդում չիրականացնելու մասին, եթե նա դրա իրականացումը գտնի ոչ նպատակահարմար, այն հիմքով որ անձը քավել է

կատարվածը տուժանքի միջոցներով, իրավունքի սահմանափակումներով և այլ զրկանքներով, որոնք անձը կրել է իր կատարած արարքի կապակցությամբ:

118. 2006թ. մայիսի 25-ին ՔԴՕ-ի 37-րդ հոդվածը փոփոխվել է, և դրա 2–րդ մասի երկրորդ պարբերությունը հանվել է: Փոփոխված 37-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել ՔՕ–ի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: 72-րդ հոդվածը վերաբերում է մեղադրյալի կողմից գործուն զղջալու դեպքերին, 73-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքերին, երբ մեղադրյալը հաշտվել է տուժողի հետ, իսկ 74-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքերին, երբ իրադրության փոփոխման հետեւանքով մեղադրյալը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Համաձայն ՔԴՕ-ի փոփոխված 37-րդ հոդվածի՝ ՔՕ-ի 72-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում քրեական վարույթը չի կարող կարճվել, եթե մեղադրյալն առարկում է դրա դեմ:

119. Համաձայն 263-րդ հոդվածի՝ քրեական վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

120. Համաձայն 264-րդ հոդվածի՝ քրեական վարույթը վերսկսվում է, եթե քրեական վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացվում է:

Գ. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1–ից)

121. Համաձայն 316-րդ հոդվածի 3–րդ կետի՝ գործի քննության ժամանակահատվածի դրությամբ ուժի մեջ եղած, պետական պաշտոնյայի կամ նրա մերձավորի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Դ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ուժի մեջ է 1986 թվականի հունիսի 1–ից)

122. Համաձայն 182-րդ հոդվածի՝ գործի քննության ժամանակահատվածի դրությամբ ուժի մեջ եղած, սահմանվում է, որ հասարակական կարգի պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժիննիկի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը՝առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև կրկնապատիկը կամ ուղղիչ աշխատանքների նշանակում մեկից մինչև երկու ամիս ժամանակով՝ վաստակի քսան տոկոսի պահումով, իսկ այն դեպքում, երբ ըստ գործի հանգամանքների, հաշվի առնելով խախտողի անձը, այդ միջոցների կիրառումը կհամարվի անբավարար՝ վարչական կալանք մինչև տասնհինգ օր ժամանակով:

III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Տարեկան զեկույցը 2004 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի /Օմբուդսմանի/ գործունեության, ինչպես նաև Հայաստանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ

123. Սույն զեկույցի 3-րդ գլխի 3–րդ մասը, որը վերաբերում էր խոշտանգումներից, և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից ազատ լինելու իրավունքին, ներառում էր դիմատուի հատուկ գործի մասին համառոտագիր: Համապատասխան քաղվածքներում նշվում է.

> «Այս իրավունքի խախտումները հիմնականում կապվում են անձին հանցանք կամ վարչական իրավախախտում կատարելու կասկածով կամ փաստով ոստիկանություն կամ քննչական մարմին բերման ենթարկելու, անազատության մեջ պահելու և հարցաքննությունների հետ:
>
> Ստացված դիմում-բողոքներում դիմումատուները պնդում են, որ ոստիկանությունում վերջ չի տրվել անհիմն բերման ենթարկելու, անազատության մեջ ապօրինի պահելու, այս կամ այն իրավախախտումը կատարած լինելու վերաբերյալ խոստովանական ցուցմունք կամ բացատրություն կորզելու, մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու, նաև բռնություններ կիրառելու արատավոր պրակտիկային:
>
> Այն քրեական գործերով, որոնցով նյութերի նախապատրաստումն իրականացվել է ոստիկանության կողմից, առկա են գործով անցնող անձանց բողոքներն այն մասին, որ խոստովանական բացատրություններ իրենք գրել են ապօրինի անազատության մեջ պահվելու պայմաններում և բռնության ու ահաբեկման ազդեցության տակ: Տվյալ անձանց կողմից այդ մասին հայտարարվում է ինչպես նախաքննության ընթացքում՝ նախաքննական մարմնին, այնպես էլ դատաքննության ընթացքում՝ դատարանին: Նման հաղորդումները, հայտարությունները ոչ միայն լիարժեք չեն ստուգվում իշխանությունների կողմից, այլ նաև կատարվում են լոկ ձևական քննչական գործողություններ և այն էլ փաստը ժխտելու նպատակով միայն:
>
> Հանրապետության գլխավոր դատախազին, մարզերի դատախազներին հասցեագրված նման բողոքներով առանձին վարույթ չի կազմվում: Հիմնականում բողոքի ստուգումը հանձնարարվում է գործը քննող քննիչին նույնիսկ այն դեպքում, երբ բողոքարկվում են հենց տվյալ քննիչի գործողությունները: Ծայրահեղ դեպքում, երբ բողոքի ստուգումը հանձնարարվում է դատախազական մեկ այլ ստորաբաժանման, դարձյալ չի երաշխավորվում բողոքի ստուգման օբյեկտիվությունը: Դատարանները դատաքննության ընթացքում շրջանցում և չեն քննարկում նման բողոքները:
>
> Նման գործերից առավել բնութագրական է Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ քրեական գործը:
>
> Գ. Վիրաբյանն առանց որևէ օրինական հիմքի [Արտաշատի ոստիկանության բաժին] բերման է ենթարկվել իրենց գյուղից [2004 թվականի ապրիլի 23–ին, ժամը 14:30-ին]: Ոստիկանության բաժնում ոստիկանության աշխատակիցը Վիրաբյանին վիրավորել, նվաստացրել, հայհոյել և հարվածել է: Չդիմանալով նվաստացումներին, Վիրաբյանն իր հերթին հարվածել է ոստիկանության այդ աշխատակցին: Այնուհետև ոստիկանությունում նրան հասցվել է մարմնական նվազ ծանր վնասվածք:
>
> Դատախազության կողմից քրեական գործ է հարուցվել Վիրաբյանի նկատմամբ՝ ոստիկանության աշխատակցին մարմնական վնասվածք հասցնելու համար: Քրեական գործով օրինական են համարվել ոստիկանության աշխատակցի բոլոր գործողությունները, և որևէ գնահատականի չի արժանացել այն փաստը, որ ոստիկանություն ապօրինի բերման ենթարկված Վիրաբյանը մարմնական վնասվածք ստացել է ոստիկանությունում անազատության մեջ պահվելու ընթացքում: Ավելին, ոստիկանության որևէ աշխատակից պատասխանատվություն չի կրել Վիրաբյանին նման վնասվածք հասցնելու համար:

Տվյալ դեպքին Պաշտպանի գնահատականը միանշանակ է՝ տեղի ունեցածը պետք է որակել որպես դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք Վիրաբյանի նկատմամբ, քանի որ հաստատության ղեկավարությունը պատասխանատու է հաստատություն տարված կամ հրավիրված անձի առողջության և անվտանգության համար: Այդ անձի վարքագիծը նման հաստատությունում հիմք չէ և չի արադարացնում նրան ծեծի ենթարկելը՝ հաստատության ղեկավարությունը և աշխատակիցներն ունեն նաև հանդուրժող լինելու պարտավորություն:

Տվյալ դեպքով Պաշտպանը հանդիպում է ունեցել ոչ միայն Վիրաբյանի, այլ նաև մարզի դատախազի, մարզի և բաժնի ոստիկանության ղեկավարության հետ: Անց է կացվել դեպքի հանգամանքների համատեղ քննարկում և ենթադրվել է, որ կապահովվի քննության օբյեկտիվությունը: Սակայն դրական տեղաշարժ չի նկատվել: Դա նկատի ունենալով, հանրապետության գլխավոր դատախազին առաջարկվել է գործի քննությունը հանձնարարել քննչական այլ մարմնի, ինչը բավարարվել է, և քննությունը հանձնարարվել է [Էրեբունի համայնքի դատախազությանը]: Սակայն այստեղ նույնպես դրական ոչինչ չի արվել՝ դարձյալ մեղադրվել է նույն Վիրաբյանը: Արդեն իսկ կազմված է եղել մեղադրական եզրակացություն գործը դատարան ուղարկելու համար: Պաշտպանի միջամտությունից հետո է միայն, որ հանրապետության գլխավոր դատախազի ցուցումով կարճվել է գործի վարույթը:»

124. Այդ զեկույցի 3.4 և 3.5 գլուխներում, որոնք վերաբերում էին ազատ տեղաշարժման իրավունքին և ժողովներ անցկացնելու իրավունքին, պարունակվում էին հետևյալ մասերը.

«**3.4 Ազատ տեղաշարժման իրավունք**

Պաշտպանի գործունեության սկիզբը համընկել է 2004 թվականի մարտ-ապրիլ ամիսներին հանրապետությունում անցկացվող հանրահավաքների ժամանակաշրջանի հետ:

Ընդդիմության հանրահավաքները, որպես ընտրողների հետ հանդիպումներ, սկսվել և անց են կացվել տարբեր մարզերում դեռևս փետրվարի սկզբներից: Իշխանությունների միջամտություն նման հանրահավաքներին չի եղել:

Իշխանությունների առաջին միջամտությունը հանրահավաքներին տեղի ունեցավ մարտի վերջին Գյումրի քաղաքում, որի արդյունքում ձերբակալվեցին հանրահավաքի մասնակիցներ, հարուցվեցին քրեական գործեր: ...

Ապրիլին մայրաքաղաքում անցկացված հանրահավաքների առնչությամբ Պաշտպանը ոստիկանության գործողություններում արձանագրել է մարդու իրավունքների մի շարք խախտումներ:

Հանրահավաքների օրերին արձանագրվել են մարզերից դեպի մայրաքաղաք հասարակական տրանսպորտի տեղաշարժի սահմանափակումներ ոստիկանության կողմից, որով խախտվել է հանրապետությունում քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը: ...

Այդ օրերին հաճախակի են դարձել վարչական իրավախախտումների համար անձանց ոստիկանության բաժիններ բերման ենթարկելու և դատարանի որոշմամբ վարչական կարգով կալանավորելու դեպքերը:

Նման գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նաև չարաշահվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության պահանջները՝ «զազրախոսությունը» գնահատվել է որպես վարչական կարգով անձին կալանքով պատժելու հիմք: ...

3.5 Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք

Պաշտպանի կողմից դատարաններից վերցվել և ուսումնասիրվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ մի շարք գործեր: Դրանց տվյալների ամփոփման արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին և, ակնհայտ համարելով տվյալ գործերով պաշտոնական դիրքի չարաշահումներ թույլ տրված լինելու հանգամանքը, առաջարկվել է դնել մեղավորների պատասխանատվության հարցը: Պաշտպանի հայտնաբերած փաստերի մի մասն անջատվել և ուղարկվել է Արմավիրի մարզի դատախազին՝ ստուգելու և ընթացք տալու: Մարզի դատախազը

հետագայում հաղորդել է, որ հանցագործության դեպք չի հաստատվել: Որոշ ոչ էական խախտումների համար ոստիկանության համապատասխան աշխատակիցները ստացել են դիտողություն:»

Բ. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 1374 (2004) բանաձևը Հայաստանի պարտականությունների և հանձնառությունների կատարման մասին 2004 թվականի ապրիլի 28

125. Բանաձևից համապատասխան քաղվածքներում նշվում է.

«1. 2004թ. մարտ ամսվա վերջից սկսած Հայաստանում ընդդիմադիր ուժերը կազմակերպել էին մի շարք բողոքի ցույցեր՝ կոչ անելով անցկացնել «վստահության հանրաքվե» Նախագահ Քոչարյանին: Նման հանրաքվեի հնարավորության մասին առաջին անգամ հիշատակել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը 2003 թվականի փետրվար և մարտ ամիսների նախագահական ընտրություններից հետո: Հետագայում Սահմանադրական դատարանը պարզաբանեց իր առաջարկը, եւ ընդդիմության պահանջներն ու բողոքի ցույցերն իշխանությունները որակեցին որպես բռնի իշխանափոխության փորձ:

2. Չնայած հանրահավաքները հայտարարված էին, դրանք թույլատրված չէին իշխանությունների կողմից, որոնք սպառնում էին քրեական գործ հարուցել կազմակերպիչների դեմ: Ապրիլի 5-ի հանրահավաքից հետո գլխավոր դատախազը դատական գործ հարուցեց ընդդիմության որոշ ներկայացուցիչների դեմ՝ ընդդիմության կուսակցությունների հանրահավաքների կապակցությամբ, եւ ավելի շատերը ձերբակալվեցին: Նույն ժամանակ անհայտ անձինք ծեծի են ենթարկել մի քանի լրագրողների և քաղաքական գործիչների, մինչդեռ ներկա ոստիկանները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել:

3. Ապրիլի 9-ին, 10-ին եւ 12-ին Երեւանում տեղի ունեցան նոր հանրահավաքներ: Ապրիլի 13-ին՝ վաղ առավոտյան, օրինապահ մարմինները բռնությամբ ցրել են 2000-3000 ցուցարարների, ովքեր փորձում էին շարժվել դեպի նախագահական նստավայրպահանջելով Նախագահ Քոչարյանի հրաժարականը: Մեր տեղեկությունների համաձայն՝ ոստիկանները կիրառել են մահակներ, ջրցան մեքենաներ եւ արցունքաբեր գազ՝ արդյունքում պատճառելով տասնյակ վնասվածքներ: Մի շարք ցուցարարներ ձերբակալվել են, այդ թվում՝ Խորհրդարանի պատգամավորներ, ներառյալ՝ Վեհաժողովի անդամներ, ընդ որում, կալանավայրում ոմանք ենթադրաբար ոչ պատշաճ վերաբերմունքի են արժանացել ոստիկանության կողմից: Անվտանգության ուժերը նաեւ ֆիզիկական ուժ են կիրառել ընդդիմության հանրահավաքը լուսաբանող որոշ լրագրողների նկատմամբ եւ ձերբակալել նրանց:

4. Հայաստանում լարվածությունը շարունակում է մնալ բարձր: նոր բողոքի ցույցեր են նախատեսված ապրիլի 26-ից սկսած շաբաթվա ընթացքում: Մինչ այդ, իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխոսության բավարար հիմքեր կարծես չկան, չնայած որ որոշ առաջարկներ արվել են, եւ իշխող մեծամասնության որոշ անդամներ, մասնավորապես ՀՀ խորհրդարանի խոսնակը, սկսել են քննադատել հանրահավաքների բռնի կասեցումները:

5. Իշխանությունների գործելակերպի առնչությամբ՝ Խորհրդարանական վեհաժողովը ... մասնավորապես մտահոգություն է հայտնել հետեւյալ փաստի շուրջ.

i. Ձերբակալություններով, այդ թվում Վարչական իրավախախտումների օրենսգրքի հիման վրա, անտեսվել են վարչական կալանքի պրակտիկային անհապաղ վերջ տալու եւ այդ պրակտիկայի համար իրավական հիմք ծառայող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը փոփոխելու պահանջը...

9. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝ ...

iii. թափանցիկ եւ վստահելի ձեւով անհապաղ հետաքննել վերջին իրադարձությունների ընթացքում արձանագրված միջադեպերը եւ մարդու իրավունքների ոտնահարումները...

iv. անհապաղ ազատ արձակել հանրահավաքներում մասնակցելու համար ձերբակալված անձանց եւ անհապաղ դադարեցնել վարչական կալանքների պրակտիկան եւ համապատասխանաբար փոփոխել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը ...»

Գ. ԵԽԽՎ Կոմիտեի զեկույցը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների պարտականությունների և հանձնառությունների կատարման վերաբերյալ վերաբերյալ, 10163, 2004 թվականի ապրիլի 27

126. Զեկույցը բացատրական հուշագիր է պարունակում ԵԽԽՎ 1374 բանաձևի նախագծի վերաբերյալ: Բացատրական հուշագրից համապատասխան քաղվածքներում նշվում է.

«Մարտ ամսվա վերջից սկսած Հայաստանում ընդդիմադիր ուժերը կազմակերպել էին մի շարք բողոքի ցույցեր՝ կոչ անելով անցկացնել «վստահության հանրաքվե» Նախագահ Քոչարյանին: Նման հանրաքվեի հնարավորության մասին առաջին անգամ հիշատակել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն անցյալ տարվա փետրվար եւ մարտ ամիսների նախագահական ընտրություններից հետո: ...

Հայաստանի իշխանություններն ընդդիմության՝ բողոքի ակցիաներ անցկացնելու կոչին արձագանքեցին քաղաքական ահաբեկումներով, ինչպես նաև վարչական և դատական ճնշումներով: Երբ սկսվեցին բողոքի ակցիաները, արձագանքն ավելի դաժան էր: Ցույցերը դաժանորեն ցրվեցին, լրագրողները ծեծի ենթարկվեցին, ընդդիմության մի շարք անդամներ ձերբակալվեցին և ընդդիմադիր կուսակցությունների տարածքները զավթվեցին ոստիկանության կողմից:

...

2004 թվականի հունվարին, Վեհաժողովն ընդունեց 2001 թվականի հունվարին Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությունից հետո երկրորդ մոնիտորինգի զեկույցը: Այս առիթով ընդունված թիվ 1361 բանաձևում նշվում են վերջին երկու տարվա ընթացքում տեղի ունեցած որոշ հուսադրող զարգացումները...

Այնուամենայնիվ, բանաձևում խիստ քննադատության են ենթարկվում 2003 թվականին անցկացված [նախագահական և խորհրդարանական] ընտրությունները: Ավելին, դրանում թվարկվում են Հայաստանի իշխանությունների՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ վարքագծի վերաբերյալ մի շարք լուրջ մտահոգություններ, և արտահայտվում են ակնկալիքներ, որ այս խնդիրները արագորեն կլուծվեն, Եվրոպայի խորհրդի չափանիշների և սկզբունքների համաձայն:

Ցավոք, [2004 թվականի] մարտին և ապրիլին տեղի ունեցած իրադարձություններին Հայաստանի իշխանությունների արձագանքը ցույց է տալիս, որ անտեսվել է Վեհաժողովի՝ ավելի մեծ առաջընթաց ապահովելու պահանջը, և որ Վեհաժողովի որոշ հիմնական մտահոգությունների մասով իրավիճակը նույնիսկ վատթարացել է:

Վարչական կալանքը

Վարչական կալանքի խայտառակ և շարունակական կիրառման առումով, թիվ 1361 բանաձևում իշխանություններին կոչ է արվում փոփոխել Վարչական օրենսգիրքը՝ կազմակերպության չափանիշներին չհամապատասխանող այս պրակտիկային վերջ դնելու համար: Վեհաժողովը նաև իշխանություններին կոչ է արել նոր նախագիծը Եվրոպայի խորհրդի ուսումնասիրությանը ներկայացնել մինչև 2004 թվականի ապրիլ ամիսը:

Այս պրակտիկային անհապաղ վերջ դնելու և դրանից հետո անհրաժեշտ օրենսդրական նախագծերը պատրաստելու փոխարեն Հայաստանի իշխանությունները վերջին իրադարձությունների ընթացքում դիմեցին վարչական կալանքների լայնածավալ կիրառությանը: Չնայած որ դժվար է հաստատել ձերբակալված անձանց հստակ թիվը և նրանց կալանքի համար կիրառվող իրավական հիմքը, բազմաթիվ զեկույցներում նշվում է, որ դրանց թիվը տատանվում է երկուսից մինչև երեք հարյուրի միջև:

Վեհաժողովը նորից պահանջում է անհապաղ վերջ դնել վարչական կալանքի պրակտիկային: Վարչական օրենսգիրքը պետք է վերանայվի առանց հետագա հապաղման: ...

... Ցավոք, ըստ «Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպության, վերջին իրադարձությունների ընթացքում բազմաթիվ ձերբակալված անձինք ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում ոստիկանության կողմից ոտնձգությունների են ենթարկվել: Այս պնդումները պետք է քննվեն արագ, թափանցիկ և վստահելի կարգով, և եթե հաստատվի դրանց հավաստիությունը, պատասխանատու անձինք պետք է պատժվեն օրենքի համաձայն:»

Դ. «Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպության 2004 թվականի մայիսի 4–ի ամփոփագիրը. Ճնշումների շրջանը. Հայաստանում մարդու իրավունքների ոտնահարումները

127. Ամփոփագրից համապատասխան քաղվածքներում նշվում է.

«Ամփոփում

2004 թվականի մարտի վերջին, Հայաստանի միացյալ քաղաքական ընդդիմությունը խաղաղ բողոքի ակցիաներ անցկացրեց՝ նախագահ Քոչարյանի «վստահության հանրաքվեի» անցկացումը պարտադրելու և նրա հրաժարականի կոչ անելու համար: Ի պատասխան, Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ զանգվածային ձերբակալություններով, ցույցերի դաժան ցրմամբ, քաղաքական կուսակցությունների շտաբերի զավթմամբ, լրագրողների դեմ ճնշմամբ և ցույցերին մարդկանց մասնակցությունը կանխելու համար փոխադրման սահմանափակումներով գործողությունների՝ քաղաքական ընդդիմությանը հասարակության աջակցությունը դադարեցնելու նպատակով: Կալանավորվեցին հարյուրավոր մարդիկ, շատերը մինչև տասնհինգ օր, իսկ ոմանք էլ ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում ենթարկվեցին խոշտանգումների, կամ նրանց նկատմամբ ցուցաբերվեց վատ վերաբերմունք...

Ընդդիմության պահանջների համար հիմք էր հանդիսացել այն, որ պետությունը չէր ուղղել 2003 թվականի խորապես խեղաթյուրված նախագահական ընտրությունների արդյունքները, որոնցում հաղթել էր գործող նախագահ Քոչարյանը: Մտահոգիչ է այն, որ պետությունն այժմ կրկին գործում է անցյալ տարվա ընտրություններին հաջորդած ճնշումների գործելակերպով, էլ ավելի ուժգնացնելով ճնշումները: Այդ ժամանակ միջազգային հանրությունը Հայաստանի կառավարությանը զգուշացրել էր, որ պետք է դադարեցվեն ընդդիմության ահաբեկումները ձերբակալությունների և վարչական կալանավորումների միջոցով: Այնուամենայնիվ, 2004 թվականի մարտ և ապրիլ ամիսներին Հայաստանի կառավարությունը ոչ միայն սկսեց կալանավորումների նոր ալիք, այլև ուժգնացրեց ահաբեկումները անվտանգության ուժերի կոմից գործադրվող բռնությունների միջոցով: ...

«Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունը կոչ է անում Հայաստանի իշխանություններին դադարեցնել քաղաքական ընդդիմության ահաբեկումները, վերջ դնել ցուցարարների դեմ անհամաչափ ուժի գործադրմանը և ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերին, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել այդ ոտնձգությունների համար պատասխանատուներին: Մենք միջազգային հանրությանը կոչ ենք անում աջակցել Հայաստանի կառավարությանն այս իրավիճակը անհապաղ շտկելու հարցում և ապահովել, որ հետագայում նման ճնշումներ չկրկնվեն: ...

Ապրիլի 12-ի և 13-ի նախապատմությունը

2004 թվականի մարտի վերջին, հիմնական ընդդիմադիր խմբերից երկուսը՝ «Արդարություն» դաշինքը, որում ընդգրկված է ինը կուսակցություն, այդ թվում՝ «Հանրապետություն» կուսակցությունը և «Ժողովրդական կուսակցությունը», և «Ազգային միաբանություն» կուսակցությունը համախմբել են իրենց ուժերը և հայտարարել համալիր գործողությունների ծավալման մասին: Այս քայլից հետո ընդդիմությունն էլ ավելի է ակտիվացրել իր ջանքերը՝ հետագա հայտարարություններով և Հայաստանի մարզերի համախմբմամբ: Իշխանությունները դրան արձագանքեցին տեղաշարժման ազատության սահմանափակմամբ, կալանավորումներով և ընդդիմության արշավի կազմակերպիչների դեմ քրեական մեղադրանքների սպառնալիքներով: ...

Սկսած [ապրիլի 5-ից] Երևանում աստիճանաբար աճում էր հանրահավաքների, ինչպես նաև ընդդիմության՝ կալանավորված կամ այլ կերպ ահաբեկված համակիրների թիվը: «Հանրապետություն» կուսակցությունը գնահատել է, որ մարտից մինչև ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում իր ավելի քան 300 համակիրների ոստիկանությունը կալանավորել, խուզարկել կամ նրանց նկատմամբ ճնշումներ է գործադրել: ...

Դեպի Երևան գալու սահմանափակումները

2004 թվականի մարտի վերջից մինչև ապրիլի կեսն ընկած ժամանակահատվածում ոստիկանությունը սահմանափակել է դեպի Երևան հանրահավաքներին մասնակցելու նպատակով գալու փորձեր անող ընդդիմության համակիրների տեղաշարժը՝ ճանապարհները փակելով, ավտոմեքենաները կանգնեցնելով, ուղևորներին հարցաքննելով և չթույլատրելով նրանց տեղաշարժը, ում կասկածում էր ընդդիմության համակիր լինելու մեջ: ...

[Ապրիլի 5-ի] առավոտյան, ժամը [10:30-ից 12:00-ն] ընկած ժամանակահատվածում ոստիկանությունն անցակետում կանգնեցրել է «Ազգային միաբանություն» կուսակցության ինն անդամների երեք ավտոմեքենաներն այն պահին, երբ նրանք Հայաստանի երրորդ ամենամեծ քաղաքից՝ Վանաձորից, հիմնական ճանապարհով ուղղևորվում էին դեպի Երևան: Նրանք մտադիր էին մասնակցել Երևանում [ժամը 3-ին] անցկացվելիք հանրահավաքին: Ոստիկանությունն ինը տղամարդկանց պահել է Վանաձորի ոստիկանության բաժնում, ասելով, թե «մենք ձեզ փրկել ենք Երևանում ծեծի ենթարկվելուց»: Ոստիկանությունը տղամարդկանցից երեքին տարել են տեղական դատարաններ, որոնք նրանց դատապարտել են հինգ-օրյա վարչական կալանքի՝ ոստիկանության աշխատակիցների հրահանգներին չենթարկվելու համար: ...

Կալանավորումները. Պատշաճ ընթացակարգի խախտումները և խոշտանգումները

Դժվար է գնահատել 2004 թվականի ապրիլի սկզբից կալանավորված ընդդիմության համակիրների ընդհանուր թիվը: Ապրիլի 17-ի դրությամբ «Արդարություն» դաշինքն արձանագրել էր ընդդիմության 327 համակիրների կալանավորում, իսկ «Հանրապետություն» կուսակցությունը գնահատել էր, որ իր կուսակցության մոտավորապես 300 անդամ կա՛մ կալանավորվել էին, կա՛մ ճնշումների, կա՛մ էլ խուզարկությունների էին ենթարկվել...

[Ընդդիմության որոշ համակիրներ] կալանավորվել էին և պահվել մի քանի ժամից մինչև տասնհինգ օր: Շատերը պահվել էին և հետո ազատ արձակվել առանց որևէ փաստաթղթի կամ արձանագրության այն մասին, որ երբևէ ձերբակալություն է տեղի ունեցել: Այլոք տարվել էին դատարան և Վարչական օրենսգրքով նրանց նկատմամբ նշանակվել էր մինչև տասնհինգ օրվա տույժ՝ աննշան իրավախախտումներ կատարելու համար: ...

Ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում խոշտանգումները և վատ վերաբերմունքը

«Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունը փաստագրել է 2004 թվականի ապրիլին ընդդիմության դեմ պետության կողմից հաշվեհարդարների ընթացքում ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում խոշտանգումների և վատ վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր: Ընդդիմության կուսակցությունների անդամները պնդում են, թե այս ժամանակահատվածում ոստիկաններն իրենց համակիրներին ոստիկանությունում պահելու ժամանակ ծեծի են ենթարկել: «Շատ դեպքեր են եղել, երբ մարդիկ, հատկապես մարզերից եկող անձինք կալանավորվելուց հետո ոստիկանությունում ծեծի են ենթարկվել» [ասել է «Ժողովրդական կուսակցության» մամլո քարտուղարը]...»

Ե. Եվրոպա և Կենտրոնական Ասիա «Ամնեսթի ինթերնեշնլ» (Amnesty International) կազմակերպության՝ տարածաշրջանում մտահոգիչ խնդիրների վերաբերյալ ամփոփագիրը, 2004 թվականի հունվարից հունիս ամիսներ

128. Զեկույցը պարունակում է Հայաստանին նվիրված գլուխ, որից համապատասխան քաղվածքներում նշվում է.

«[2004] թվականի ապրիլին ընդդիմության ցույցերը տեղի են ունեցել նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը պահանջող ընդդիմադիր կուսակցությունների կողմից ձեռնարկված զանգվածային բողոքների երկամսյա արշավի շրջանակներում: ... Ըստ տեղեկությունների, արշավի ընթացքում ընդդիմության հարյուրավոր համակիրներ, ներառյալ ընդդիմադիր կուսակցությունների ակնառու անդամներ կամայականորեն կալանքի տակ են վերցվել ամբողջ երկրով մեկ, իսկ տասնյակ մարդիկ արդար դատավարության միջազգային չափանիշներից շատ հեռու դատաքննություններով դատապարտվել են 15-օրյա վարչական կալանքի ...»

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

129. Դիմումատուն բողոքելէ, որ նա ենթարկվել է խոշտանգումների Արտաշատի ոստիկանության բաժնում 2004 թվականի ապրիլի 23–ին և որ մարմինները չեն իրականացրել արդյունավետ քննություն վատ վերաբերմունքի իր պնդումների առումով: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 3–րդ, 8–րդ և 13–րդ հոդվածները: Դատարանը գտնում է, որ դիմումատուի բողոքները պետք է քննվեն բացառապես Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հիման վրա, որով սահմանվում է, որ՝

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Ընդունելիությունը

1. Վեց ամիս

ա) Կողմերի փաստարկները

(i) Կառավարությունը

130. Կառավարությունը պնդելէ, որ դիմումատուն Կոնվենցիայի 3–րդ հոդվածի համաձայն չի ներկայացրել իր բողոքները վերջնական որոշումը կայացնելու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում՝ Կոնվենցիայի 35–րդ հոդվածի 1–ին կետի իմաստով: Ավելի կոնկրետ, դիմումատուն ՔԴՕ–ի 290–րդ հոդվածի համաձայն (տե՛ս վերոնշյալ § 114) իրավունք ուներ բողոքարկելու հետաքննություն իրականացնող մարմինների որոշումները ներպետական դատարաններում: Դիմումատուն արդյունավետորեն օգտվել է այս իրավունքից՝ դիմելով երկու տարբեր վարույթ հարուցելու համար՝ առաջինով բողոքարկվում էր 2004 թվականի հունիսի 7–ի՝ վատ վերաբերմունքի մասին իր պնդումները մերժող քննիչի որոշումը, իսկ երկրորդով բողոքարկվում էր 2004 թվականի օգոստոսի 30–ի՝ իր նկատմամբ քրեական վարույթը կարճելու վերաբերյալ դատախազի որոշումը: Վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկվի առաջին վարույթում՝ վճռաբեկ դատարանի կողմից սեպտեմբերի 24–ին կայացրած վերջնական որոշման ամսաթվից սկսած: Ուստի, դիմումը՝ որը Դատարան է ներկայացվել միայն 2005 թվականի նոյեմբերի 10–ին, եղել է սահմանված ժամկետի խախտմամբ: Կառավարությունը վիճարկել է, որ դիմումատուի հայտարարությունը այն մասին, որ վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկվի երկրորդ վարույթում կայացված վերջնական որոշման ամսաթվից՝ 2005 թվականի մայիսի 15–ից սկսած, անհիմն էր, քանի որ այդ վարույթը վերաբերում էր այլ հարցի, այն է՝ քրեական վարույթի կարճմանը, և այդ վարույթներում Դատարանի կայացրած որոշումներից և ոչ մեկը չէր վերաբերվում դիմումատուի՝ վատ վերաբերմունք

ցուցաբերած հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց նկատմամբ քրեական վարույթ հարուցելու պահանջին, ինչպես նաև դրանք չէին պարունակում որևէ եզրակացություն վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առումով:

(ii)Դիմումատուն

131. Դիմումատուն բողոքարկել է կառավարության պնդումը: Նա ընդունել է, որ հարուցել էր երկու վարույթ, որոնք հանգեցրել էին վճռաբեկ դատարանի կողմից երկու վերջնական որոշումների կայացմանը՝ համապատասխանաբար 2004 թվականի սեպտեմբերի 24–ին և 2005 թվականի մայիսի 13–ին: Այնուամենայնիվ, իր կողմից Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազին 2004 թվականի հունիսի 2–ին ներկայացված բողոքը և համապատասխանաբար այդ բողոքի առումով դատախազի կայացրած որոշման դեմ իր հարուցած առաջին վարույթը, որը կարճվեց վճռաբեկ դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 24–ի որոշմամբ, արդյունավետ միջոց չհանդիսացան: Ավելի կոնկրետ, դատախազը մերժել է բողոքը ընդամենը հինգ օր հետո՝ 2004 թվականի հունիսի 7–ին՝ չանցկացնելով վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առումով որևէ պաշտոնական կամ անկախ հետաքննություն, և եզրակացություններ անելիս, հիմք ընդունելով միայն իր դեմ քրեական գործի համատեքստում անցակցված նախաքննության արդյունքները: 2004 թվականի հունիսի 7–ի որոշման դեմ դատարաններ ներկայացրած իր բողոքները նույնպես անարդյունավետ էին, քանի որ դատարանները մերժել են դրանց ըստ էության քննությունը՝ հիմք ընդունելով այն, որ բողոքարկված որոշումը ընթացակարգային որոշում էր, և նրանք իրավասու չէին քննելու այն: Նման հանգամանքներում, թե՛ դատախազի 2004 թվականի հունիսի 7–ի որոշումը և թե՛ վճռաբեկ դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 24–ի որոշումը չէին կարող համարվել «վերջնական որոշում» 35–րդ հոդվածի 1–ին կետի իմաստով:

132. Մյուս կողմից, իր դեմ իրականացվող դատավարությամբ հնարավոր է եղել ապահովել փոխհատուցում իր նկատմամբ կատարված՝ 3–րդ հովածի խախտումների առումով: Այսպիսով, նա դիմել է իրավական պաշտպանության այս միջոցի կիրառմանը՝ ներկայացնելով բողոք դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30–ի նրա նկատմամբ քրեական վարույթը կարճելու մասին որոշման դեմ: Քանի որ նա երբեք չէր հերքել, որ նա հարվածել էր ոստիկանության աշխատակցին բջջային հեռախոսի լիցքավորման սարքով, դատավարության ժամանակ միակ հարցը այն էր, թե արդյոք նա գործել էր ինքապաշտպանության նպատակով, ինչպես նա շարունակաբար պնդում էր: Եթե նրա բողոքը բավարարվեր, ապա նա կստանար պաշտպանության արդյունավետ միջոց, ինչպես օրինակ՝ այն փաստի պաշտոնական ճանաչում, որ նա հարվածել էր ոստիկանության աշխատակցին ինքնապաշտպանության նպատակով, ինչն էլ անկասկած կհանգեցներ այն եզրակացության, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում նրա նկատմաբ դրսևորվել էր վատ վերաբերմունք: Քանի որ դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30–ի որոշման դեմ իր բողոքի վերաբերյալ վերջնական որոշումը կայացվելէր վճռաբեկ դատարանի կողմից 2005 թվականի մայիսի 13–ին, նա հետևեց վեցամսյա ժամկետի մասին կանոնին՝ ներկայացնելով դիմումը 2005 թվականի նոյեմբերի 10–ին:

բ) Դատարանի գնահատականը

133. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 35–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն Դատարանը կարող է քննել գործը միայն այն դեպքում, երբ դա ներկայացվել է վերջնական որոշման ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու ընթացքում (տե՛ս *Danov v. Bulgaria*, թիվ 56796/00, § 56, 2006 թվականի հոկտեմբերի 26):

134. Վեցամսյա ժամկետի կանոնի նպատակն է նպաստել օրենքի կիրարկմանը, ապահովել, որ Կոնվենցիայի համաձայն խնդրահարույց գործերը քննվեն պատշաճ ժամկետներում, ինչպես նաև պաշտպանել մարմիններին և այլ անձանց անորոշության մեջ երկար ժամանակահատվածով մնալուց (տե՛ս *İçöz v. Turkey* (որոշում), թիվ 54919/00, 2003 թվականի հունվարի 9, և *P.M. v. the United Kingdom* (որոշում), թիվ 6638/03, 2004 թվականի օգոստոսի 24):

135. Պետք է սպառվեն միայն այն պաշտպանական միջոցները, որոնք առկա և բավարար են ենթադրվող խախտումների առումով փոխհատուցում ապահովելու համար, և դրանց մեջ չեն ընդգրկվում այն միջոցները, որոնք ոչ պատշաճ են կամ անարդյունավետ (տե՛ս *Aksoy v. Turkey*, 1996 թվականի դեկտեմբերի 18, § 52, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996-VI): Ավելին, այն դեպքում, երբ դիմումատուն օգտվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցից և հետագա փուլում պարզ է դառնում, որ այս միջոցը արդյունավետ չէր, Կոնվենցիայի 35 րդ հոդվածի 1–ին կետով նախատեսված վեցամսյա ժամկետը պետք է գործնականում հաշվարկվի այն պահից սկսած, երբ դիմումատուին տեղեկացնում են, կամ նա պետք է տեղեկացվի պաշտպանության միջոցի անարդյունավետության մասին (տես, ի թիվս այլոց, *Bulut and Yavuz v. Turkey* (որոշում), թիվ 73065/01, 2002 թվականի մայիսի 28, *İçöz*, վերևում մեջբերված, և *Chitayev and Chitayev v. Russia*, թիվ 59334/00, § 117, 2007 թվականի հունվարի 18):

136. Դատարանը նշում է, որ ենթադրյալ վատ վերաբերմունքից տուժածների համար Հայաստանի օրենքով նախատեսվում է իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես, ՔԴՕ–ի 176–րդ հոդվածով նման տուժածներին իրավունք է ընձեռնվում տեղեկացնելու համապատասխան մարմիններին կատարված հանցագործության մասին, այդ թվում՝ վատ վերաբերմունք ներառող ցանկացած գործողության մասին: ՔԴՕ–ի 177–րդ հոդվածի համաձայն, նման տեղեկությունները կարող են տրամադրվել բանավոր կամ գրավոր, իսկ ՔԴՕ–ի 181–րդ հոդվածի համաձայն պահանջվում է, որ յուրաքանչյուր դեպքի համար, երբ նման տեղեկությունը տրամադրվում է, քրեական վարույթ հարուցելու կամ հարուցումը մերժելու առումով կայացվի լավ հիմնավորված որոշում: Եթե բավարար հիմքեր կան քրեական վարույթ հարուցելու համար, ապա ՔԴՕ–ի 175–րդ և 182–րդ հոդվածներով մարմիններից պահանջվում է հարուցել վարույթ: Եթե մարմինները որոշում են մերժել քրեական վարույթի հարուցումը, ապա նման որոշումը կարող է բողոքարկվել դատարաններում ՔԴՕ–ի 185–րդ հոդվածի համաձայն, իսկ եթե դատարանները բեկանում են նման որոշումը, ապա դատախազը պարտավորվում է հարուցել քրեական վարույթ:

137. Դիմումատուն օգտվել է իրավական պաշտպանության այս միջոցից՝ տեղեկացնելով մարմիններին իր նկատմամբ ոստիկանության աշխատակցի կողմից

դրսևորած ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին իր 2004 թվականի ապրիլի 25–ի ցուցմունքի մեջ, որը կազմվել էր ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորելուց միայն երկու օր հետո (տե՛ս վերոնշյալ § 36): Ավելին, դրան հաջորդել են պետական մարմիններին ուղղված մի շարք այլ նամակներ, որոնցով պահանջ էր ներկայացվել քրեական վարույթ հարուցել իր նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևորած հանցագործություն կատարած անձանց նկատմամբ (տե՛ս § 45, 53 և 57), և որոնց հետևեց պետական մարմիններին 2004 թվականի հունիսի 2–ի բողոքը, որով դիմումատուն հատկապես վկայակոչել է ՔԴՕ–ի համապատասխան հոդվածները, ներառյալ՝ 181–րդ և 182–րդ հոդվածները (տե՛ս վերոնշյալ § 61):

138. Այնուամենայնիվ, մարմինների կողմից պաշտոնական որոշում չի չկայացվել քրեական վարույթ հարուցելու կամ քրեական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ, ինչպես պահանջվում է ՔԴՕ–ի 181–րդ հոդվածով, որը հետագայում դիմումատուի կողմից դատարաններում կարող էր բողոքարկվել ՔԴՕ–ի 185–րդ հոդվածի համաձայն: Փոխարենը, չպարզված պատճառներով, դիմումատուի 2004 թվականի հունիսի 2–ի բողոքը քննվել է քննիչի կողմից՝ որպես քրեական վարույթի շրջանակներում նրա նկատմամբ բերված միջնորդություն, և 2004 թվականի հունիսի 7–ին որոշում է կայացվել այդ միջնորդությունը մերժելու մասին՝ դրանով, ըստ էության, մերժելով նրա՝ վատ վերաբերմունքի մասին պնդումները (տե՛ս վերոնշյալ §§ 61 և 62): Դիմումատուն փորձ է արել բողոքարկել որոշումը դատարաններում, բայց նրա բողոքները ըստ էության չեն քննվել այն հիմքով, որ բողոքարկվող որոշումը ընթացակարգային էր, և դատարանները իրավասու չէին այն քննելու համար (տե՛ս վերոնշյալ § 74):

139. Նման հանգամանքներում ՔԴՕ–ի վերոնշյալ հոդվածների համաձայն դիմումատուի համար մատչելի իրավական պաշտպանության միջոցը անարդյունավետ է դարձել, մինչդեռ քննիչի՝ 2004 թվականի հունիսի 7–ի որոշման դեմ նրա դիմումով հարուցված դատական վարույթներով հնարավոր չեղավ ապահովել փոխհատուցում: Այսպիսով, Կառավարության պնդմամբ, դատարանի կողմից այս վարույթում 2004 թվականի սեպտեմբերի 24–ին կայացված վերջնական որոշումը չի կարող հաշվի առնվել վեցամսյա ժամկետը հաշվարկելիս:

140. Այնուհետև Դատարանը նշում է, որ դիմումատուն փաստել է, որ իր համար կար իրավական պաշտպանության մեկ այլ միջոց ևս, այն է՝ վատ վերաբերմունքի մասին իր պնդումները իր դեմ դատավարության ընթացքում ներկայացնելը: Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը՝ պնդելով, որ դատավարությունը ընդհատելու մասին դատախազի որոշման դեմ դատարաններ ներկայացված դիմումատուի բողոքները իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չէին սպառման համար: Այս առումով դատարանը նկատում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը պետք է կիրառվի որոշակի ճկունությամբ և առանց ավելորդ ձևականության: Դատարանն արդեն վճռել է մի քանի գործերում, որ սպառման կանոնը ո՛չ բացարձակ է, ո՛չ էլ կարող է կիրառվել ավտոմատ կերպով. Այն պարտադիր կերպով պետք է կապված լինի առանձին դեպքի հանգամանքների հետ (տե՛ս *Akulinin and Babich v. Russia*, թիվ 5742/02, § 30, 2008 թվականի հոկտեմբերի 2, և *Vladimir Fedorov v. Russia*, թիվ 19223/04, § 40, 2009 թվականի հուլիսի 30):

141. Այս դեպքում, ինչպես արդեն նշվել է վերևում, ենթադրյալ վատ վերաբերմունք պարունակող հանցանք կատարած անձանց նկատմամբ քրեական վարույթ հարուցելու վերաբերյալ բողոքն ըստ էության քննվել է իր նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում, այլ ոչ թե որպես առանձին հարց, և հանգեցրել է այս վարույթի համատեքստում քննիչի կողմից՝ 2004 թվականի հունիսի 7-ին որոշման կայացմանը: Նույնիսկ վճռաբեկ դատարանը, մերժելով այդ որոշման դեմ դիմումատուի բողոքի ըստ էության քննությունը, նշել է, որ առանձին վարույթ հարուցելու կարիքը չկա, քանի որ վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումները սերտորեն կապված են նրա նկատմամբ հարուցված քրեական գործի էության հետ և պետք է քննվեն այդ համատեքստում (տե՛ս վերոնշյալ § 84): Ավելին, ինչպես ադեն նշվել է վերևում, դիմումատուի բողոքի մասով նման գործողությունները հնարավորություն չեն տվել, որ նա հարցը դատարան ներկայացնի վերաքննության կարգով, որը նախատեսված է միայն այն դեպքերի համար, որոնց դեպքում քրեական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացվում է ՔԴՕ-ի 181-րդ հոդվածի համաձայն: Այսպիսով, դատարանը համարում է, որ գործին հատուկ հանգամանքներում, զրկվելով գործի դատական կարգով վերանայման որևէ այլ ձևից, դիմումատուն չի կարող մեղադրվել նրանում, որ վատ վերաբերմունքի իր պնդումների առումով նա փորձել է ստանալ դատական պաշտպանություն՝ այդ պնդումները ներկայացնելով իր նկատմամբ հարուցված դատավարության ընթացքում (տե՛ս համապատասխան փոփոխություններով, *Akulinin and Babich*, վերևում մեջբերված, §§ 25–34, և *Vladimir Fedorov*, վերևում մեջբերված, §§ 41–50):

142. Ավելին, Դատարանը այն կարծիքին է, որ սկզբունքորեն դիմումատուի կողմից կիրառվող սպառման այս եղանակը չի եղել առերևույթ ապարդյուն փորձ փոխհատուցում ստանալու համար: Մասնավորապես, քանի որ դիմումատուի նկատմամբ դատավարությունը ընդհատվել է դատախազի որոշմամբ, նրա վերաբերյալ քրեական գործը առաջին անգամ ներկայացվել է դատարաններին այդ որոշման դեմ նրա կողմից բողոք ներկայացվելուց հետո: Դատարաններին ներկայացված իր բողոքի մեջ, դիմումատուն, ի թիվս այլոց, բողոքել է իր նկատմամբ վատ վերաբերմունքի և ոչ լիարժեք հետաքննություն իրականացնելու դեմ և պահանջել քրեական վարույթի հարուցում (տե՛ս վերոնշյալ § 86): Չնայած դատարաններն ի սկզբանե կոչված էին պարզելու, թե արդյոք դատախազի որոշմամբ տրամադրված հիմքերով դիմումատուի նկատմամբ քրեական վարույթի կարճումը օրինական է, այնուամենայնիվ, այդ որոշումը վերանայելիս, ՔԴՕ-ի 17-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն դատարաններից պահանջվում էր քննել ցանկացած բողոք, որով պնդվում էր վարույթի ընթացքում օրինականության որևէ խախտման մասին, ներառյալ՝ վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումները: Ավելին, չնայած դատարաններին վերապահված չէր քրեական վարույթ հարուցել, նրանք կարող էին նման խնդրանքով դիմել դատախազին՝ ՔԴՕ-ի 41-րդ հոդվածի 2–րդ կետի 4–րդ մասի և 184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Եվ վերջապես, ՔԴՕ-ի 264-րդ հոդվածի համաձայն դատարանները կարող էին չեղյալ հայտարարել դատախազի որոշումը՝ ընդհատելով դատավարությունը, և կարգադրել դիմումատուի նկատմամբ մեղադրանքի հանգամանքների հետագա քննություն, որոնք սերտորեն կապված էին վատ վերաբերմունքի մասին նրա պնդումների հետ:

143. Այնուհետև Դատարանը նկատում է, որ դիմումատուի բողոքը քննվեց բաց և մրցակցային վարույթի միջոցով, որի ընթացքում դիմումատուն և հետաքննություն իրականացնող մարմինը կողմեր էին հանդիսանում: Ճիշտ է, որ թե՛ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, և թե՛ վերաքննիչ դատարանը չանդրադարձան դիմումատուի բողոքում առկա պնդումներից և որևիցե մեկին (տե՛ս §§ 87 և 89): Այնուամենայնիվ, սա պատճառ դարձավ, որ վճռաբեկ դատարանը որոշում կայացներ վերաքննիչ դատարանի որոշումը չեղյալ հայտարարելու և գործը նոր քննության ուղղելու վերաբերյալ: Նման որոշում կայացնելիս վճռաբեկ դատարանը հաշվի է առել վատ վերաբերմունքի և ոչ պատշաճ հետաքննության մասին դիմումատուի պնդումները և, հղում կատարելով ՔԴՕ-ի 17-րդ հոդվածի 4-րդ կետին, կարգադրել է, որ դրանք պատշաճ կերպով վկայակոչվեն պատճառաբանված որոշման մեջ (տե՛ս վերոնշյալ §§ 91 և 92): Բացի դրանից, գործի հետագա նոր քննության ընթացքում, թե՛ վերաքննիչ դատարանը, և թե՛ վճռաբեկ դատարանը քննել և մերժել են դիմումատուի ինքնապաշտպանության մասին պնդումները, որոնք սերտորեն կապված էին վատ վերաբերմունքի մասին նրա պնդումների հետ և չէին կարող առանձնացվել դրանցից (տե՛ս վերոնշյալ §§ 93 և 94): Ավելին երկու դատարաններն էլ քննել և մերժել են անարդյունավետ քննության մասին դիմումատուի պնդումները (տե՛ս նույնը):

144. Ելնելով վերոնշյալից, Դատարանը համարում է, որ տվյալ հանգամանքներում, դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ դատարաններ ներկայացված դիմումատուի բողոքը արդյունավետ միջոց էր, որով կարող էր փոխհատուցում ապահովվել վատ վերաբերմունքի մասին վերջինիս պնդումների առումով: Այսպիսով, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վեցամսյա ժամկետի սկիզբ պետք է համարվի այդ վարույթում կայացված վերջնական որոշման ամսաթիվը՝ 2005 թվականի մայիսի 13-ը: Հետևաբար, դիմումատուն պահպանել է վեցամսյա ժամկետի կանոնը՝ ներկայացնելով իր դիմումը 2005 թվականի նոյեմբերի 10-ին: Հետևաբար, կառավարության առարկությունը պետք է մերժվի:

2. Եզրակացություն

145. Դատարանը նշում է, որ այս բողոքը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի իմաստով: Այնուհետև այն նշում է, որ այն որևէ այլ հիմքով անընդունելի չէ: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Ենթադրյալ վատ վերաբերմունքը

ա) Կողմերի փաստարկները

(i) Կառավարությունը

146. Կառավարությունը, հիմնվելով դիմումատուի քրեական գործի ընթացքում ներպետական մարմինների եզրակացությունների վրա, վիճարկել է, որ դիմումատուի ամորձիներին վնասվածք է ահսցվել վերջինիս կողմից հրահրած դեպքի արդյունքում: Առաջինը դիմումատուն է հարձակվել ոստիկանի վրա՝ հարվածելով նրան բջջային հեռախոսի լիցքավորման սարքով, և նրա կողմից հարձակումը շարունակելու փորձերը կանխվել են մեկ այլ ոստիկանի կողմից, ինչի արդյունքում նա վիրավորված ոստիկանի

հետ միասին ընկել է աթոռին և հետո հատակին՝ ստանալով նշված վնասվածքները: Կառավարությունը նշել է, որ դիմումատուի վերաբերյալ քրեական գործով նյութերը պարունակում էին բավականաչափ ապացույցներ դեպքերի այս շարադրանքը հիմնավորելու համար, ներառյալ՝ դատաբժշկական փորձագետների զեկույցները, որոնցում նշվում էր, որ դիմումատուի վնասվածքները կարող էին հասցված լինել նշված դեպքի հետևանքով: Հետևաբար, ձերբակալված լինելու ժամանակ դիմումատուի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի առումով 3–րդ հոդվածով նախատեսված խախտում տեղի չի ունեցել:

(ii)Դիմումատուն

147. Դիմումատուն նշել է, որ անկասկած առկա է ապացույց, որ նա ստացել է լուրջ վնասվածքներ ոստիկանությունում անազատության մեջ պահվելու ընթացքում: Կառավարությունը, այնուամենայնիվ, չի կարողացել այս վնասվածքների առումով տրամադրել բավականաչափ և համոզիչ բացատրություն: Ներպետական մակարդակով վատ վերաբերմունքի մասին նրա պնդումները պատշաճ, խելամիտ և հիմնավորված էին, և նա օգտվել է բողոքի ներկայացման զանազան միջոցներից՝ նաև նրա դեմ հարուցված քրեական գործով վարույթն ավարտվելուց հետո: Ի տարբերություն դրա՝ հետաքննության ընթացքում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները պարունակում էին բազմաթիվ անհամապատասխանություններ: Ոստիկանությունում իրեն անազատության մեջ պահելու հանգամանքները, մասնավորապես այն, որ նա ենթարկվել է հարցաքննման առանց իրավաբանի ներկայության և հարցաքննությունը չի ձայնագրվել, ցույց է տալիս, որ չեն պահպանվել չարաշահումների դեմ երաշխիքները: Ավելին, համաձայն դեպքերի պաշտոնական շարադրանքի՝ ենթադրյալ դեպքից հետո նա բժշկի կողմից զննության է ենթարկվել հարբածության վիճակի ստուգան համար: Այնուամենայնիվ, այդ զննության ընթացքում վնասվածքներ չեն հայտնաբերվել, ինչը ենթադրում է, որ նա պետք է որ ստացած լիներ այդ վնասվածքները ավելի ուշ ընկած ժամանակահատվածում: Վերջապես, ԽԿԿ–ն իր զեկույցներում եզրակացրել է, որ Հայաստանում ազատությունից զրկված անձինք գտնվում են վատ վերաբերմունքի ենթարկվելու մեծ ռիսկի տակ:

բ) Դատարանի գնահատականը

(i) Ընդհանուր դրույթներ

148. Ինչպես որ բազմիցս Դատարանը նշել է, 3–րդ հոդվածում սահմանվում են ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքները: Նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպես օրինակ ահաբեկչության և կազմակերպված հանցագործության դեմ պայքարում, Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ զոհի պահվածքից (տե՛ս *Labita v. Italy* [GC], թիվ 26772/95, § 119, ՄԻԵԿ 2000-IV, և *Chahal v. the United Kingdom,* 1996 թվականի նոյեմբերի 15, § 79 , *Զեկույցներ* 1996-V): 3–րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Կոնվենցիայի 15–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում (տե՛ս *Selmouni v. France* [GC], թիվ 25803/94, § 95, ՄԻԵԿ 1999-V, և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28, § 93, *Զեկույցներ* 1998-VIII):

149. Դատարանը վերահաստատում է, որ վատ վերաբերմունքը պետք է լինի նվազագույն ծանրության, որպեսզի համարվի 3–րդ հոդվածով նախատեսված: Այս նվազագույն հասկացության որոշումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ վերաբերմունքի տևականությունից, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցություններից և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից (տե՛ս *Labita*, վերևում մեջբերված, § 120, և *Assenov and Other, վերևում մեջբերված,* § *94*): Ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, եթե դա չի արվել վերջինիս սեփական պահվածքից առաջացած խիստ անհրաժեշտության հանգամանքներում, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և ըստ էության հանդիսանում է Կոնվենցիայի 3–րդ հոդվածում սահմանված իրավունքի խախտում (տե՛ս *Ribitsch v. Austria,* 1995 թվականի դեկտեմբերի 4, § 38, Սերիա A թիվ 336, *Selmouni*, վերևում մեջբերված, § 99, և *Sheydayev v. Russia*, թիվ 65859/01, § 59, 2006 թվականի դեկտեմբրի 7):

150. Երբ Դատարանը գնահատում էր այն ապացույցները, որոնց վրա անհրաժեշտ էր հիմնվել 3–րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելիս, այն գլխավորապես կիրառել է ապացուցման «Ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավարար լուրջ, պարզ և համապատասխան հետևություններ կամ փաստի նման անհերքելի կանխավարկածներ (տե՛ս *Ireland v. the United Kingdom*, 1978 թվականի հունվարի 18, § 161, Սերիա A թիվ 25, *Labita*, վերևում մեջբերված, § 121, և *Jalloh v. Germany* [GC], թիվ 54810/00, § 67, ՄԻԵԿ 2006-IX):

151. Այն դեպքում, երբ իրավասու մարմինները ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես օրինակ՝ իրենց վերահսկողության տակ անազատության մեջ գտնվող անձանց դեպքում, փաստի մասին նման կալանավորման ընթացքում ծագող վնասվածքների առումով լուրջ կանխավարկածներ կարող են առաջանալ: Իրականում, ապացուցման պարտականության առումով կարելի է համարել, որ մարմինների պարտականությունն է տալ բավարար և համոզիչ բացատրություն (տե՛ս *Salman v. Turkey* [GC], թիվ 21986/93, § 100, ՄԻԵԿ 2000-VII, և *Varnava and Others v. Turkey* [GC], թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90, § 183, ՄԻԵԿ 2009-...): Նմանապես, երբ անհատին առողջ տանում են ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելուց պարզվում է, որ նա վնասվածքներ է ստացել, ապա պետության պարտականությունն է տալ արժանահավատ բացատրություն այն մասին, թե ինչպես են առաջացել այդ վնասվածքները (տե՛ս, այլ մարմինների շրջանակում, *Aksoy v. Turkey*, 1996 թվականի դեկտեմբերի 18, § 61, *Զեկույցներ* 1996-VI, *Selmouni*, վերևում մեջբերված, § 87; և *Gäfgen v. Germany* [GC], թիվ 22978/05, § 92, ՄԻԵԿ 2010-...). Այլապես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հօգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի համաձայն (տե՛ս *Mikheyev v. Russia*, թիվ 77617/01, § 127, 2006 թվականի հունվարի 26):

(ii) Սույն գործում վերոնշյալ դրույթների կիրառումը

152. Դատարանը ի սկզբանե նկատել է, որ անվիճարկելի է այն փաստը, որ ոստիկանությունում պահելու ժամանակ դիմումատուն ստացել է վնասվածքներ, մասնավորապես՝ կրծքավանդակի և կողոսկրերի կապտուկները և պատռված ամորձին: Այնուամենայնիվ, կողմերը համաձայնության չեկան այն հանգամանքների մասով, որոնց ժամանակ հասցվել են նշված վնասվածքները:

153. Այս առումով Դատարանը նշում է, որ Կառավարությունն իր դիրքորոշման պաշտպանություն համար ուրիշ այլ միջոցներ չի ձեռնարկել, բացի ներպետական պաշտոնական հետաքննության արդյունքների վրա հիմնվելուց: Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում իր ներքոնշյալ եզրակացությունները, որ խնդրո առարկա հետաքննությունը եղել է անարդյունավետ, հիմնովին արատավոր և դրանով չեն կարող վստահելի եզրակացություններ տրվել (տե՛ս § 179, ստորև): Այն նշում է, ինչպես ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է ստորև, որ հետաքննության ընթացքում դիմումատուի վնասվածքների առումով տրված բացատրությունը՝ մասնավորապես այն, որ դրանք ստացվել են ընկնելու հետևանքով, ամբողջությամբ հիմնված է եղել ոստիկանների՝ ներառյալ հանցանք կատարած ենթադրյալ անձանց կողմից տրված ցուցմունքների վրա, ովքեր, սակայն, չեն կարող լինել անաչառ վկաներ (տե՛ս, մասնավորապես, § 165, ստորև): Դրանում բացակայում էին մանրամասները, և այն հապճեպ կերպով ու առանց որևէ պարզաբանման հետաքննության հենց առաջին օրն ընդունվել է հետաքննություն իրականացնող մարմնի կողմից՝ առանց, երբևիցէ, կասկած հարուցելու: Պաշտոնական դատաբժշկական զեկույցները, որոնցով չէր բացառվում այն, որ դիմումատուի վնասվածքները կարող էին ստացված լինել վերոնշյալ հանգամանքներում, էապես թերի էին և չէին կարող համարվել հավաստի ապացույցներ (տե՛ս, մասնավորապես, § 170–172, ստորև):

154. Դատարանը, հիմնվելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի վրա, գտնում է, որ թե՛ Կառավարության և թե՛ ներպետական մարմինների կողմից դիմումատուի վնասվածքների առումով տրված բացատրությունը խիստ կասկածելի է և անհավանական: Միևնույն ժամանակ, այն նշում է, որ հետաքննության բոլոր փուլերում դիմումատուն ներկայացրել է համապատասխան և մանրամասն նկարագրություն այն մասին, թե ով է իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերել և ինչպես է դա տեղի ունեցել: Նրա պնդումները համապատասխանում էին տարբեր բժշկական արձանագրություններում առկա նրա վնասվածքների նկարագրությանը (տե՛ս վերոնշյալ §§ 31 և 66):

155. Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը չի կարող դիմումատուի վնասվածքների վերաբերյալ Կառավարության բացատրությունը համարել բավարար և համոզիչ, և հետևաբար, այն եզրակացնում է, որ նրա վնասվածքները վերաբերելի են վատ վերաբերմունքի այն դրսևորումներին, որոնց մասով մարմինները պատասխանատու էին:

156. Որոշելու համար, թե արդյո՞ք վատ վերաբերմունքի կոնկրետ դրսևորումը պետք է որակվի որպես խոշտանգում, Դատարանը պետք է հաշվի առնի 3–րդ հոդվածում ներկայացված այս հասկացության և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հասկացության տարբերությունները: Ինչպես Դատարանը նախկինում գտել է, պարզ է

դառնում, որ մտադրությունը եղել է այն, որ այս տարբերակման միջոցով Կոնվենցիայով պետք է հատուկ ամոթի խարան դրվեր շատ լուրջ և դաժան տառապանք պատճառող կանխամտածված անմարդկային վերաբերմունքի վրա (տե՛ս *Ireland v. the United Kingdom*, վերևում մեջբերված, § 167, և *Selmouni*, վերևում մեջբերված, § 96): Բացի վերաբերմունքի լրջությունից առակա է նաև նպատակային տարր, ինչպես ճանաչվում է Միացյալ ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ 1987 թվականի հունիսի 26–ին ուժի մեջ մտած կոնվենցիայով, որով խոշտանգումը սահմանվում է որպես սուր ցավի կամ տառապանքի դիտավորյալ պատճառում, ի թիվս այլոց, տեղեկություն ստանալու, պատժելու կամ ահաբեկելու նպատակով (տե՛ս *Salman*, վերևում մեջբերված, § 114):

157. Դատարանը համարում է, որ դիմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տառապանք: Մասնավորապես, նրա ամորձիներին շարունակաբար հասցվել են հարվածներ ոտքերով, ձեռքերով և մետաղական առարկաներով: Այս վնասվածքները երկարատև հետևանքներ թողեցին նրա առողջության վրա, քանի որ նրա ձախ ամորձին այնպես էր պատռվել, որ այն ստիպված հեռացվեց: Այնուհետև նրան, ձեռնաշղթաներով ձեռքները մեջքին կապած, ծեծի էին ենթարկել, և նա ստացել էր հարվածներ կրծքավանդակին և կողոսկրերին: Այս գործի հանգամանքներից կարելի է լուրջ հետևություններ անել, որ դիմումատուի նկատմամբ մտադրաբար է ցուցաբերվել վատ վերաբերմունք՝ նրան պատժելու կամ ահաբեկելու նպատակով, կամ էլ երկուսը միասին: Հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթը, աստիճանը և նպատակը՝ Դատարանը գտնում է, որ այն կարելի է բնորոշել որպես խոշտանգումների ենթարկելու գործողություններ (տե՛ս *Selmouni*, վերևում մեջբերված, §§ 96-105, և *Salman*, վերևում մեջբերված, § 115):

158. Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում:

2. Հետաքննության ենթադրյալ անճշտությունը

ա) Կողմերի փաստարկները

(i) Կառավարությունը

159. Կառավարությունը փաստարկ է ներկայացրել, որ այն հանգամանքները, որոնց պարագայում դիմումատուին հասցվել է վնասվածք, քննվել են նրա դեմ հարուցած քրեական գործի շրջանակներում: Վատ վերաբերմունքի մասին նրա պնդումներին տրվել է արագ և պատշաճ արձագանք: Նրա գործով քրեական գործի քննությունը իրականացվել է հետևյալ մարմինների՝ Արարատ մարզի դատախազության և Երևան քաղաքի դատախազության կողմից, որոնք ենթակայության կամ ինստիտուցիոնալ առումով կապ չունեն Արտաշատի ոստիկանության բաժնի հետ և, հետևաբար, անկախ և անաչառ մարմիններ էին: Մարմինները ձեռնարկել են բոլոր հնարավոր միջոցները հանցանքի համար պատասխանատուներին բացահայտելու համար, այդ թվում՝ անցկացվել են բազմաթիվ հարցաքննություններ, առերեսումներ և բժշկական հետազոտություններ: Ավելին, նշանակվել է լրացուցիչ բժշկական հետազոտություն, մասնավորապես՝ դիմումատուի սեփական միջնորդությամբ: Հետագայում, դիմումատուի

կողմից ներկայացված բոլոր միջնորդություններն ու պահանջները քննվել են պահանջվող ժամկետներում: Հետաքննությունը բաց է եղել, որով ապահովվել է, որ դիմումատուի համար մատչելի լինեն իր գործով բոլոր փաստաթղթերը: Ընդհանուր առմամբ, մարմինները կատարել են 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու առումով իրենց դրական պարտականությունը:

(ii)Դիմումատուն

160. Դիմումատուն փաստարկ է ներկայացրել, որ վատ վերաբերմունքի մասին իր պնդումներով չի անցկացվել այնպիսի պետական պաշտոնական հետաքննություն, որով հնարավոր կլիներ արձանագրել փաստերը և բացահայտել ու պատժել հանցանքի համար պատասխանատուներին: Նախևառաջ չի անցկացվել անկախ և անաչառ հարցաքննություն: Հետաքննություն իրականացնող մարմինները բավականաչափ աշխատանքային ինքնավարություն չունեին հանցագործություն կատարած ենթադրյալ անձանցից և այն հիմնարկից, որտեղ նրանք ծառայում էին: Հետագայում իրականացվեց նախաքննություն այն նույն քննիչի կողմից, ով հարուցել էր քրեական վարույթը և մեղադրանքներ ներկայացրել իր դեմ և հավաքել ապացույցներ այդ մեղադրանքի օգտին, որը ամբողջությամբ հիմնված էր հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց ցուցմունքների վրա: Ոստիկաններին հարցաքննելիս քննիչը հարցեր չի տվել, ոչ էլ հաշվի է առել ոստիկանության ապացույցների անճշտություններից որևիցե մեկը կամ ցուցմունք վերցրել այլ վկայից, ներառյալ՝ Պետության կողմից նշանակված իր իրավաբանից: Սկզբնական դատաբժշկական փորձաքննությունը եղել է թերի, ոչ լիարժեք և չի իրականացվել է ճիշտ ժամանակին, իսկ երկրորդն իրականացվել է բավականին ուշ, և դրանով չէին կարող վստահելի եզրահանգումներ ապահովվել: Գործի ուղարկումը մեկ մարմնից մյուսին նույնպես չի հանգեցրել անկախ հետաքննության, քանի որ այն մարմինը, որը ընդունել է գործը, հիմնվել է միմիայն նախնական հետաքննության արդյունքների վրա: Վատ վերաբերմունքի մասին նրա պնդումները մերժվել են առանց որևէ պարզաբանման, հանցանք կատարած ենթադրյալ անձինք այդպես էլ չեն հեռացվել իրենց պաշտոններից:

(բ) Դատարանի գնահատականը

(i) Ընդհանուր դրույթներ

161. Դատարանը վերահաստատում է, որ երբ անհատը ենթադրաբար պնդում է այն մասին, որ նրա նկատմամբ 3-րդ հոդվածի խախտմամբ ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք ոստիկանության կողմից կամ Պետության այլ նման գործակալների կողմից, ապա այդ դրույթով, որը ընթերցվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն Պետության հիմնական պարտականության մասին դրույթի հետ հետևյալ կերպ՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի ... », [ա]նուղղակի կերպով պահանջվում է արդյունավետ պաշտոնական հետաքննության իրականացում (տե՛ս *Assenov and Others*, վերևում մեջբերված, § 102, և *Labita*, վերևում մեջբերված, § 131):

162. Հետաքննություն իրականացնելու պարտականությունը «արդյունքի պարտականություն չէ, այլ միջոցների պարտականություն է». Պարտադիր չէ, որ

յուրաքանչյուր հետաքննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության, որը համապատասխանում է դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, ապա նաև հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը, ու արդարացված լինելու դեպքում՝ նրանց պատժելուն: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին լուրջ պնդումներով հետաքննությունը պետք է ամբողջական լինի: Դրանից հետևում է, որ մարմինները միշտ պետք է լրջորեն ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է հիմնվեն հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունների վրա իրենց հետաքննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները պարզելու համար, որը ներառում է, մասնավորապես, առերեսումը, դատաբժշկական փորձաքննության ապացույցները և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատմանը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել (տե՛ս *Mikheyev*, վերևում մեջբերված, § 108, և *Akulinin and Babich*, վերևում մեջբերված, § 46, և *Vladimir Fedorov*, վերևում մեջբերված, § 67):

163. Ավելին, հետաքննությունը պետք է նպատակահարմար լինի: Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, երբ պաշտոնական հետաքննության արդյունավետությունը կասկած է առաջացնում, Դատարանը հաճախ գնահատում է այն փաստը, թե արդյոք մարմինները պատշաճ և համապատասխան ժամկետներում են արձագանքել բողոքներին (տե՛ս *Labit*, վերևում մեջբերված, § 133-135): Ուշադրություն է դարձվում հետաքննությունը սկսելու, ցուցմունքներ վերցնելը ուշացնելու (տե՛ս *Timurtaş v. Turkey,* թիվ 23531/94, § 89, ՄԻԵԿ 2000 VI, և *Tekin v. Turkey*, 1998 թվականի հունիսի 9, § 67, Զեկույցներ 1998 IV), ինչպես նաև հետաքննության ընթացքում պահանջված ժամկետի տևողության վրա (տե՛ս *Indelicato v. Italy*, թիվ 31143/96, § 37, 2001 թվականի հոկտեմբերի 18):

164. Վերջապես, Դատարանը վերահաստատում է այն հանգամանքը, որ որպեսզի Պետության գործակալների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքը հետաքննության արդյունավետության նպատակով համարվի արդյունավեր, այն պետք է լինի անկախ: Հետաքննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (տե՛ս *Oğur v. Turkey* [GC], թիվ 21594/93, § 91, ՄԻԵԿ 1999 III, *Mehmet Emin Yüksel v. Turkey*, թիվ 40154/98, § 37, 2004 թվականի հուլիսի 20, ինչպես նաև *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28, § 83, Զեկույցներ 1998 IV, երբ աղջկա մահը հետաքննող պետական դատախազը անվտանգության ուժերի և PKK-ի ենթադրյալ բախման ժամանակ անկախության պակաս ցույց տվեց՝ հիմնվելով միայն դեպքի մեջ ներգրավված ոստիկանների կողմից տրամադրված տեղեկությունների վրա:

(ii) Սույն գործում վերոնշյալ դրույթների կիրառումը

165. Դատարանը նշում է, որ այս դեպքում քրեական վարույթը հարուցվել է դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի ցուցաբերման հենց նույն

օրը և սկսվել է հետաքննություն (տե՛ս վերոնշյալ § 21): Այնուամենայնիվ, այն նկատում է, որ քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա, ներառյալ՝ հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց և նրանց այն գործընկերների կողմից տրամադրված տեղեկությունների վրա, ովքեր բոլորը որոշակիորեն ներգրավված էին 2004 թվականի ապրիլի 23-ի իրադարձություններում՝ չլսելով նույնիսկ դիմումատուին կամ որևէ այլ վկայի: Ավելին, հենց կզբից իրադարձությունների մասին այս տարբերակը համարվել է հաստատված փաստ (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ § 34 մեջ նշված դատաբժշկական փորձաքննություն կարգադրելու մասին քննիչի որոշումը) և ամբողջ հետաքննությունը իրականացվել է այդ կանխավարկածով: Անհրաժեշտ է նշել, որ ոստիկանության տարբերակը քննիչի կողմից հենց այդպես ընդունվել է այն ժամանակ, երբ նա նույնիսկ իր տրամադրության տակ չի ունեցել դիմումատուի վնասվածքների բնույթի և հնարավոր պատճառների մասին դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները: Արդյունքում, դիմումատուն դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ, իսկ ոստիկանության աշխատակից Հ.Մ.-ի դեպքում՝ որպես զոհ:

166. Դատարանը լուրջ կասկածներ ունի, թե արդյո՞ք մարմինների կողմից իրականացված հետաքննությունը, վերոնշյալ նկարագրության համաձայն, կարող է համարվել գործի հանգամանքների հետազոտություն այն անձանց կողմից, որոնց նպատակն է հետաքննել վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումները և բացահայտել ու պատժել հանցանքի համար պատասխանատուներին, ինչպես վիճարկվում է Կառավարության կողմից: Պարզվում է, որ դրա միակ նպատակն է եղել դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը և այդ քրեական պատասխանատվության օգտին ապացույցներ հավաքելը:

167. Հետաքննություն իրականացնող մարմինները հետաքննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևիցե բացատրություն այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ ոչ վստահելի: Վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առումով ամբողջական հետաքննություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու մասին դիմումատուի բազմաթիվ պահանջները անտեսվել են, կամ դրանց տրվել է մակերեսային պատասխան (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ § 54): Այսպիսով, պարզվում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել են ոստիկանների կողմից տրամադրված վկայությանը և դրանով կարելի է ասել չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվությունը և անկախությունը:

168. Այնուհետև Դատարանը նկատում է, որ հետաքննությունը սկսվելուց մոտ մեկ ամիս անց դիմումատուի դեմ քրեական գործը մարզի դատախազությունից ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն (տե՛ս վերոնշյալ § 58): Թե՛ ներպետական մարմինները և թե՛ Կառավարությունը չեն կարողացել բացատրել գործը ուղարկելու պատճառները: Ամեն դեպքում, անհրաժեշտ է նշել, որ դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի ուղարկումը, անկախ դրա պատճառից և նպատակից, առանձնապես

տարբեր արդյունքներ չի տվել, քանի որ Երևան քաղաքի դատախազությունը առանվ վարանելու անփութորեն մերժել է վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումները (տե՛ս վերոնշյալ § 62) և շարունակել է իրականացնել նույն տիպի հետաքննություն՝ հիմնվելով իրադարձությունների մասին նույն տարբերակի վրա:

169. Ինչ վերաբերում է վերոնշյալ հետաքննության ընթացքում ձեռնարկված հատուկ միջոցներին, ապա Դատարանը չի կարող հաշվի չառնել մի շարք նշանակալից բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնք կարող էին վտանգել դրա հուսալիությունն ու արդյունավետությունը:

170. Դատարանը, մասնավորապես, ցանկանում է մատնանշել դիմումատուի դատաբժշկական փորձաքննության անցկացման կարգը: Նման փորձաքննություն անցկացնելու կարգադրություն տվող քննիչի որոշումը կայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքի ցուցաբերման հաջորդ օրը, մասնավորապես՝ 2004 թվականի ապրիլի 24–ին (տե՛ս վերոնշյալ § 34): Դիմումատուն պնդել է, որ դատաբժշկական փորձագետ Գ.-ն սկսել է իր փորձաքննությունը միայն 2004 թվականի մայիսի 5–ին: Փորձագետի զեկույցից միանգամայն պարզ չէ, թե արդյո՞ք դա այդպես է, սակայն կարելի է վստահաբար ենթադրել, որ փորձագետը չի սկսել փորձաքննությունը քննիչի որոշումից հետո առնվազն երեք օրվա ընթացքում (տե՛ս վերոնշյալ §§ 40 և 52): Անհրաժեշտ է նշել, որ արդյունքում կազմված փորձագետի զեկույցը չէր պարունակում որևիցե նշում դիմումատուի կրծքավանդակի և կողոսկրերի վնասվածքների մասին (տե՛ս վերոնշյալ § 52), ինչն ընդամենը մի քանի օր առաջ արձանագրվել էր Արտաշատի հիվանդանոցի բժիշկների կողմից (տե՛ս վերոնշյալ §§ 66 և 71): Այսպիսով, չի կարելի բացառել, որ դատաբժշկական փորձագետի կողմից այս բացթողնման պատճառ է հանդիսացել հենց նշված ուշացումը: Չի կարելի բացառել նաև այն, որ դա արվել է հպանցիկ քննության արդյունքում՝ հնարավոր անկախության պակասի պատճառով: Ամեն դեպքում, այս հանգամանքը ստիպում է Դատարանին կասկածել դատաբժշկական եզրակացությունների հավաստիության մեջ: Ավելին, եթե դատաբժշկական փորձագետը արձանագրեր այս վնասվածքները, ապա նրա՝ դիումատուի վնասվածքների հնարավոր պատճառների մասին եզրակացությունները կարող էին միանգամայն տարբեր լինել:

171. Այնուհետև, Դատարանը նշում է դատաբժշկական փորձագետ Գ.–ի կողմից կազմված զեկույցի մի շարք կարևոր թերություններ: Նախևառաջ, ինչպես հետաքննության ամբողջ ընթացքը, այնպես էլ այստեղ կասկածելի է, որ զեկույցը, որը ամբողջությամբ հիմնված էր իրադարձությունների մասին հապճեպ ընդունված ոստիկանության տարբերակի վրա, կարող էր համարվել այնպիսի միջոց, որը իսկապես ուղղված էր և կարող էր տալ անկախ և օբյեկտիվ բացատրություն դիմումատուի վնասվածքների հնարավոր պատճառների մասին (տե՛ս վերոնշյալ § 52): Երկրորդ. զեկույցով որևէ պատասխան չէր տրվել քննիչի կողմից առաջադրված հիմնական հարցերից մեկին, այն է՝ թե արդյո՞ք դիմումատուի ամորձիին հասցված վնասվածքը պատճառվել է մեկ, թե մի քանի հարվածով, ինչը, ելնելով գործի հանգամանքներից և միմյանց հակասող իրադարձությունների մասին տարբերակներից, էական նշանակություն ուներ հետաքննության համար: Երրորդ. փորձագետի նախնական եզրակացությունը պարունակում էր հետևյալ արտահայտությունը՝ «Ձախ ամորձիին հասցված վնասվածքը տրավմատիկ բնույթի է և կարող էր պատճառված լինել ցանկացած տեսակի հարվածով» (շեշտված, տե՛ս վերոնշյալ § 52), որով առաջարկվում

էր դիմումատուի վնասվածքների հնարավոր պատճառների լայն շրջանակ, բայց որը, անբացատրելի պատճառներով, հանվել է նույն եզրակացության թարմացված տարբերակից (տե՛ս վերոնշյալ § 56): Սա ևս մեկ անգամ կասկած է առաջացնում դատաբժշկական փորձագետի թե՛ անկախ լինելու և թե՛ ամբողջական փորձաքննություն անցկացնելու մեջ, ինչպես նաև նրա եզրակացությունների հավաստիության մեջ:

172. Դատարանը նկատում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները չեն անդրադարձել վերոնշյալ դատաբժշկական փորձաքննության որևիցէ թերությանը: Ճիշտ է, որ դիմումատուի կողմից փորձագետի 2004 թվականի մայիսի 5–ի զեկույցում պարունակվող եզրակացությունների բողոքարկումից հետո, այս եզրակացությունների ճշգրտությունը դրվել է հարցականի տակ և կարգադրվել է նոր դատաբժշկական փորձաքննության անցկացում (տե՛ս վերոնշյալ § 72): Այնուամենայնիվ, սա տեղի ունեցավ որոշ նշանակալից ժամանակ անց, որի հիմնական պատճառը այն էր, որ այդ զեկույցի պատճենը ներկայացվել է դիմումատուին այն կազմվելուց միայն մոտ մեկուկես ամիս հետո (տե՛ս վերոնշյալ § 68): Արդյունքում, նոր դատաբժշկական փորձաքննություն չանցկացվեց մինչև դեպքից մոտ երեք ամիս հետո: Դատարանը համոզված է, որ նման հետաձգված փորձաքննությամբ հնարավոր չէր լինի ճշգրիտ կերպով արձանագրել դիմումատուի վնասվածքները և հետևաբար տալ հավաստի եզրակացություններ: Այսպիսով Դատարանը լրջորեն կասկածում է, որ այս եղանակով հնարավոր եղավ շտկելու առաջին դատաբժշկական փորձաքննության թերությունները: Սա հաստատվեց նաև այն փաստով, որ նոր փորձաքննության արդյունքում կազմված զեկույցը պարունակում էր այնպիսի եզրակացություններ, որոնք ըստ էության նույնն էին, ինչ որ առաջին զեկույցի եզրակացությունները (տե՛ս վերոնշյալ § 77):

173. Դատարանին նաև զարմացրել է այն փաստը, որ հետաքննություն իրականացնող մարմինները չեն իրականացրել գործով այլ բժշկական ապացույցների գնահատում, մասնավորապես՝ Արտաշատի հիվանդանոցի արձանագրությունների գնահատում, որոնցով, ինչպես արդեն նշվել է վերևում, դիմումատուի ամորձիներին հացվծած վնասվածքներից բացի բացահայտվեցին նաև նրա կրծքավանդակին և կողոսկրերին հասցված այն վնասվածքները (տե՛ս վերոնշյալ § 66), որոնց մասին տվյալները բացակայում էին դատաբժշկական փորձագետի կողմից կայացված եզրակացության մեջ: Պարզվում է, որ հետաքննության որևիցե փուլում այս ակնհայտ կարևոր ապացույցի վրա ուշադրություն չի դարձվել: Չնայած դիմումատուի վնասվածքների լրջությանը՝ հետաքննություն իրականացնող մարմինները չեն ուսումնասիրել հիվանդանոցում կազմված փաստաթղթերը կամ հարցաքննել համապատասխան բժիշկներին մինչև դեպքից հետո մոտ երկուսուկես ամիս հետո (տե՛ս վերոնշյալ § 71 և 73) և պարզվում է, որ նույնիսկ այդ ժամանակ այս ապացույցին ուշադրություն չի դարձվել և չի կազմվել որևէ եզրակացություն: Այս ապացույցների և դատաբժշկական փորձագետի եզրակացությունների միջև առկա տարաձայնությունները շտկելու փորձ չի արվել՝ներառյալ վերջինիս հարցաքննելու միջոցով, և պատասխան չի տրվել այն հարցին, թե արդյոք դիմումատուի վնասվածքները ամբողջությամբ կարող էին պատճառված լինել ոստիկանների կողմից նշված հանգամանքներում:

174. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը չի կարող չգալ այն եզրակացության, որ մարմիններին չի հաջողվել իրականացնել հետաքննության արդյունավետ արդյունքի

հասնելու համար կարևոր նշանակություն ունեցող բժշկական ապացույցների՝ համապատասխան ժամկետներում, պատշաճ և օբյեկտիվ ձեռքբերում և գնահատում:

175. Այնուհետև Դատարանը մատնանշում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները անմիջապես չեն մեկուսացնել և հարցաքննել դեպքի մեջ ներգրավված ոստիկաններին՝ դրանով իսկ չեն կանխել հնարավոր հանցավոր պայմանավորվածությունը: Այս առումով Դատարանը նշում է, որ դեպքի մասին ոստիկանության առաջին զեկույցներում դիմումատուի՝ դեմքով աթոռին ընկնելու փաստի մասին ոչինչ չի նշվել (տե՛ս վերոնշյալ §§ 19 և 20)՝ մի բացատրություն, որը հետագայում հիմք ընդունվեց նրա վնասվածքները արդարացնելու համար: Այնուամենայնիվ, նման բացատրությունը սկսեց անընդհատ հայտնվել քննիչի կողմից՝ ոստիկանների հետ հետագա հարցաքննումների ընթացքում վերցված գրեթե բոլոր ցուցմունքներում (տե՛ս, օրինակ՝ §§ 23, 24 և 35): Այնուհետև, հաշվի առնելով այն կարգը, որով անցկացվել են այս հարցաքննությունները, Դատարանը նկատում է, որ որոշ նման դեպքերում ոստիկաններին պարզապես խնդրել էին տրամադրել իրադարձությունների շարադրանքի իրենց տարբերակը, և այդ առումով նրանց որևէ հարց չի տրվել (տե՛ս վերոնշյալ §§ 25, 35 և 39): Նույնիսկ այն մի քանի դեպքերում, երբ քննիչը հարցեր է հղել նրանց, դրանք երբեք չեն գերազանցել մեկը կամ երկուսը, և դրանք հիմնականում սովորական բնույթի հարցեր են եղել և չեն պարունակել հաստակեցման տարր (տե՛ս վերոնշյալ §§ 23, 24, 44, 47 և 50): Ուստի պարզվում է, որ տվյալ հարցաքննությունները ունեցել են պարզապես ձևական բնույթ, և Դատարանը չի կարող դրանք համարել լուրջ և պատշաճ ժամկետներում կատարված փորձ, ուղղված պարզելու այն հանգամանքները, որոնց ժամանակ դիմումատուն ստացել է իր վնասվածքները:

176. Այս առումով պետք է նշել նաև, որ այս հարցաքննությունները անցկացվել են վերոնշյալ ոչ հարցաքննողական եղանակով՝ չնայած այն փաստի, որ գործում ակնհայտ առկա էին մի շարք անհամապատասխանություններ և երկիմաստություններ: Մասնավորապես, պարզ չէ, թե ինչու է հիվանդանոցի արձանագրություններում նշված եղել, որ դիմումատուի հարբածության աստիճանը որոշելու նպատակով բժշկի առաջին այցը ոստիկանության բաժին կատարվել է 2004 թվականի ապրիլի 23-ին ժամը մոտ 15.05 -ին (տե՛ս վերոնշյալ § 66), մինչդեռ ոստիկանության արձանագրությունների համաձայն դիմումատուն ձերբակալվել է ժամը 17.40-ից ոչ շուտ: Մյուս կողմից, դիմումատուի հարբածության վիճակի զննության մասին արձանագրության մեջ նշվում է, որ առաջին այցը կատարվել է մոտավորապես ժամը 19.00-ին (տե՛ս վերոնշյալ § 18), որը թույլ է տալիս ենթադրելու, որ հիվանդանոցի արձանագրություններում հավանաբար սխալմունք է տեղի ունեցել: Այնուամենայնիվ, նույնիսկ ենթադրելով, որ դա այդպես է, բավականին զարմանալի է, որ դիմումատուն, ով ենթադրաբար արդեն ժամը 18.30-ին ստացել էր վնասվածքներ իր կրծքավանդակին և շատ լուրջ վնասվածք իր ամորձիին, չէր տեղեկացրել դրանց մասին ալկոհոլային հարբածության վիճակի նպատակով իրեն զննող բժշկին: Այնուամենայնիվ, ենթադրելով, որ դիմումատուն եղել է այդպիսի ծայրահեղ վիճակում ժամը 18.30-ից, պարզ չէ, թե ինչու են օգնություն ցույց տալու համար շտապ օգնությունը կանչել միայն ժամը 23.20-ին (տե՛ս վերոնշյալ § 29): Ինչպես արդեն նշվել է վերևում, ոստիկանության աշխատակիցներից ցուցմունքներ վերցնելու ընթացքում ջանքեր չեն գործադրվել այս կարևոր հանգամանքները պարզաբանելու

համար: Համապատասխան հարցեր չեն տրվել նաև բժիշկ Ա.Գ.–ին, ով դեպքի օրը երկու անգամ այցելել է ոստիկանության բաժին (տե՛ս վերոնշյալ § 71):

177. Վերջապես, Դատարանը մատնանշում է մի շարք այլ թերություններ և բացթողումներ: Նախևառաջ, որևէ փորձ չի արվել պետության կողմից նշանակված դիմումատուի իրավաբանին հարցաքննելու առումով, ով ակնհայտորեն ներկա է եղել դեպքի գիշերը վերջինիս հարցաքննության ժամանակ (տե՛ս վերոնշյալ § 28), կամ ոստիկան Օ.Բ.–ին հարցաքննելու առումով, ով կազմել է արձանագրություն՝ նշելով, որ դիմումատուն իրեն վատ է զգացել և պահանջել է բժշկական օգնություն (տե՛ս վերոնշյալ § 29): Երկրորդ. դիումատուի և ոստիկանների առերեսումները անցկացվել են մեկուկես ամսից մինչև երեք ու կես ամիս ուշացումներով (տե՛ս վերոնշյալ §§ 63, 64, 67 և 78)՝ դրանով զգալիորեն նվազագույնի հասցնելով այս միջոցների արդյունավետությունը, մինչդեռ դիմումատուի և ոստիկանապետի տեղակալ Գ-ի միջև առերեսում չի անցկացվել: Երրորդ. պարզ չէ, թե ինչ հիմքերով է քրեական վարույթը կարճելու մասին դատախազի որոշմամբ սահմանվում, որ ոստիկան Հ.Մ.-ն ինքնապաշտպանվելու նպատակով է ոտքով հարվածել դիմումատուի ամորձիներին (տե՛ս վերոնշյալ § 82) այն դեպքում, երբ գործի ապացույցները նման պնդում չեն պարունակում: Վերջապես, ներպետական դատարանները հետաքննության ընթացքում լիովին չեն անդրադարձել վերոնշյալ հետաքննության թերություններից որևիցե մեկին, և պարզվում է, որ այդ ընթացքում իրականացվել է դիմումատուի պնդումների միայն մակերեսային քննություն (տե՛ս վերոնշյալ §§ 93 և 95):

178. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առումով մարմինների կողմից ձեռնարկված հետաքննությունը եղել է անարդյունավետ, ոչ պատշաճ և միանգամայն թերի: Դրանով հնարավոր չի եղել տալ հավաստի եզրակացություններ և արձանագրել գործի փաստերը: Իրավասու մարմինները բավականաչափ բարեխղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պատժելու հանցագործներին:

179. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2–ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

180. Դիմումատուն բողոքել է, որ նրա նկատմամբ քրեական վարույթը կարճելու հիմքերով խախտվել է իր՝ արդարացված համարվելու իրավունքը: Նա վկայակոչեց Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 2–րդ կետը, որը շարադրվել է հետևյալ կերպ՝

> «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:»

Ա. Ընդունելիությունը

181. Դատարանը նշում է, որ այս բողոքը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35–րդ հոդվածի 3–րդ կետի իմաստով: Այնուհետև այն նշում է, որ այն որևէ այլ հիմքով անընդունելի չէ: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարություն

182. Կառավարությունը պնդեց, որ այն հիմքերը, որոնց հիման վրա Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազը 2004 թվականի օգոստոսի 30-ին որոշել է կարճել դիմումատուի նկատմամբ հարուցված վարույթը, ինչպես նշված է ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 2–րդ կետի 2-րդ մասով, համատեղելի էին 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների հետ: Սա ընթացակարգային որոշում էր, որով մեղադրյալի հանցավորության մասին եզրակացություն չի տրվել: Նմանապես, երբ անձը ձերբակալվում է հանցանք կատարելու կասկածով կամ երբ դատախազը մեղադրանք է ներկայացնում և հետո պաշտպանում այն դատարանում, նման միջոցներով չի ենթադրվում, որ մեղադրյալը մեղավոր է, և անմեղ համարվելու նրա իրավունքը չի խախտվում: Դիմումատուի նկատմամբ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը, որը, բացի դրանից, կարող է վիճարկվել դատարաններում, պարզապես արտահայտում էր այն, որ դատախազը չէր ցանկացել գործը հասցնել դատարան, և այն չէր պարունակում դիմումատուի մեղավորության մասին որևէ պնդում: Հղում կատարելով *Salabiaku v. France*-ի գործին՝ Կառավարությունը վիճարկեց, որ փաստի կամ օրենքի կանխավարկածներ գործում են ցանկացած իրավական համակարգում, և Կոնվենցիայով, ըստ էության, չեն արգելվում նման կանխավարկածները (տե՛ս *Salabiaku v. France*, 1988 թվականի հոկտեմբերի 7, § 28, Սերիա A թիվ 141A):

բ) Դիմումատուն

183. Դիմումատուն պնդեց, որ դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը պարզապես ընթացակարգային որոշում չէր, այլ «վերջնական որոշում» էր՝ՔԴՕ-ի 6–րդ հոդվածի 10-րդ կետի ուժով, որը կարող էր հաստատվել կամ ենթադրվել նրա մեղավորությունը: Ավելին, այս որոշումը ոչ մի կերպ համադրելի չէր ձերբակալելու, մեղադրանք ներկայացնելու կամ բավականաչափ ապացույցների բացակայության պատճառով վարույթը ընդհատելու մասին որոշման հետ: Նման որոշումները չէին պարունակում մեղավորության կանխավարկած, մինչդեռ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 2–րդ կետի 2–րդ մասով նախատեսված հիմքերով վարույթի կարճումը անմիջական կապ էր պարունակում նման կարճման պատճառների և նրա քրեական պատասխանատվության հարցի միջև: Դիմումատուն վիճարկեց, որ դատախազի որոշումը, որը անփոփոխ թողնվեց երեք դատական ատյաններում, կա՛մ հիմնված էր մեղավորության մասին ակնհայտ եզրակացության վրա, կա՛մ հիմնաշված էր դատական որոշման կամ պետական պաշտոնյայի ցուցմունքի վրա, որով ենթադրվում էր կամ ցույց էր տրվում, որ նա մեղավոր էր՝ դրանով իսկ խախտելով 6-րդ հոդվածի 2-րդ կետը: Ավելին, *Salabiaku v. France* գործի առումով արված եզրակացությունները տարբերակելի էին և չէին կիրառվում նրա գործի նկատմամբ:

184. Այնուհետև դիմումատուն Դատարանի ուշադրությունը գրավեց այն փաստի վրա, որ 2006 թվականի մայիսի 25-ին Հայաստանի խորհրդարանը փոփոխել է ՔԴՕ-ի 37-րդ հոդվածը և չեղյալ հայտարարել դրա 2 –րդ կետի 2-րդ ենթակետով վարույթի կարճման համար նախատեսված հիմքը: Այսպիսով, վարույթը կարճելու համար այնպիսի հիմքը,

ինչպիսին է «կատարվածի քավումը տուժանքի միջոցով», որով բացի դրանից չէր պահանջվում մեղադրյալի համաձայնությունը, հանվեց: Դիմումատուն վիճարկեց, որ այս փոփոխությունը ներմուծվեց, քանի որ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի նախկին 2 –րդ կետի 2-րդ ենթակետով, մասնավորապես, հակասում էր անմեղության կանխավարկածի սկզբունքին:

2. Դատարանի գնահատականը

185. Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը արդար քրեական դատավարության այն բաղադրիչներից մեկն է, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (տե՛ս *Deweer v. Belgium*, 1980 թվականի փոտրվարի 27, § 56, Սերիա A թիվ 35, և *Minelli v. Switzerland*, 1983 թվականի մարտի 25, § 27, Սերիա A թիվ 62): Այն կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն: Նույնիսկ որևիցե պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում, դա բավարար պատճառ կարող է հանդիսանալ կարծելու, որ պաշտոնյան գտնում է, որ մեղադրյալը մեղավոր է (տե՛ս *Daktaras v. Lithuania*, թիվ 42095/98, § 41, ՄԻԵԿ 2000 X): Ավելին, անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլ նաև այլ պետական մարմինների կողմից, այդ թվում նաև դատախազների կողմից (տե՛ս *Allenet de Ribemont v. France*, 1995 թվականի փոտրվարի 10, § 36, Սերիա A թիվ 308, և *Daktaras*, վերևում մեջբերված, § 42):

186. Բացի դրանից, հայտարարությունը այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացության, կատարել է տվյալ հանցագործությունը (տե՛ս *Matijašević v. Serbia*, թիվ 23037/04, § 48, ՄԻԵԿ 2006 X, և *Khaydarov v. Russia*, թիվ 21055/09, § 149, 2010 թվականի մայիսի 20): Վերջինով խախտվում է անմեղության կանխավարկածի դրույթը, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը Դատարանի կողմից քննված զանազան իրավիճակներում համարվել է անառարկելի (տե՛ս *Garycki v. Poland գործը*, թիվ 14348/02, § 67, 2007 թվականի փետրվարի 6): Այն հարցը, թե արդյոք պետական պաշտոնյայի կողմից արված հայտարարությամբ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որոնց պայմանում արվել է վիճարկվող հայտարարությունը (տե՛ս *Daktaras*, վերևում մեջբերված՝ § 43):

187. Ուստի Դատարանը անհրաժեշտ համարեց որոշելու, թե արդյոք սույն գործում դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական վարույթի արդյունքը կասկածի տակ էր դրել նրա անմեղությունը՝ չնայած որ նրա մեղավորությունը դեռ չէր ապացուցվել:

188. Դատարանը նշում է, որ դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական վարույթը կարճվել է նախադատական փուլում դատախազի 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի նախկին 2–րդ կետի 2-րդ մասով սահմանված հիմքով, որով թույլատրվում էր վարույթի կարճում այն դեպքում, եթե դատախազի կարծիքով մեղադրյալը քավել է կատարածը տուժելու և այլ զրկանքների միջոցով, որոնց

նա ենթարկվել է կատարածի առումով: Դատախազի որոշումը թողնվել է անփոփոխ ներպետական դատարանների կողմից:

189. Հաշվի առնելով դատախազի 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը՝ Դատարանը նշում է, որ այս որոշումը ձևակերպվել է այնպես, որ կասկած չի առաջացել այն առումով, որ դատախազի կարծիքով դիմումատուն հանցանք է կատարել: Մասնավորապես, դատախազը սկզբում ամփոփ տեսքով հավաքել է գործի փաստական հանգամանքները, ինչպես նշված են դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի մեջ, և ներկայացրել այնպես, որ դրանով առաջարկվում էր հաստատել, որ ոստիկան Հ.Մ.-ն գործել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ դիմումատուն կանխամտածված վնասվածքներ էր հասցրել նրան: Այնուհետև դատախազը եզրակացրել է, որ նպատակահարմար չէր քրեական հետապնդում իրականացնել դիմումատուի նկատմամբ, քանի որ կատարվածի պատճառով նա նույնպես վնասվել է: Սա նշելով՝ դատախազը հատուկ օգտագործել է «Հանցանքը կատարելու ժամանակ [դիմումատուն] նույնպես վնաս է ստացել» և «զրկանքների միջոցով [դիմումատուն] քավել է իր մեղքը» բառերը (տե՛ս վերոնշյալ § 82):

190. Թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը անփոփոխ են թողել այս որոշումը և ըստ էության չեն առարկել դրա դեմ: Ավելին, այդ ընթացքում երկու դատարաններն էլ գտել են, որ անհրաժեշտ էր հաստատել այն, որ դիմումատուի պնդումն այն մասին, որ նա գործել էր ինքնապաշտպանության նկատառումներով, անհիմն էր: Պետք է նշել, որ դատարաններում անցկացվող վարույթներով չի որոշվել դիմումատուի քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, այլ որոշվել է այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ էր կարճել գործը դատախազի որոշման հիմքերով: Այսպիսով չի կարելի ասել, որ այս վարույթները հանգեցրել են կամ նպատակաուղղված են եղել հանգեցնելու դիմումատուի «մեղավորությունը օրենքի համաձայն ապացուցելուն»:

191. Վերջապես, Դատարանը նկատում է, որ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի նախկին 2-րդ կետի 2–րդ մասով նախատեսված քրեական վարույթը կարճելու հիմքը իրենով ենթադրում էր, որ մեղսագրվող արարքի կատարումը անվիճարկելի փաստ էր:

192. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի դեմ քրեական գործի կարճման համար դատախազի կողմից տրված պատճառները և ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի հիման վրա անփոփոխ թողնելը անմեղության կանխավարկածի խախտում էին:

193. Համապատասխանաբար տեղի է ունեցելԿոնվենցիայի 6–րդ հոդվածի 2––դ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ, ՈՐԸ ԴԻՏԱՐԿՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

194. Դիմումատուն բողոքել է, որ նրա նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք իր քաղաքական հայացքների համար: Նա հիմնվել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա, որը դիտարկվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ միասին՝ սահմանելով, որ՝

«Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Ա. Ընդունելիությունը

195. Դատարանը նշում է, որ այս բողոքը կապված է 3-րդ հոդվածի համաձայն քննվող բողոքի հետ, և ուստի նմանապես պետք է համարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարություն

196. Կառավարությունը փաստարկ է ներկայացրել, որ դիմումատուն չի կարողացել որևէ ապացույցով հիմնավորել իր պնդումը այն մասին, որ նրա նկատմամբ ցուցաբերվել է նման վերաբերմունք քաղաքական դրդապատճառներով: Ավելին, նա չի կարողացել ցույց տալ, որ նրա նկատմամբ ցուցաբերվել է վերաբերմունք, որը տարբերվում է նման իրավիճակում հայտնված ցանկացած այլ անձի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքից: Ավելի ճիշտ, դիմումատուին տարել են ոստիկանության բաժին հրազեն կրելու կասկածով: Նրան հարցաքննել են այդ կասկածի և այն վնասվածքի առումով, որը նա ստացել է իր և ոստիկանության աշխատակցի միջև դեպքի արդյունքում: Դիմումատուն ընդունել է, որ ոստիկանության բաժնում նրան խնդրել են ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, որը ենթադրում է, որ ոստիկանության աշխատակիցները տեղյակ չեն եղել նրա անձի մասին, առավել ևս՝ նրա քաղաքական գործունեության մասին: Նույնիսկ ենթադրելով, որ ոստիկանության աշխատակիցները տեղյակ են եղել իր քաղաքական գործունեության մասին, ոչինչ չի հուշում, որ նրանց գործողությունները պայմանավորված են եղել այդ փաստով: Դիմումատուն չի նշել նաև ոստիկանության աշխատակիցների կողմից ցուցաբերած որևէ նշան կամ արված արտահայտություն, որը կարող էր հուշել հակառակը: Նրա պնդումները բացարձակապես հիմնված էին Հայաստանում 2003-2004 թվականների ընդհանուր իրավիճակը բնութագրող զեկույցների վրա: Այսպիսով, անկասկած, նա չի կարողացել ներկայացնել ապացույց, և չի կարելի ասել, որ նրա նկատմամբ խտրականություն է արվել քաղաքական դրդապատճառներով՝ 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի թե՛ նյութական և թե՛ ընթացակարգային երաշխիքների խախտմամբ:

բ) Դիմումատուն

197. Դիմումատուն փաստարկ ներկայացրեց, որ առաջին հերթին նա ունի բավականին հարուստ քաղաքական կենսագրություն Հայաստանում, և հավանական չէր, որ նրա ձերբակալման համար պատասխանատու ոստիկանները տեղյակ չլինեին իր ընդդիմադիր քաղաքական գործունեության մասին: Երկրորդը՝ Դատարանի առջև դրված էին բազմաթիվ զեկույցներ, որոնցով ցույց էր տրվում, որ 2004 թվականի մարտ և ապրիլ ամիսներին Հայաստանի մարմինները մեծ ճնշում էին գործադրել քաղաքական ընդդիմադիր ուժերի վրա: Երրորդը՝ առկա չէին հավաստի ապացույցներ իր

ձերբակալման համար, որը պարզապես իրականացվել էր մի անանուն հեռախոսազանգի հիման վրա: Չորրորդը՝ իր ձերբակալման մասին ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները հակասական և անհավատալի էին: Հինգերորդը՝ ձերբակալման ընթացքում նրան հարցեր չէին տրվել ենթադրյալ կասկածի մասին, և միակ հարցը, որը նրան տրվել էր վերաբերում էր իր մասնակցությանը ցույցերին և թե ինչ դեր ուներ նա մյուսներին՝ դրանց մասնակցելու առումով հրահրելու գործում: Բոլոր այս գործոններով հաստատվեցր այն փաստը, որ նրա ձերբակալությունը իրականացվել էր քաղաքական շարժառիթներով և, հետևաբար,նաև այն, որ նրա նկատմամբ ցուցաբերվել էր խտրականություն իր քաղաքական հայացքների պատճառով՝ 3-րդ հոդվածի հետ դիտարկվող14-րդ հոդվածի թե՛ նյութական և թե՛ ընթացակարգային երաշխիքների խախտմամբ:

2. Դատարանի գնահատականը

ա) Արդյո՞ք դիմումատուի քաղաքական տեսակետների և գործունեության հիման վրա կարելի է եզրակացնել, որ պատասխանող պետությունը պատասխանատվություն է կրում դրսևորված վատ վերաբերմունքի համար

198. Ինչպես վերը նշված է, Դատարանը սահմանել է, որ պատասխանող Պետության ներկայացուցիչները դիմումատուի նկատմամբ ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում դրսևորել են վատ վերաբերմունք՝ խախտելով Կոնվենցիայի 3–րդ հոդվածը: Այնուհետև, դիմումատուն հայտարարել է, որ տեղի է ունեցել նաև 14–րդ հոդվածի առանձին խախտում այն առումով, որ իր նկատմամբ դրսևորվել է վատ վերաբերմունք քաղաքական դրդապատճառներով:

199. Խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի (տես՛ *Willis v. United Kingdom*, թիվ 36042/97, § 48, ՄԻԵԿ 2002-IV): Նախկինում Դատարանում քննվել են մի շարք գործեր, որոնց ժամանակ դիմումատուները, Կոնվենցիայի 2–րդ կամ 3–րդ և 14–րդ հոդվածների համաձայն, հայտարարել են, որ մահը կամ վատ վերաբերմունքը խտրականության, մասնավորապես ռասայական ատելության, դրսևորման արդյունք է եղել: Նշվեց, որ ռասայական հիմքով բռնությունը վիրավորում է մարդակային արժանապատվությունը և, հաշվի առնելով դրա կործանարար հետևանքները, պետական մարմիններից պահանջվում է հատուկ զգոնություն և վճռորոշ քայլերի ձեռնարկում: Այդ իսկ պատճառով պետական մարմինները պետք է բոլոր հասանելի ձևերով պայքարեն ռասիզմի և ռասայական հիմքով բռնության դեմ՝ այդպիսով իսկ խթանելով հասարակության՝ ժողովրդավարության պատկերա խթանելու նպատակով, որում բազմազանությունն ընկալվում է ոչ թե որպես սպառնալիք, այլ որպես զարգացման աղբյուր (տե՛ս *Nachova and Others v. Bulgaria* [GC], թիվ: 43577/98 և 43579/98, § 145, ՄԻԵԿ 2005VII, *Bekos and Koutropoulos v. Greece*, թիվ 15250/02, § 63, ՄԻԵԿ 2005XIII (հատվածներ) և *Stoica v. Romania*, թիվ 42722/02, § 126, 2008 թվականի մարտի 4–ին):

200. Դատարանը համարում է, որ վերոհիշյալը կիրառվում է նաև այնպիսի գործերի դեպքում, երբ հայտարարվում է, որ Կոնվենցիայի 3–րդ հոդվածին հակասող վերաբերմունքը դրսևորվել է՝ ելնելնով քաղաքական դրդապատճառներից: Այն վերահաստատում է, որ բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայն

մտածելակերպը «ժողովրդավարական հասարակության» առանձնահատկություններն են (տես՛ *Lindon, Otchakovsky-Laurens and July v. France* [GC], թիվ: 21279/02 և 36448/02, § 45, ՄԻԵԿ 2007-IV): Քաղաքական բազմակարծությունը, որը ենթադրում է քաղաքական բազմազան համոզմունքների և շարժումների խաղաղ գոյակցություն, առանձնակի կարևորություն է ներկայացնում օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության գոյատևման համար, մինչդեռ քաղաքական տարակարծությունը ճնշելու, վերացնելու կամ դրանից խուսափելու կամ քաղաքական տարակարծություն ունեցող կամ այն բարձրաձայնող անձանց պատժելու նպատակով Պետության ներկայացուցիչների կողմից իրականացվող բռնության գործողությունները վտանգում են ժողովրդավարական հասարակության սկզբունքներն ու արժեքները:

201. Դիմումատուի կողմից, ինչպես ձևակերպված է, 14–րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքի ներկայացման դեպքում Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքը դրսևորվել է քաղաքական դրդապատճառներով, ինչը հանգեցրել է Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի խախտմանը:

202. Դատարանը նշում է, որ վկայություններն ուսումնասիրելիս այն սահմանել է «հիմնավոր կասկածներից վեր» ապացույցի ստանդարտ: Այդուհանդերձ, նշված ստանդարտը կիրառող ազգային իրավական համակարգերի մոտեցումը որդեգրելու նպատակ այն երբևէ չի ունեցել: Դատարանի դերը կայանում է ոչ թե մեղավորության կամ քաղաքացիական պատասխանատվության կարգավորման, այլ՝ Կոնվենցիայի համաձայն ստանձնած՝ Պայմանավորվող պետությունների պատասխանատվության մեջ: Կոնվենցիայի 19–րդ հոդվածի համաձայն՝ Դատարանի խնդրի առանձնահատկությամբ (Կոնվենցիայով ամրագրված հիմնարար իրավունքների ապահովման հարցում ապահովել Պայմանավորվող պետությունների ներգրավվածությունը) է պայմանավորված վկայության և ապացույցի հարցերի վերաբերյալ դրա մոտեցումը: Դատարանի վարույթներում վկայության ընդունելիության հարցում որևէ դատավարական խոչընդոտ կամ դրա գնահատման նախանշված բանաձև չկա: Այն ընդունում է այնպիսի եզրակացություններ, որոնք, իր կարծիքով, հիմնավորվում են վկայությունների, այդ թվում՝ փաստերի կամ կողմերի կողմից ներկայացվող փաստարկների արդյունքում առաջ եկած եզրահանգումների անկախ գնահատմամբ: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ապացույցը կարող է բխել համատեղ գոյություն ունեցող՝ բավականաչափ հիմնավորված, պարզ և համահունչ եզրահանգումներից կամ նմանատիպ փաստերի անհերքելիության կանխավարկածից*Nachova and Others* [GC], վերևում մեջբերված, § 147):

203. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը հաշվի է առնում այն ընդհանուր իրավիճակը, որում դիմումատուն ձերբակալվել և կալանքի տակ է վերցվել: Այդ առումով՝ Դատարանը նշում է, որ վերջերս տեղեկացել է, որ 2004 թվականի մարտից մինչև ապրիլը ընկած ժամանակահատվածում, որը Հայաստանում քաղաքական խոցելիության ժամանակաշրջան էր, առկա էր ցույցերին ընդդիմության ակտիվիստների մասնակցությունը զսպելու կամ կանխելու կամ մասնակցության համար ցուցարարներին պատժելու վարչական գործելակերպ (տես՛ *Hakobyan and Others v. Armenia*, 34320/04, §§ 90-99, 2012 թվականի ապրիլի 10): Սույն գործում առկա են մի

շարք տարրեր, որոնց հիման վրա Դատարանը կարող է գալ այնպիսի եզրահանգման, որ սույն գործում դիմումատուն նշված վարչական գործելակերպի զոհն է դարձել:

204. Սկզբում Դատարանը նկատում է, որ դիմումատուն ընդդիմության ակտիվ անդամներից է եղել: Վերոհիշյալ ժամանակահատվածի ընթացքում նա մասնակցել է ընդդիմադիր կուսակցությունների կողմից կազմակերպված հանրահավաքներին, իսկ դրանցից կարճ ժամանակ անց ձերբակալվել է: Անդրադառնալով դիմումատուի ձերբակալման որոշ հանգամանքներին՝ Դատարանը նշում է մի շարք վերաբերելի գործոններ:

205. Առաջին, դիմումատուի ձերբակալման նախնական պատճառը անուղղակիորեն կապված է եղել 2004 թվականի ապրիլի 12–ին տեղի ունեցած հանրահավաքին իր մասնակցության հետ: Ճշմարիտ է, որ իր ձերբակալման պատճառը, որպես այդպիսին, եղել է ոչ թե ցույցին իր մասնակցությունը, այլ՝ այն ենթադրությունը, որ ցույցի ժամանակ նա անօրինական հրազեն է կրել Այնուամենայնիվ, այս ենթադրությունը հիմնված է միայն 2004 թվականի ապրիլի 23–ին ժամը 17.05–ին Արտաշատի ոստիկանության բաժին ստացված անանուն հեռախոսազանգի վրա: Այս ենթադրությունը հիմնավորելու կամ ոստիկանության բաժին իսկապես ստացված հեռախոսազանգը հաստատելու համար որևէ օբյեկտիվ վկայություն, ինչպես օրինակ՝ այդ հեռախոսազրույցի ձայնագրությունը, որը կարող է հարցականի տակ դնել նշված փաստի ճշտությունը, առկա չէ: Այդ հեռախոսազրույցի մանրամասն վերծանումը նույնպես առկա չէ

206. Երկրորդ, Դատարանն անհավատալի է համարում, որ նման հեռախոսազանգ ստանալուց հետո ոստիկանության աշխատակիցները նույնիսկ չեն փորձել ստուգել զանգողի ինքնությունը կամ տրամադրվող տեղեկությունների ճշտությունը, այլ գրեթե անմիջապես, մեկ ժամվա ընթացքում, ձերբակալել են դիմումատուին նման կասկածելի հիմքով՝ առանց լրացուցիչ հարցումների: Դատարանը չի կարող նաև չկարևորել այն փաստը, որ ձերբակալությունն իրականացվել է առանց հետաքննության մարմինների կողմից տրվող՝ ներպետական իրավունքով պահանջվող համապատասխան որոշման (տե՛ս վերոնշյալ § 100):

207. Երրորդ, դիմումատուին ոստիկանության բաժին բերելուց հետո նրա նկատմամբ եղած նախնական կասկածներն ամբողջովին մոռացվեցին: Դիմումատուին նույնիսկ չեն հարցաքննել այդ կասկածների առնչությամբ, փոխարենը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182–րդ հոդվածի համաձայն՝ նրա դեմ վարչական գործ է հարուցվել ոստիկանության աշխատակիցների օրինական հրահանգներին չենթարկվելու և նրանց վիրավորական արտահայտություններ ուղղելու համար, հավանաբար ձերբակալման ժամանակ իր վարքի պատճառով: Նախնական կասկածների առնչությամբ ձեռնարկված քննչական միակ գործողությունը դիմումատուի տան խուզարկումն է, որի թույլտվությունը տրվել է դիմումատուի ձեռբակալումից չորս օր հետո և իրականացվել ևս երկու օր հետո (տե՛ս վերոնշյալ §§ 41 և 43): Նշված քննչական գործողությունն արագ իրականացնելու ձգտում չունենալն էապես հակասում է այն շտապողականությանը, որով կատարվել էր դիմումատուի ձերբակալությունը

208. Չորրորդ, Դատարանը չի կարող ուշադրություն չդարձնել ձերբակալությունն իրականացրած ոստիկանության աշխատակիցների՝ դիմումատուի ձերբակալման պատճառների վերաբերող հակասական հայտարությունները: Մասնավորապես,

ոստիկանության աշխատակից Ա.Ս.–ն ընդունեց, որ ինքն պարզել է դիմումատուի ձերբակալման պատճառները միայն վերջինիս ոստիկանության բաժին տանելուց հետո (տե՛ ս վերոնշյալ §§ 25 և 63): Դատարանն անհավանական է համարում, որ անօրինական հրազեն կրելու կասկածանքով անձին ձերբակալելու հրաման տալիս ոստիկանության աշխատակցին չեն տեղեկացրել նման կարևոր փաստի մասին՝ հատկապես հաշվի առնելով ձերբակալությունն իրականացնող անձին սպառնացող հնարավոր վտանգը: Այնուհետև, ոստիկանության աշխատակից Ռ.Ս.–ն ընդունեց, որ ինքն դիմումատուին ոստիկանության բաժին խոսալու համար տանելու հրաման է ստացել, իսկ հրազենի մասին որևէ բան չի նշվել (տե՛ս վերոնշյալ § 64): Ավելին, ոստիկանության աշխատակից Ա.Ս.–ն հաստատեց, որը խոսակցությունը վերաբերել է ցույցերին (տե՛ ս վերոնշյալ § 63):

209. Հինգերորդ, համապատասխան ուշադրության չդարձվեց ոչ միայն դիմամատուի նկատմամբ եղած նախնական կասկածներին, այլև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182–րդ հոդվածի համաձայն իր դեմ հարուցված վարչական գործը կարճվեց, և դիմողին ոստիկանության բաժին բերելուց ու նրան քրեական մեղադրանք (ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին ֆիզիկական բռնության ենթարկելու համար) ներկայացնելուց հետո, այն չվերսկսվեց:

210. Հաշվի առնելով բոլոր վերոնշյալ գործոնները՝ Դատարանը համարում է, որ սույն գործում կան անհերքելի տարրեր, որոնք կասկածի տակ են դնում դիմումատուի ձերբակալման իրական պատճառների և համապատասխան վարչական վարույթների համապատասխանությունը ոստիկանության համապատասխան նյութերում նշված պատճառներին ու վարույթներին: Այնուհետև այն նշում է, որ Դատարանին ներկայացված նյութերը հանգեցնում են այն պարզ ու համահունչ եզրահանգմանը, որ դիմումատուն վերոնշյալ վարչական գործելակերպի (տե՛ ս վերոնշյալ § 205) զոհն է դարձել, և որ վերջինիս ձերբակալման իրական պատճառը եղել է ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին մասնակցելուց հետ պահելը և մասնակցության համար պատժելը:

211. Այս եզրակացությանը հանգելով՝ Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ այն պետք է սահմանի, թե արդյոք քաղաքական դրդապատճառներ ունեցող ձերբակալման ընթացքում դիմումատուի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված վատ վերաբերմունքը կապված է իր քաղաքական համոզմունքների հետ: Այս առումով Դատարանը նշում է, որ վերոնշյալ զեկույցներից մի քանիսում նշված են որոշ ենթադրություններ ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ընդդիմության համակիրների կողմից դրսևորված վատ վերաբերմունքի վերաբերյալ (տե՛ ս վերոնշյալ § 127): Այդուհանդերձ, Դատարանը չի կարող հաշվի չառնել այն փաստը, որ սույն գործում Դատարանի միակ նպատակն է հաստատել, թե արդյոք դիմումատուի վատ վերաբերմունքը քաղաքական դրդապատճառներ է ունեցել:

212. Դատարանը նշում է, որ չի բացառում, որ խտրականության ենթադրյալ դրսևորման որոշ դեպքերում պատասխանող Կառավարությունից կարող է պահանջել հերքեր խտրականության դրսևորման վիճելի ենթադրությունը, այլապես այն կարող է Կոնվենցիայի 14–րդ հոդվածի խախտում արձանագրել: Այնուամենայնիվ, եթե կասկած

կա, որ բռնի գործողությունը բխել է քաղաքական անհանդուրժողականությունից (ինչպես սույն գործում), ապա նման մոտեցումը կնշանակի պատասխանող Կառավարությունից պահանջել ապացուցել համապատասխան անձի կողմից սուբյեկտիվ վերաբերմունքի բացակայության փաստը: Շատ երկրների իրավական համակարգերում քաղաքականության կամ որոշման մեջ խտրականության դրսևորմն ապացուցելու համար զբաղվածության կամ ծառայությունների մատուցման ոլորտում խտրականության ենթադրյալ դրսևորման մտադրությումը ապացուցելու կարիք չկա, սակայն այս մոտեցումը չի կարող կիրառվել այն դեպքում, երբ կասկած կա, որ բռնի գործողությունը բխել է քաղաքական դրդապատճառներից (տե՛ ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis)*, *Nachova and Others* [GC], վերոհիշյալ, վերևում մեջբերված, § 147, *և Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, § 63):

213. Սույն գործում դիմումատուն ենթադրում է, որ ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում իր նկատմամբ դրսևորված բռի վարքագիծը պայմանավորված է եղել այն փաստով, որ ինքը քաղաքական ընդդիմության անդամ է: Դիմումատուին ոստիկանության բաժին տանելիս, ոստիկանության բաժնում և դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելիս ոստիկանության աշխատակիցները պարբերաբար քաղաքական բնույթի դիտողություններ են արել: Մասնավորապես, ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն, մինչև դիմումատուին հարվածելով կամ խփելով ֆիզիկական բռնության ենթարկելը, ասել է.«դա նրանց երկիրն է, և նրանք կարող էին անել ինչ ուզում էին և այն, ինչ [դիմումատուն և քաղաքական ընդդիմության մյուս համակիրները] փորձում էին անել, այսինքն՝ կառավարության փոփոխությունը, ապարդյուն էր» (տե՛ ս վերոնշյալ § 36): Ավելին, երբ ոստիկանության աշխատակից Ա.Կ.–ն իրեն ծեծի էր ենթարկում, նա հարցնում էր, թե ընդդիմութայն առաջնորդներից ով է խրախուսում նրա գործունեությունը (տե՛ ս վերոնշյալ § 36):

214. Դատարանը նշում է, որ դիմումատուի ենթադրությունները ստուգելու որևէ օբյեկտիվ եղանակ չկա: Ճշմարիտ է, որ դիմումատուի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ձերբակալությունը սուր քննադատությունների և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Այդուհանդերձ, դա բավարար չէ եզրակացնելու, որ վատ վերաբերմունքը, որպես այդպիսի, պարզապես պայմանավորված է եղել քաղաքական դրդապատճառներով: Դատելով գործի հանգամանքներից՝ չի կարելի բացառել, որ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել՝ ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ին պատճառած վնասի համար վրեժ լուծելու նպատակով: Չի կարելի բացառել նաև, որ ոստիկանության աշխատակիցների բռի վարքագիծը պայմանավորված է եղել դիմումատուի հետ առերեսման փաստով կամ ոստիկանության բռնի ուժի գործադրման պատճառներով, որոնք հնարավոր չէ բացատրել: Նման գործողությունները պետք է արժանանան անվերապահ դատապարտման և որևէ պարագայում չպետք է արդարացվեն կամ ներվեն, ուստի Դատարանը չի կարող ամբողջությամբ համոզված լինել, որ դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը պայմանավորված է եղել իր քաղաքական համոզմունքներով

215. Վերջապես, Դատարանը չի համարում, որ դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի ենթադրյալ քաղաքական դրդապատճառի պարզման ուղղությամբ

պետական մարմինների կողմից արդյունավետ քննություն չանցկացնելու փաստի հիման վրա ապացուցման պարտավորությունը պետք է փոխանցվի պատասխանող Կառավարությանը՝ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութաիրավական ասպեկտի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ: Պետական մարմինների կողմից իրենց ընթացակարգային պարտականությունների կատարման հարցն առանձին խնդիր է, որին Դատարանը կանդրադառնա ներքևում (տե՛ *u՛ Nachova and Others* [GC], վերևում մեջբերված, § 157, and *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, § 66):

216. Ամփոփելով՝ Դատարանը, գնահատելով բոլոր համապատասխան տարրերը, չի համարում, որ ապացուցվել է, որ ոստիկանության կողմից դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը պայմանավորված է եղել քաղաքական դրդապատճառներով:

217. Ուստի, Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի նյութաիրավական կողմը չի խախտվել:

բ) Արդյոք պատասխանող Պետությունը կատարել է դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապատճառները հետաքննելու իր պարտականությունը

218. Դատարանը համարում է, որ բռնությամբ ուղեկցվող միջադեպեր հետաքննելիս պետական մարմինները լրացուցիչ պարտավորություն են ստանձնում. այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ քաղաքական ցանկացած դրդապատճառ բացահայտելու և պարզելու, թե արդյոք տարբերվող քաղաքական համոզմունքների նկատմամբ անհանդուրժողականությունը իր դերն է ունեցել այդ դեպքերում: Այդ պարտավորությունը չկատարելը և քաղաքական նկատառումներով պայմանավորված բռությունը որևէ քաղաքական երանգ չունեցող գործերի հետ նույն հիմքով քննելը կնշանակի աչք փակել այն գործողությունների վրա, որոնցով խախտվում են հիմնարար իրավունքները: Էապես տարբեր իրավիճակները կարգավորելու եղանակների միջև տարբերակում չկատարելը կարող է հանգեցնել չհիմնավորված վերաբերմունքի, որը չի համապատասխանում Կոնվենցիայի 14–րդ հոդվածին (տե՛ս համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), Nachova and Others v. Bulgaria, թիվ: 43577/98 և 43579/98, § 158, 2004 թվականի փետրվարի 26, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, § 69):

219. Հայտնի է, որ քաղաքական դրդապատճառների առկայության փաստի ապացուցումը չափազանց դժվար է գործնականում: Բռի գործողության քաղաքական հնարավոր երանգները հետաքննելու՝ պատասխանող Պետության պարտականությունն ենթադրում է հնարավոր, սակայն ոչ ծայրահեղ ջանքերի գործադրում: Պետական մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան քայլերը վկայություններ հավաքելու ու ապահովելու, ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցներն օգտագործելու և ամբողջովին հիմնավորված, անկողմնակալ և օբյեկտիվ որոշումներ ընդունելու համար՝ բաց չթողնելով որևէ կասկածելի փաստ, որը կարող է մատնանշել քաղաքական նկատառումներով բռնությանը (տես՛ համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others*, վերևում մեջբերված, § 159, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, § 69):

220. Այնուհետև Դատարանը համարում է, որ քաղաքական մոտեցումների և բռնության գործողության միջև հնարավոր կապի առկայության փաստի հետաքննությունը իրենց՝ Կոնվենցիայի 3–րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտականություններից է, սակայն այն կարող է դիտվել նաև որպես իրենց՝ Կոնվենցիայի 14–րդ հոդվածով սահմանված պարտականությունների (3–րդ հոդվածով ամրագրված հիմնարար արժեքների ապահովումը՝ առանց խտրականության) ոչ հստակ կատարում: Այդ երկու դրույթների փոխազդեցության շնորհիվ սույն գործում առկա խնդիրները, ինչպես նաև նմանատիպ այլ խնդիրներ, կարող են ուսումնասիրվել միայն նշված երկու դրույթներից մեկի համաձայն՝ առանց մյուսի համաձայն որևէ խնդրի առաջացման կամ կարող է անհրաժեշտություն առաջանալ, որպեսզի դրանք ուսումնասիրվեն երկու հոդվածների համաձայն: Յուրաքանչյուր գործի ժամանակ այս հարցի լուծումը կարող է տարբեր լինել՝ կախված առկա փաստերից և ներկայացված պնդումներից (տե՛ ս *Nachova and Others* [GC], վերևում մեջբերված, § 161, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, § 70):

221. Սույն գործում Դատարանը արդեն պարզել է, որ Հայաստանի իշխանությունները, միջադեպի արդյունավետ հետաքննություն չանցկացնելով, խախտել են Կոնվենցիայի 3–րդ հոդվածը: Այն համարում է, որ պետք է առանձին ուսումնասիրի նաև ենթադրյալ քաղաքական դրդապատճառների և ոստիկության կողմից դիմումատուին նվաստացման միջև եղած պատճառահետևանքային կապի հետաքննություն չանցկացնելու վերաբերյալ դիմումը:

222. Դատարանը նշում է, որ դիմումատուն բազմաթիվ առիթներով հետաքննության մարմիններին պնդել է, որ իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը կապված է ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին իր մասնակցության հետ, և ունի քաղաքական դրդապատճառներ և պահանջել, որ այս հանգամանքը հետաքննվի, իսկ մեղավորները պատժվեն (տե՛ ս վերոնշյալ §§ 36, 38, 45, 61 և 80): Երկու այլ վկաներ այս պնդումը հիմնավորող փաստարկներ են ներկայացրել (տես՛ վերոնշյալ §§ 59 և 60): Վերջապես Դատարանը նկատում է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը նշել է ձերբակալման պատճառների բացակայությունը (տես՛ վերոնշյալ § 46):

223. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ հետաքննության մարմիններն ունեին հավաստի և բավարար տեղեկություններ, որոնց հիման վրա ակնհայտ էր դառնում նախնական ստուգում և, կախված արդյունքից, դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապատճառների հետաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը:

224. Այդուհանդերձ, պետական մարմինները գրեթե ոչինչ չեն արել այս տեղեկությունները ստուգելու համար: Ոստիկանության միայն երկու աշխատակիցներից՝ Ա.Մ.–ից և Ռ.Ս.–ից, էին հարցրել, թե արդյոք իրենք տեղյակ են եղել դիմումատուի քաղաքական պատկանելիության մասին, սակայն սա չի կարող համարվել նման լուրջ պնդումը հետաքննելու իրական փորձ և պարզապես ձևական բնույթ է կրում (տե՛ ս վերոնշյալ §§ 23 և 24): Այլ հարցեր չեն տրվել, իսկ ոստիկանության մյուս աշխատակիցները, այդ թվում՝ Հ.Մ.–ն և Ա.Կ.–ընն, ում դիմումատուն ուղղակիորեն մատնանշել է, որպես իր նկատմամբ բռի գործողություններ կատարելուց առաջ և հետո

քաղաքական տեսանկյունից անհանդուրժողական հայտարարություններ արած անձանց, նույնիսկ չեն հարցաքննվել այդ պնդումների առնչությամբ: Ոչ մի փորձ չի կատարվել՝ պարզելու դիմումատուի ձերբակալման հանգամանքները, այդ թվում՝ բազմաթիվ անճշտություններ և ձերբակալման հնարավոր քաղաքական երանգը մատնանշող այլ տարրեր, իսկ ներկայացված նյութերից ոչ մի եզրակացություն չի արվել: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ պետական մարմինները չեն կատարել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի համաձայն ստանձնած իրենց պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ պարզելու, թե արդյոք դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ցուցաբերվել է խտրականության հիմքով:

225. Ուստի, խախտվել է Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի ընթացակարգային կողմը:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

226. Դիմումատուն նաև առաջ է քաշել մի շարք բողոքներ՝ համաձայն Կոնվենցիայի 5–րդ հոդվածի, 6–րդ հոդվածի 1–ին կետի, 10–րդ և 11–րդ հոդվածների:

227. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են դրա իրավասության շրջանակներում, Դատարանը գտնվում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրա արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման որևէ դեպք: Այսպիսով հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտորեն անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ և 4-րդ կետերի:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

228. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

229. Դիմումատուն պահանջել է 25 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

230. Կառավարությունը հայտարարեց, որ Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունք չի խախտվել, ուստի դիմումատուն չի կարող ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջել:

231. Դատարանը համարում է, որ դիմումատուն տեղի ունեցած բռի գործողությունների հետևանքով դիմումատուին ոչ նյութական վնաս է պատճառվել: Արդար հիմունքներով որոշում կայացնելով՝ դատարանը դիմումատուին նշանակում է 2 500 եվրո փոխհատուցում՝ ոչ նյութական վնասի հետ կապված:

Բ. Ծախսերը և ծախքերը

232. Դիմումատուն նաև պահանջել է 4,250 ամերիկյան դոլար (ԱՄՆ դոլար) և 3,602.45 ֆունտ ստեռլինգ (ՄԲՖ) Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցման համար: Ի հիմնավորումն իր պահանջի՝ դիմումատուն մանրամասն ժամանակացույցեր է ներկայացրել, որտեղ սահմանված են տեղացի փաստաբանների և Մարդու իրավունքների քրդական ծրագրի մեկ փաստաբանի կողմից դիմումատուին մատուցված ծառայությունների ժամավճարի դրույքաչափը:

233. Կառավարությունը պնդեց, որ տեղացի և օտարերկրացի փաստաբանների ծառայությունների կապակցությամբ նշված պահանջները պատշաճ փաստաթղթային հիմնավորում չունեն, քանի որ դիմումատուն չի ներկայացրել որևէ պայմանագիր, որը կվկայեր իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ համաձայնագրի մասին: Ավելին, դիմումատուն օգտվել էր թվով շատ իրավաբանների ծառայությունից չնայած այն հանգամանքին, որ գործն այնքան ծավալուն չէր, որ հիմնավորեր այդ անհրաժեշտությունը:

234. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ դիմումատուին տրամադրվում է ծախսերի ու ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և ողջամիտ իրենց ծավալներով: Դատարանը նաև կրկնում է, որ ծախսերը փոխհատուցվում են միայն այնքանով, որքանով դրանք առնչվում են բացահայտված խախտմանը (տե՛ս *Beyeler v. Italy* [GC], թիվ 33202/96, § 27, ՄԻԵԿ 2000-I). Սույն գործում դիմումատուի մի քանի բողոքները հայտարարվել էին անընդունելի: Այդ պատճառով այս պահանջը չի կարող ամբողջությամբ բավարարվել և պետք է արվի պահաջվող գումարի որոշակի նվազեցում: Կատարելով իր գնահատումը արդարացիության սկզբունքին համապատասխան՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 6,000 եվրո ծախսերի և ծախքերի համար, որը ենթակա է վճարման ֆունտ ստեռլինգով՝ Միացյալ Թագավորությունում նրա ներկայացուցիչների բանկային հաշվեհամարին:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

235. Դատարանը նպատակահարմար է գտնում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ.

1. *Հայտարարում է* ընդունելի դիմումատուի բողոքները վատ վերաբերմունքի, ոչ արդյունավետ հետաքննության, անմեղ ճանաչվելու իր իրավունքի, քաղաքական դրդապատճառներով պայմանավորված՝ նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի և այս պնդման առնչությամբ ոչ արդյունավետ հետաքննության մասով և անընդունելի՝ գանգատի մնացած մասը,

2. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի էական խախտում առ այն, որ դիմումատուն ենթարկվել է խոշտանգման,

3. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի ընթացակարգային խախտում առ այն, որ պետական մարմիններն արդյունավետ քննություն չեն իրականացրել դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդման առնչությամբ,

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 2–րդ կետի խախտում,

5. *Վճռում է,* որ Կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ դիտարկվող 14–րդ հոդվածի էական խախտում տեղի չի ունեցել,

6. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14–րդ հոդվածի ընթացակարգային խախտում առ այն, որ դատական մարմինները արդյունավետ հետաքննություն չեն իրականացրել դիմումատուի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին պնդման առնչությամբ,

7. *Վճռում է, որ*՝

   ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.

      (i) 25,000 եվրո (քսանհինգ հազար եվրո)՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

      (ii) 6,000 (վեց հազար եվրո) եվրո՝ գումարած նշված գումարի վրա դիմումատուին վճարվող գումարից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկերը որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է փոխարկվի ֆունտ ստեռլինգի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով և վճարվի Միացյալ Թագավորությունում դիմումատուի ներկայացուցիչների բանկային հաշվեհամարին,

   բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից փոխառության տրամադրման համար սահմանված առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս,

8. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով, գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 2–ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2–րդ և 3–րդ կետերի :

Սանտիագո Քեսադա
Քարտուղար

Ջոզեփ Կասադեվալ
Նախագահ